



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

891.99 - 192

UK-91

104

7 LXVI. 8. 121.
2011-05'



ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹԻՒՆ Ս. ՄԵԼԻՔ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

ԱՐԵԱՆ ՉԱՅՆԵՐ

Չե՛ղ կստեմ մանկտիք սիրուն, նապիլիք,
Որոնց է բնական հայոց աշխարհիկ.
Մ'ի ուրանայք զերկիրդ եւ ազգդ սիրուն,
Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն:
Է. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ



289

Թ Ի Ք Լ Ի Զ
1906

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Arm.
3-4771a

ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹԻՒՆ Ս. ՄԵԼԻՔ ՍՈՂՄՈՆԵԱՆԻ

897.99-192

Կ-91

ԱՐԵԱՆ ՉԱՅՆԵՐ

Չե՛ղ կասեմ մանկտիք սիրուն, նաղելիք,
Որո՞նց է բնական հայոց աշխարհիկ.
Մ'ի ուրանայք զերկիրդ եւ ազգդ սիրուն,
Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն:

Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ձ

Էլեհրաւարձ սպարան «ՀԵՐՄԷՍ» Ըճկ. Մաղաթեան փող. № 5
1906 (170)

ՎՊԲ. № 17115

26.02.2013

72.781

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Իզուր չէ ասում, թէ իւրաքանչիւր երկրի ժողովրդական գիծը ընթացիկ կեանքի հայելին է:

Այդ երգի ելեէջներէ մէջ անդրադառնում են ժողովրդի վիշտն ու թախիծը, դառնութիւնն ու երջանկութիւնը:

Ինչպիսի պատկեր է ներկայացնում ընթացիկ կեանքը, նոյնպիսի շեշտեր էլ հնչեցնում է ժողովրդական երգը:

Այդպէս է ամեն տեղ, այդպէս է և մեզանում—հայերիս մէջ:

Վերջին տարիներում հայկական կեանքը՝ թէ թիւքքիայում և թէ Ռուսաստանում անվերջ արիւնհեղութեան ու աւերածութեան առարկայ է դարձել, ուստի և հայի ժողովրդական վերջին երգերն էլ շարունակ «արիւնոտ ձայներ» են հնչեցնում, միևնոյն ժամանակ դովելով ու փառաբանելով այն յեղափոխական հերոսներին, որոնք իրանց կեանքի դնով աշխատել են բռնակալութեան ու դաժանութեան հարւածները գիմազբաւել, սեփական արիւնով մեղմացնել ու ոչնչացնել:

Ահա այդ երգերը, գաղափարական հերոսների այդ գովքն ու փառաբանութիւնն է, որ հաւաքագրելով «Արեան Զայներ» խորագրի տակ, առաջարկում ենք ընթերցողներին:

Գիտենք՝ շատ թերութիւններ ունի այս ժողովածուն, բայց յուսով ենք, որ ընթերցող հասարակութիւնը ներողամիտ կ'ըլինի, աչքի առաջ ունենալով, որ մենք միայն հաւաքագրած հում նիւթեր ենք առաջարկում «Արեան ձայներով» և ոչ թէ քննադատական—գիտական մի աշխատութիւն:

Մենք տալիս ենք հում նիւթը, իսկ նրա վերլուծումը, նշանակութեան ու էութեան բացատրութիւնը թող կատարեն աւելի ձեռնհաս մարդիկ:

Ս. ՄԵԼԻՔ ՍՈՂՈՄՈՆԵԱՆՑ



39705-63

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,
Ֆիդային էր դաշնակցական՝ վրէժ լուծում հովտումը:
Սոսկաց քիւրդը՝ քնաթաթախ մարզչեցին,
Ձէր երազում ջնջուել իսպառ Ֆիդայիցը լուսաշացին:
— Եաման՝, Աստուած, ֆիդան եկաւ սըր փախչենք.
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին:
— Մի վախենար, հանգիստ կեցիր, բաջի շան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ Ֆիդան:
Մի ժամուայ մէջ Մարգրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ...
Փչիր գեփիւռ, դէպ Առաւուլ մենք թռչենք,
Դիրքեր բռնենք, գաթայ, հալուայ ձիւնի ջրով ճաշակենք...
Մերթ կովում է. մերթ բարձրանում քաջ Ֆիդան,
Եղակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:
Չկար կարօն, տխուր պատեց ամենքին,
Երանի է նրա հոգոյն, որ զոհ դարձաւ այդ կռուին...
Քեզ ենք յանձնում, սով պաշտելի Առաւուլ,
Կրծքիդ մէջը ամուր պահիր անմահ զոհերն հայերուն:
Հայեր. յիշէք նուիրական այն օրը.
Յուլիս ամսի քսանինգին կատարեցէք մեր տօնը:

Ե Ր Գ Ե Լ Կ Ո Ւ Զ Է Ի

Սուրբ հայրենիքս երգել կուզէի,
Իմ երգերի մէջ հոգեբուխ, հնչիւն,
Երկնքի հետ խօսող լեռները վիթխարի,
Եւ թռիչքն Արծուի այն վեհ բարձունքում...

Մայր—ժողովուրդս երգել կուզէի
Յորձուտ Արաքսը չքնաղ ափերով,
Հրեղէն նժայգն երգել կուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով:

Հայ կտրիչներին երգել կուզէի,
Եւ կռուի կոչը հպարտ ու վայրի,
Սուրբ ազատութեան տօնը յողթական
Եւ վառ ապագան իմ հայրենիքի...

Բայց կուզիտ ձեռներ փշրեցին քնարս բէկ-բէկ,
Բայց կուզիտ ձեռներ նրա լարերը կտրեցին մէկ-մէկ:



Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ի Ս

Լուռ գիշերին մտքիս զիմաց,
Շատ ըսուերներ ժողովեցան.
Ընկերներս՝ մեռած, կորած՝
Հոգուս խորքով անցկացան:

Նրանց աչքեր, բոց ու վրէժ,
Սրտիս խորքը նայեցին,
Սիրաս բաց էր խոր վերքի պէս:
Նրանք այնտեղ սուզեցին...

Անհաւասար գոռ կռուի մէջ.
Ընկաք իմ վեհ ընկերներ
Ա՛խ, ձեր շիրիմն իմ սրտումս է
Իմ վեհ, իմ սուրբ ընկերներ...



Պ Ե Տ Օ Յ Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Գարահիսար լերան կրճքին՝ նա էլ ընկաւ վերաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած՝ չար թշնամու գնդակով:

Ժայռոտ լերան լերկ կատարից վաճր սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արս...

Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ-կաթիլ կըծորայ,
Ա՛խ, ջիւանի կեանքն է հոսումցաւոտ կրճքի լայն վերքից...

Ժայռոտ լերան լերկ կատարից վաճր սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արս...



Ք Ա Յ Լ ԵՆ Ք

Յուսահատուել մեղք է, ընկեր,
Արիացիր, ոգի առ,—
Նայիր, փայլեց հեռվում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ դադար...

Արիացիր, սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին,
Լսիր կարծեմ՝ թէ զանգակներ
Ղօղանջեցին սարերէ...

Ահա բացուեց աղօթարան,
Վստահ, ընկեր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք Ազատութեան
Եւ անփորձ տեղ կը հասնենք...



ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԾԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինուոր,
Սիրական, կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրից օր՝
Շողողուն զէնքերիդ մատաղ:

Արկածալից կեանք խորհրդով,
Լեռներ ես անցել ըշտապով,
Արեգակն է տապով այրել,
Սևորակ պատկերիդ մատաղ:

Կըգաս զոհերի երկրէն՝
Պատմէ Մոկացի եսթերէն,
Պօսիր Գիսակի խօսքերէն՝
Մրտաշարժ խօսքերիդ մատաղ:

Զով Մասունի հովէն կուգաս,
Վանայ Ծփան ծովէն կուգաս,
Անդրանիկի քովէն կուգաս
Սար-ձոր ընկած գլխիդ մատաղ...

Սերոբ-փաշի գերեզման.
Տեսել ես, իմ սիրական,
Տեսել ես ողջ Հայաստան.
Էզուցւայ ճամբիդ մատաղ:

Հայաստանից եկած զինուոր.
Սիրական կեանքիս հատոր
Քեզ կսպասէի օրէց օր.
Ապագայ յոյսերուդ մատաղ...



* * *

Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է դարթելու,
Ժամ է՝ ժամ առաջ ոտքի ելնելու.
Մօտ է վախճանը, հայերուս օրհաս,
Լինել-չլինել՝ մեզնից է կախուած...

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,
Հերիք օգնութիւն օտարից հայցենք,
Մենք ենք տանջւողը, մենք չարչարւողը,
Մենք պիտի լինենք մեզի փրկողը...

Մեր վե՛հ հայրենիք դարերով ճնշուած.
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած.
Պահանջէ մեզնից արիւնսով մաքրել
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր...

Ըշտապիր, եղբայր, սու, ահա քեզ գէնք,
Սորանով միայն փրկուելու ենք մենք,
Այս է գործ ածում մեր դէմ թշնամին,
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Այնտեղ է քո կեանք. այնտեղ է քո մահ,
Ելիր ընդ առաջ, ելիր դու անահ,
Արդարութիւնն է գործին նշանակ,
Այնտեղ կրկանգնէ նա իւր յաղթանակ:

Ըշտապիր, քանի դեռ չէ անագան...
Քեզ կը հետևի ամբողջ Հայաստան
Ազատութիւնն է գործին գրաւական.
Այնտեղ կստանաս պսակ պատւական:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Ինձ տեղ տուէք Միփան սարեր,
Բռնաւորի լուծն եմ թողեր,
Ազատութիւնս արիւնով գնած.
Պահէք ձեր ծոցն, ազատ սարեր:

Մասսից ազատ, Մասսից բարձր ես,
Աշխարհից թանգ ազատութիւն.
Կեանքի սէրն, կեանքի տէրն ես.
Արծւի պէս բարձր ես թռնում:

Ազատ օղում ազատ հովում
Արծւի պէս ազատ կըլնիմ,
Բաց թևերս թափ-թափ տալով՝
Ախպրտանցս քով կըթռնեմ:

Հայ ախպերտինք, ձեր կուռ շղթան
Իմ երկաթէ սուր կտուցով,
Ես կը կացեմ, կը քրձծեմ՝
Մէկ տեղ կերգենք ազատ կրճքով

Ազատութիւն, ազատութիւն,
Կեանքի արև ազատութիւն.
Մասսից ազատ. արծւից ազատ,
Աշխարհի տէր ազատութիւն:

Արծւի պէս բարձր ես թռնում,
 Մասսից բարձր, ազատութիւն,
 Դու կեանքից վեր, դու լոյս արև,
 Ազատութիւն, ազատութիւն...



* * *

Մասնոյ ձորերում, կռուի ձորերում,
 Հայդուկն է ընկել խոր վերքը սրտին,
 Վերքը վարդի պէս բացուած կարմրուն,
 Ու ձեռն է զցել կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծղրիտն է ծվում
 Հայդուկն է քնել մահուան խոր քնով.
 Հայդուկը հոգում երազ է տեսնում.
 Հայրենի աշխարհն ազաա ապահով...

Տեսնում է այգում հովն է շրշնջում,
 Փայլուն գերանդին գնդում է անուշ
 Ու փոցիս են քաշում սիրուն աղջկունք,
 Հայդուկի վերայ երգելով անուշ...

Մասնոյ ձորերով ամպեր են գնում,
 Հայդուկի վերայ արծիւն է գալիս,
 Ախ, սև աչքերը արծիւն է հանում,
 Հայդուկի վերայ ամպերն են լալիս...

Վեհ ազատութեան սէրը չէ մենակ՝
 Որ ինձ մղում է կռուի վառ հանգէս.
 Հրեղէն ոխն է, վրեժն անյատակ՝
 Որ սիրտս է այրում ժահր թոյնի պէս...

Ախ թէ լինէի կայծակ, հրաբուխ
 Մռայլ Տաւրոսի ճակատից վիժած,
 Պիտի շանթէի, փշրէի պիտի՝
 Թշնամու կուրծքը՝ չար, արիւնախանձ:

Բայց հոգուս խորքում օձերն են գեռում,
 Վրէժի իժեր, սև կծիկ-կծիկ.
 Ու ումբ է սիրտս և պիտի պայթի՝
 Թշնամու գլխին, նա պիտի պայթի...




* * *

Էհ, ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,
 Մարերդ կորած երկնի մովի մէջ,
 Զրերդ անուշ, հովերդ անուշ,
 Միայն բալէքդ արիւն—ծովի մէջ...

Քու հողին մեռնեմ, անգին հայրենիք,
 Ախ, քիչ է թէ որ մի կեանքով մեռնիմ.
 Երնեկ ունենամ հազար ու մի կեանք,
 Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ...

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն՝
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երգելուն...

Որ արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ
Նոր օրուայ ծէգիդ, աղիդ Հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձր ու զիլ գովեմ,
Կանաչ արևդ, ազատ Հայրենիք...



*
**

Ճամբէս արիւնի հեաք թողեր կերթայ,
Արիւնոտ ճամբէս մեր թշնամու դէմ,
Խէթ օձը առաջես ընկեր ու կերթայ,
Ու ագռաւները հետս ճամբորդ են:

Ձիս տխուր, տրտում, կերթայ անգիւման
Ախ, նա էլ լաւ գիտէ, որ էլ յետ չէմ դառնայ,
Դարդս թաղելու, ցրուելու կերթամ,
Դարդս վրէժով, ու էլ յետ չեմ գայ:

Է՛հ, մնաք բարև մեր դաշտ ու սարեր,
Ուր քոյ ու քարեր մեր արնով ներկուաւ
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, աղիդ մէր,
Ու գերեզմանս չես գտնի բնաւ,

Կարմիր օրերի, անգին ընկերներ,
Իմ տեղս պահէք, երբ գաք իրարքով.
Ախ, եարիս ասէք, որ ես էլ չկամ
Որ լայ վրէս լայ անուշ աչքերով:



*
**

Հազար բարով, հպարտ սարեր,
Թե եմ առեր, ձեզ կուգամ,
Արծիւներին ձէնն եմ լսել
Արծիւներին դէմ կուգամ:

Իմ հայրենիքի կապոյտ սարեր,
Թշնամու շարք ձեր բոլոր.
Դաշտ, անապատ, արնոտ գետեր,
Արագը խոր ու բոլոր:

Հազար ձնով, հազար սրտով
Արծիւների հետ կուգամ,
Հողիդ մեռնեմ, ազատ սրտով
Իմ հայրենիք մէրիկ ջան,

Բարով ձեզի դարդ ու դուման
Բանձրիկ սարեր ու քարեր՝
Հազար բարով, հող ու դուման
Ծովակ, ծմակ ու ձորեր:

Հայդուկ, մի վախենար քրդի գնդակից,
 Նա մահաբեր չէ քաջերիդ համար,
 Քօ «Նան Ֆիդայի» անեղ անունից
 Քիւրդը սոսկում է ինչպէս դիւահար:

Առէք հրացան ու ելէք հանդէս,
 Տանջանքի մէջ է ձեր մայր-հայրենիք-
 Միթէ չէք լսում նա կանչում է ձեզ,
 Օգնութեան հասէք, հարազատ որդիք:

Ձեր հրացանը վրէժով լցրէք,
 Ձարկէք թշնամուն, թշնամուն գազան,
 Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,
 Միմիայն թէ կեցցէ կեցցէ Հայաստան...



ԿՌՈՒՆՅԷՔ ՏՂԵՐՔ...

Կռուեցէք տղերք, կռուեցէք ջաջ-քաջ,
 Անվեր կանգնած թշնամու առաջ,
 Ցանակալի է մեզ միշտ ազնիւ մահը
 Հեռու մեզանից ոտխի անը.

Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն.
 Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Ահա քիւրդերը փախչեն սարսափած,
 Ահա դիակներ արեամբ շողախւած.
 Կրակ տեղացէք, անդադար կրակ,
 Փնօք մեր գէնքերին. առատ է գնդակ:
 Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,
 Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մեր տօնախմբեր, մեր նախնի քաջեր,
 Մեզի կսպասեն մեր սէգ եղբայրներ,
 Ազատ չենք ծնւած, գէթ մեննինք ազատ,
 Եւ մեր սուրբ հոգին պահենք անարատ:
 Դէ՛հ, կուէք աղերք. մինչև շունչ վերջին,
 Արժանի լինինք փառաց պսակին:

—Մենենք յուսարով, մերն է ապագան,
 Մերն է ն կեցցէ, կեցցէ Հայաստան!»:
 Այսպէս յորդորեց և ընկաւ արին՝
 Թողնելով մեզնում յիշատակ բարի
 Ահեղ կռւի մէջ, աննման հերոս,
 Անմոռանալի, կտրի՝ Մարտիրոս...



Մասեաց ճակատը ամպով պատեցաւ,
 Հայ ազգի սրտին մեծ ոխ պատեցաւ:
 Նժոյգ է փակիս, ձեռքիս այնալու,
 Սուլթան ուժ ունիս ինձ դիմանալու.

39705-67



Ըստրուկ եմ եկած, յետ կերթամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:

Մշու դաշտերը, վան ու էրզրում
Պիտի ողողեմ թշնամու արեամբ.
Այդ սուրբ երգումով ուխտել եմ ազգիս
Տալ հայաստանին սուրբ ազատութիւն:

Արհամարհելով սով, ազդեցութիւն,
Զոհել մարմինս և զոհել հոգիս,
Ըստրուկ եմ եկած, յետ կերթամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ:

Զեմ դնիր պատեան սուրս մերկացած,
Մինչև չը կտրեմ հայի կոծն ու լաց:



ԳՈՒՐԳԷՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1899 թ. ապրիլի 24-ին)

Գլխալով ջուր է իջնում
Մշոյ մշուշ սարերէն,
Ծիծեռները ծիւ-ծիւ եկան
Գարնան գալը երգելէն:

Գարուն չը կայ հայի համար
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.
Գերեզմանս հողին հաւսար,

Թող փուշ բըսնի իմ վրէն:
Գնա՛ ծիծեռ, թո՛ղ ինձ մենակ,
Վէրքը սրտիս հողի տակ:

Բայց՝ երբ տեսնես թշնամու դէմ,
Հայ ժողովուրդ սարի պէս,
Զէնքը ձեռքին հպարտ կանգնած
Հայեր՝ լեռներ իրար պէս...

Ա՛խ, այն օրը արի ծւայ,
Գարնան գալը նոր կանչէ,
Հայոց գարնան, որ բիւր բարե
Սիրտս խորէն զողանջէ...



ԱԻԵՏԻՔ ՄԱԼՕՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

էն արծիւ էր. թռա՛ւ, գնաց,
Մեր վրայով, մեր միջով,
Ա՛խ, էն մեր սիրտ, մեր ազիզն էր,
Գնաց սարով, սար գարգով:

Ինոր դարդը, ա՛խ, մեր դարդն էր,
Ու մեր սրտիցն էն գնաց,
Ինոր դարդը խեղճի դարդն էր,
Խեղճի սրտիցն էն գնաց:

Ո՛ւր գնացիր. ո՛ւր գնացիր.
Մենակ-մենակ գնացիր:

Հեռու տեղեր, արնոտ տեղեր,
 Որք սրտիդ, հոգի ջան,
 Ընկար մենակ ու անընկեր՝
 Դուժման դաշտեր, Աւօ ջան:

Ընկերներդ, անխ, քեզ մոռցան,
 Կեանքի ճամբով գնացին.
 Քո սուրբ սրտի սէրը մոռցան
 Գերեզմանդ կորուցին:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Սիրելի դաշոյն, անխ, ատրճանակ,
 Մանաւանգ մօսին, կեանք ես դու հայուն,
 Երբ քեզ ձեռք առնէ հայգուկ ընդունակ,
 Տիր ու ցան կանէ թշնամու բանակ:

Դուք էք Ֆիդայուն կեանք շնորհողը,
 Փրկիչ ու արև հանդիսացողը.
 Թշնամուց վրէժ, սրտիս թախիծը
 Լուծող տաճիկից, ցաւ փարատողը:

Ժնկից եկած նուէր թանկագին,
 Կուող, անձնէր այն քաջ Ֆիդայուն
 Ներշնչէ հոգի վեհ ազատութեան,
 Այս զէնքով փրկենք ամբողջ Հայաստան:

Ժնկից եկած մօսին հրացան
 Տես, քեզ կրելու չեմ եղած արժան,
 Պարզ հոգով կերգնում, պաղ կուրծքիս սեղմեմ
 Հայդուկի վրէժը քեզանով լուծեմ:

Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անւան
 Անշէջ կրակը տուիր Ֆիդայուն,
 Սրտիկնը այրւած, անձնէր Ֆիդան
 Կը փութայ գնալ դէպի Հայաստան:



ԹՈՂ ՓՉԷ ՔԱՄԻՆ

Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս
 Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
 Որքան որ կուզէ թող փչէ Հիւսիս՝
 Յուսով եմ վաղ-ուշ զարունը պիտ գայ:

Թու՛սալը թող պատէ երկինքը պայծառ
 Թանձր մառախուղ երկիր թող փակէ
 Տարերք աշխարհիս խառնւին իրար,
 Յուսով եմ վաղ-ուշ արև պիտ ծագէ:

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
 Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
 Մարտափելի չեն հային տառապանք,
 Միայն չը հատնէր խղճուկի յոյսը...



ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Զէնքերս տուր մայրիկս, սուրերս տուր քոյրիկս,
Թէ որ ազգիս չը գոհւեմ, հապա ինչո՞ւ ծնար զիս:

Առաւօտ-արշալոյսին չորս կողմերս պատեցին,
Զորս դին չորս հազար զօրքեր չորս հազար թշնամիներ:

Ազատութեան վառ սէրը ինձ հանել է լեռները,
Վատ տաճկի դէմ կուելու Հայաստանը փրկելու:

Լևոն սուրդ քաշեցիր, վրէժ առնել ուզեցիր,
Երբ որ գնդակը դիպաւ՝ «անի Հայաստան» գոչեցիր:

Մայր անունս Արամեան, մականունս Կորկոտեան
Երբ որ բանտից կազատեմ՝ դարձեալ խմբեր կը կազմեմ:



*
* *

Ահա, մայրիկ, ես գնում եմ
Ազգիս համար գոհւելու,
Քաջ ընկերներով միասին՝
Անգուլթ քրդին ջարդելու:

Երբ որ մայր իմ, Սասուն եկար,
Ինձի սրտեղ փնտռեցիր.
Գերեզմանիս վերայ գալով
Ինչ ասեցիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վերայ
Ինչ անուշիկ հոտ կուգայ,
Այսուհետև անուշ մայրիկ,
Ինձմէն քեզ օգուտ չկայ:

Գերեզմանիս հողի վերայ
Յանէ ծաղիկ, իմ մայրիկ.
Յանէ ծաղիկ, թափէ արցունք,
Երիտասարդ եմ մայրիկ:

Գերեզմանիս քարի վերայ
Խոշոր տառով գրեցէք —
Այսուհետև մանուկներ,
Ազատութեան գոհւեցէք»:



ԶԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԻԴԱՅ...

Զայն տուր, ով Ֆիդայ, ինչո՞ւ ես տրտում
Լուռ ու մունջ նստած երկար մտածում.
Շարժեցէք շուտով սուսեր շողշողուն՝
Թափեցէք կրակ թշնամեաց գլխուն:

Պարզեցէք դրօշ վեհ Դաշնակցութեան
Լինի առաջնորդ մեր ազատութեան,
Քանի այսպէս է ազգը խղճալի.
Զինեալ կը մնան ամբողջ Ֆիդայիք:

Ըշտապենք, ֆիդայք, խմբըւենք մի տեղ
Դաշնակցութեան դրօշը ծածանուի այնտեղ.
Թափենք մեր արիւն իբրև ախոյեան՝
Թող սարսի Սուլթան Աբդուլ-Համիդ խան:

Եկէք միանանք, սվ քաջ հայդուկներ,
Վրէժ են կոչում մեր նահատակներ,
Մօսին, հրացանը ձեռքներիս բռնած՝
Թունաւոր փամփուշտ կուրծքներիս ձգած:

Հայ զինուոր եմ ես, անձնազոհ ֆիդայ,
Դժբաղդ հայրենեաց անցեալին տեղեա կ
Մենք ենք սերունդը բնիկ վեհ հայկեան
Տոհմին դիւցազանց, որդիք թորգոմեան:



ԶԻՆԻԱԾ, ՊԱՏՐԱՍՏԻԱԾ...

Զինւած, պատրաստւած, Զէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.
Վրէժով լցւած առիւծի նման
Քաջ-քաջ կուռւմ են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք,
Որ պիտ փրկէք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կեանքիցն էլ ձեզ կը տանք:

Մանուկն օրօրոցում հանգիստ չէ՞ պառկած,
Խնդրում էր մօրից՝ «բազուկներս բաց»...
«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք
Որ պիտ փրկէք... և այլն (կրկնել):

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,
Ես կուղեմ կուռել թուրքի դէմ ճարպիկ,
Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն.
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք և այլն:



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Ի դէն հայեր, ի սուր, և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է անեղ հրաման,
«Թուէք հայեր, թուէք՝ դէպի Հայաստան»... (կրկնել):

Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,
Դորդաց ու թնդաց քաղցր աւետիս.
Հայկայ քաջ գաւազաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից:

Սումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան,
Փրկութեան աւետիք առած ի բերան

Դիմում են ցնծութեամբ, իբրև հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկում են բոլոր դաշտերը:
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում.
«Յաղթութիւն, հաշտութիւն», գոչեցին միաձայն,
«Թշնամին կորած է, կեցցէ Հայաստան»...



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

«Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն.
«Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում,
«Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կուզէ պատերազմ, կսպասէ գարնան»:

Մօտ է գարունը շուտով կը բացւի,
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսւի,
Հայերն անվախ, հոգով միացած,
Հրացան ուսերին մերն է «Նոր-տարին»...

Խմբապետները հոգով են կանգնած
Ֆիդայի ուժով գնում են առաջ

Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ:

Յիշէք, եղբայրներ մենք շատ քնեցիք,
Բաւական է մենք այսքան համբերենք.
Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմա ոյժ ունենք դարձեալ յետ առնենք:



ԵՐԳ ՔԱՉԱՐԻ ՀԱՅԴՈՒԿԻ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջը զինուոր ութնասուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն:
Սուլթան սարսափած, ճարը կտրւած
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով շարժեցէք,
Երբէք միք վախնայ, սուրեր շարժեցէք:
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կենալու ժամ չէ, շուտով քայլեցէք:
Միրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք հայեր սուրբ ազատութիւն:

Օտար հողի մէջ չը մնանք հայերս
Հերիք է հային այս պանդխտութիւն,
Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամին

Մինչև մենք հասնենք մեր նպատակին:
Միրենք միութիւն... և այլն:

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
Այլ ու ձախ ջարդել տաճկաց զինւորին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին:
Դէհ, Շէքիր փաշայ, մտածիր հնար,
Հազար ոսկիքով անես գլխիդ ճար:

Կովկասի քաջեր, առիւծի ճուտեր,
Միրէք ձեր սուսեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ, պճնեալ տիկիներ,
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ:
Հարուստք ձեր ոսկին տուէք մեր ազգին,
Ձեր անգին անուն յիշեն սերունդներ:

Դէհ, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա կուրի դաշա, թշնամին անհաշա,
Մեր սուր թող ուտէ օսմանեան վաշտեր.
Ասաւ քաջ Մուրսդ, առած եմ խրատ,—
Կամ կուել ազատ, կամ մահ անարատ:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Ախ, իմ հայրենիք, անուշ հայրենիք,
Կարօտ եմ քեզի անթառամ ծաղիկ.
Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,

Քո անուշ հօտին կարօտ եմ փափագ,
Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,
Ձեմ մոռանայ քեզ, մի ժամ մի ըսուէ:

Պիտի աշխատենք, որ քեզ նորոգենք.
Քո մէջն եղած թուրքերին վանենք,
Պէտք է չունենայ աաճիկն իրաւունք,
Թափել աչքերիցդ արիւն-արտասունք.
Այլ մեր վրէժը նրանցից առնենք,
Մեզ տւած տանջանքն կրկին յետ դարձնենք:

Ունենք մեզի զէնք, ունենք հրացան.
Կազմենք մեր խորհուրդ, առնենք մենք սահման:
Քանի մենք մնանք այլոց լծի տակ,
Քանի մենք ման գանք առանցի գտակ
Պէտք է սովորենք քանդել Տաճկաստան՝
Որ լսողն ասէ. «Կեցցէ Հայաստան»...



Հայրենեաց սիրոյ համար
Խմբեր պատրաստւած են քաջ.
Հրացանները ուտերին
Փամփուշտները ձախ ու աջ:

Հնազանդ կարգով շարւած,
Իրանք առիւծի պէս քաջ.
Խմբապետը հրաման տւեց
Գնալ դէպ յառանջ, յառանջ...


Ոսկեգօծ բաշուղներով
Լազի շորեր թանկագին,
Գնում էին դէպի Սասուն,
Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը դիրք մտան
Թշնամուն պաշարեցին,
Ամեն կողմից կրակ տւէք,
Կոտորեցէք», գոռացին...

Եաման եկաւ ջան ֆիդան,
Սարսափ տիրեց բանակին.
Փախչում էին դէպ լեռներ
Վախկոտ գօրքերն ահագին:

Սաւարից լոյս ծագեցաւ,
Երևում էր մեծ յոյսեր.
Դաշնակցութեան ցանած սերմեր,
Աճում են նորա բոյսեր:

Մեր ապագայ սերունդից
Ըսպատում ենք մեծ յոյսեր,
Կարձակենք ազատ երգեր.
Տալիս է խրախոյսեր:



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ.

Սուրբ անունդ պիտի յիշւի դարեդար,
Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտ սողան իրանց բունը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Չը ցամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք, դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քս ճակատը պսակեն.
Փոհարներով անվախ կուրծքդ զարդարեն.
Յեցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անյաղթ մնաս, դու քաջ կուր սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



*
**

Հայաստանի անկախ Սասուն
Քո ժայռերում կան շատ քաջեր,
Հռչակուած է նրբանց անուն,
Հաւատարիմ քո պաշտպաններ:

Անդրանիկը կուռում է (կրկնել),
Թշնամուն կոտորում է,
Չէ ուզում ըստրկութիւն.
Մինչ գտնի ազատութիւն:

Հայդուկները գէնք վերառած
 Հայրենիքի սիրով վառւած,
 Աչքերում կրակ լցւած,
 Հոգով, սրտով են միշտ կանգնած:

Քո անառիկ գիրքերը
 Պաշտպանում են հայդուկները.
 Նոցա հերոս Ազրանիկը
 Պաշտպանում է քո գիրքերը:

Հայրենիքի տէր ու պաշտպան,
 Ունիս փամփուշտ ու հրացան,
 Մօտ է հայի ազատութիւն,
 Հայաստանի անկախ Մասուն:



ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սիւնեաց երկրից մի աստղ իջաւ,
 Լոյսը ծագեց ամեն կողմից.
 Երանի թէ շատ ունենանք,
 Այսպէս մի ազնիւ ցեղից:


Թողեց կայք ու կարողութիւն,
 Այլոց պատիւ, իշխանութիւն.
 Միշտ երազում էր ազատութիւն
 Ուղիղ ճշմարիտ սիրտիցը:

Կեցցէ ազնիւ մի վարդը,
 Չարին պատրաստեց թակարդը,
 Նայեց սուրբ գործի մակարդը
 Թումանեան ազնիւ ցեղիցը:

Քաջ բիւրօյից առաւ հրաման,
 Գործով կատարեց ամեն բան.
 Նժոյգ փամփուշտ ու հրացան.
 Արիւնարբու քաջ խմբեցան:

Դիմեցին զէպի Հայաստան,
 Սարսեցուց ամբողջ թուրքեստան,
 Ինձ պիտոյ չէ Ռուսաստան,
 Կարօտ եմ քեզ Հայաստան:

Ձինւած խմբով ճամբայ ելան,
 Տէրը լինի մեզ օգնական,
 Մեր հայրենիքի ազատութիւնը,
 Կախւած է քաջ Մուրադիցը:



ԱՒԴԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ձիաւորի խմբից դատւայ մի անգամ,
 Չորս կողմիցս չունիմ մի այլ օգնական,
 Խուճ-խուճ տաճիկները զէպի ինձ կուզան,
 Ունիմ ծովի սիրտ, կռիւ կանեմ խիստ.
 Արիւն թափեմ ճիշտ, չեմ մնա հան գիստ,
 Հայ ազգի սիրուն:

Տաճիկները չորս կողմս շրջապատեցին,
 Հրացանները մէկէն վրաս արձակեցին,
 Երբոր քաջ Աւդալի անուն լսեցին,
 Եղան ցիրուցան ոչխարի նման,
 Խփում ենք նրաց առիւծի նման,
 Այդ շուն թուրքերին:

Ես Աւդալն եմ չորս-հինգ դէպքի պատահած
 Դեռ մեղայ չեմ գոչել ձեզ նման թուրքաց,
 Վաղուց եմ ես պատերազմի կարօտած,
 Արիք աջ ու ձախ դէպ յառաջ-յառաջ,
 Կռիւ կանեմ քաջ ունեմ շատ պահանջ՝
 Այդ վատ շուն թուրքերից:

Աւդալ և Ռաշօն կուեցան քաջ-քաջ,
 Խփում են թուրքերին մէկ մէկուց առաջ,
 Ասում են թուրքերից ունենք շատ պահանջ
 Աւդալ և Ռաշօն կուեցան քաջ-քաջ.
 Հայոց ազգի սիրուն ունեցան պահանջ.
 Վառած են սրտերը երիտասարդների
 Թափեցէք արիւն հայ ազգի սիրուն
 Այս մեր դաշտերուն:

Ռաշօն ալ գոչեց. «Աւդալ եղբայր ջան.
 Կորուցինք ընկերներիս, ալ չենք գտնի խան,
 Այս դաշտերը պիտի կոչւին միշտ Հայաստան
 Օսմանեան զօրքերը արինք ցիր ու ցան:
 Առիւծի նման մենք մոնչացինք,
 Ոչխարի նման նորանց ջարդեցինք.
 Այսպէս սուրբ գործին
 Կեանքներս տուեցինք:

Երբոր ես լսեցի սողոց վտանգը,
 Վառուեցաւ, այրուեցաւ իմ կեանքը.
 Դղրդաց և թնդաց բոլոր աշխարհքը.
 Չայնեց Դաշնակցութեան գործ ու արարքը
 Սարսափեց Սուլթանը դողաց Տաճկաստան
 Կեցցէներ կոչին վեհ Դաշնակցութեան:



Հ Ա Յ Դ Ո Ի Կ Ի Ե Ր Կ Ե Ր Ի Յ

Մութ գիշերին անվախ ֆիդան,
 Ազատօրէն ման կուգայ.
 Արի գնանք Մայր-Հայաստան.
 Անդրանիկը դէմ կուգայ: (կրկնել)

Հայերուս մէջ Վասակներու
 Թիւը արդէն պակսում է.
 Հայ պատանին սուրը ձեռքին
 Նոցա մաս-մաս մորթում է:

Անուշաբոյր թարմ ծաղիկներ,
 Հայ օրիորդը նւիրեց
 Շուն շխերին ջարդել փշրել
 Անդրանիկը վճռեց:



Ո Ր Ս Կ Ա Ն Ա Խ Պ Է Ր

—Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը փնտռես,
Ասն եարաբ, դու չը տեսնիր, իմ մարալիս, իմ բալիս:

Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս:
Գլուխն առաւ քարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս:

—Տեսայ քոյրիկ, նախշուն բալիդ. կարմիր պսակ էր կապելը,
Սիրած եարի համքոյրի տեղ, սրտին վարդեր են բուսել:

—Որսկան ախպէր, ասն եարաբ, ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը, իմ մարալիս, իմ բալիս:

—Տեսայ քոյրիկ, սիրուն բալիդ. քարն էր դրել բարձի տեղ,
Անուշ քնով տաք գնդակն էր՝ կրծքին սեղմել եարի տեղ:

Սարի մարմանդ հոն էր շփում, վառ ճակատին մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ, քո բալիդ...



Ս Ե Ր Ո Ւ Փ Ա Շ Ա Յ Ի Ե Ր Գ Ը

Ով որ քաջ է ինչ կը սպասէ.
Արդէն ժամանակ է, թող գայ.
Մահ-պատերազմի օրհաս է.
Ով որ անվախ քաջ է՝ թող գայ:

Կամ կուենք, պարպենք, վերջանանք,
Կամ գէնքով փրկութիւն ըստանանք,
Կուելով փրկենք Հայաստան,
Ազնիւ մտածողը թող գայ:


Այս մեր Սասուն սարէ Սիփան
Կուի ունէ միշտ անխափան,
Կուելով փրկենք Հայաստան,
Այս յոյս ունեցողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կսպանեն,
Բռնի կրօնքէն կըհանեն,
Մեր կին աղջիկներ կը տանեն.
Պատիւ ունեցողը թող գայ:

Օսմանեան լկած հարձերը
Հաւասար է խոշոր վէճի,
Ելդի կրօնը թող ջնջի,
Սուլթանին հայհոյողը թող գայ:

Երկաթէ մարդ քարէ հողի
Վրէժխնդիր լինի թուրքին,
Անվախ քարի տակ չոքողը
Անսխալ խփողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կուի,
Զէնքով պիտի մաքրենք հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ՝
Սերօր-փաշային սիրողը թող գայ...



ԳՈՒՐԳԷՆԻ ԵՐԳԸ

Մասնոյ լեռներում զինւած ութ տղայ
Իրանց խմբապետ Գուրգէն և Ռուբէն.
Մասուն եղներով զէնքեր վերցնելով
Մինչև ապրիլ լեռներ ման գալով:

Օրն հինգշաբթի Յրօնք տեղ հասան,
Տղայոց խումբը մարզի մէջ մտան.
Այդ գեղի քեօխովէն մըն էր մուսուլման,
Իւր երկու որդին, վալուն լուր տարան:

Հլու հրամանով հաւաքուաւ զօրքը
Թալըփ-էֆէնդին առաջնորդ ընկաւ,
Օրը ուրբաթ Յրօնք գեղը հասան,
Տղայոց խումբը մարզի մէջ մտաւ:

Թալըփ-էֆէնդին ըսաւ անհիշուն.
Ռուբէն կանչեց. — «Գուրգէն գարկ էդ շուն» —
Հրացան բացւեցաւ, կոնակին դիպաւ,
Ու չար թշնամին գետին փուեցաւ...

Այդ որ լսեցին խոտ ու գազ բերին,
Մարազի շորս կողմը կրակ վառեցին:
Ո՛վ հայեր, հայեր, հասէք օգնութեան,
Գուրգէն կը գոհուի ի սէր ազգութեան:

Սմբապետ Գուրգէն առիւծի նման,
Երկու ընկերով մարզից դուրս ելան,

Գնդակ պարպելով դէպի սար գնացին,
Վաս թուրքի զօրքը ընկաւ յետևից...



ԲԱՒ Է ԵՂԲԱՐՔ...

Բաւ է եղբարք վիզը ճկել,
Ողորմելի երևել,
Ժամանակը հասել է,
Հայ դրօշակին ծածանել:

Հայոց լերինք թող թնդան,
Հայոց բերանք թող գոռան,
Հայաստանի դաշտերում,
Հայ քաջերի զիլ ուռան...

Արիւն վոթէ թող հայը,
Աղաղակէ միշտ ուռա...
Մեր թշնամին այսուհետե՛ւ
Մրտի վախէն թող դողայ:

Այսուհետեւ արտասուք,
Վախկոտները թող հեղուն,
Հայքս արդէն պատրաստ ենք.
Ոթել ազնիւ մեր արիւն:

Ու չենք դադրիլ ոթելուց
Մեր հայ ազնիւ արիւնը,

Մինչև ազգը չըստանայ՝
Իրա ազատութիւնը...

Ախ ու վախը մենք մոռնանք,
Այժմ գոչենք մենք ուռան.
Հայք գոչեցէք միշտ ուռան՝
Որ թշնամին մեր գողայ...



*
**

Դանակը ոսկոռին հասաւ
Էլի ասում են համբերէ,
Ցաւիս վերայ նոր ցաւ դրաւ՝
Էլի ասում են համբերէ:

Թշնամին կանգնած է իմ մօտին,
Ձեռքը դրած է սրին,
Կուզէ հանել իմ հոգին՝
Էլի ասում են համբերէ:

Ընծի ասում են համբերէ,
Տանտէրը բան կը բերէ.
Նայում եմ կայքս կաւերէ,
Էլի ասում են համբերէ:

Կանգնած է թշնամին դաժան.
Կատաղել է ինչպէս գազան,

Էլ ինչ մնաց համբերութեան,
Էլի ասում են համբերէ:

Սիրելու ասում են թէ կաց,
Կասեն մի անէ լաց ու թաց,
Կաշեմ ետքը բան չը մնաց
Էլի ասում են համբերէ:



ԿՈՂՈՊՏԻԱԾ ԵԿԵՂԵՅԻ

Աւազակները օրը ցերեկով,
Տուն ու տեղս թալանեցին,
Լօմերով քլունկներով.
Դուռ պատուհանս կոտրատեցին:

Աւարառուք եկան շարան
Տոյց տւեցին սրի բերան.
Հազար ու վեց հարիւր տարւան.
Սրբութիւնը աւրեցին:

Գանձատունս լի էր, առատ,
Անթիւ փողեր, ոսկի արծաթ,
Առևանգեր մուրհակներ հաստատ,
Առան տարան թալանեցին:

Ունէի բազում կալւածներ,
Գիւղեր, հողեր, ձոխ անտառներ.

Հագարաւոր տարւան կայքեր,
Զօռով ձեռքիցս խլեցին:

Այս ինչ դարի հասանք Աստուած,
Հին ցաւերից դեռ Հագատուած.
Տանս տխուր, տրտում նստած,
Յանկարծ եկան մերկացուցին:

Մեր նախնիքը դարեր առաջ,
Ունեցել են ողբ ու հառաչ,
Բայց այսպիսի տհեղ հարւած,
Ամենևին չէինք տեսած:

Ահա քեզ դար, նոր, լուսաւոր,
Որ ընկածին կանեն տկոյր,
Զարդեն, կսպանեն ամեն օր,
Զեն թողնում, որ ազատ ապրենք:

Ես Հայրիկն եմ անմխիթար,
Զունիմ հանգիստ, չունիմ դադար,
Զաւակներս, անմեղ արդար,
Ա՛խ, չը գիտեմ ուր մնացին:



* * *

Ունիմ Աստուած, բայց չունիմ Տէր,
Տարածներդ քեզ չի մնայ
Կստանաս փոխարէնը անխախտ՝
Տարածներդ քեզ չի մնայ:

Շուտ կստանաս դու փոխարէն.
Բռնած գործդ է անօրէն.
Տուրը կտաս վարէն վերէն
Գողացածներդ քեզ չի մնայ:

Մէկ տուն ունէի քանդեցիր,
Խեղճ գաւակներու զրկեցիր,
Դուռ ու պատուհան ջարդեցիր՝
Տարածներդ քեզ չի մնայ:

Շատ չըսեց գործդ երկար,
Տանջեցիր ինձ դու էլ տանջւար,
Շուտով փոխարէն ստացար,
Գոփածներդ քեզ չի մնայ:

Զի կշտանայ գողացողը,
Պատիժ կստանայ տանողը,
Մեծի անէծք առնողը,
Թալանածներդ քեզ չի մնայ:

Զըկարողացար շուտով մարսել,
Տարածդ քեզ է վրասել,
Սկսեցիր շուտով փոխել,
Տարածներդ քեզ չի մնայ:

Մարեցիր իմ վառ աշտանակը
Սրտիս զարկիւր սուր նիզակը
Մէջս գցեցիր վառ կրակը,
Տարածներդ քեզ չի մնայ:

Մինչև անգամ հին հագուստներս,
Գտար, տարար պահուստներս,

Մարեցիք իմ վառ յոյսերս՝
Տարածներդ քեզ չի մնայ:



ՇԱՆԹ ԽՄԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1899 ամի 19 յունիսի)

Բնականից առաջ գնաց
Շանթի խումբը Հայաստան,
Տաննուլթից էր բաղկացած,
Շաշոյի խումբը իսկական:

Երբ սահմանի գլուխն անցան,
Պատերազմի բռնուան.
Երկու հազար քիւրդերու զէմ.
Ասիւծի պէս կուեցան:

Խմբապետն գոռաց. «Տղէրք,
Մեր կողմն է յաղթութիւն»,
Գետի նման միշտ հոսում էր,
Շուն քիւրդերու արիւնը:

Երեք օրւայ կուից յետոյ,
Քիւրդերը փախուստ տւին.
Անթիւ սպանւած քիւրդեր,
Կուի դաշտում թողեցին:

Շատ գիւղեր ազատեցան.
Շուտով անցան Վասպուրական,

Միայն երեք զոհ տւեցին,
Մեր քաջերը պատուական:

Քաջ Շաշոյի խմբի պէս խումբ,
Դեռ չի տեսնւած ոչ մի տարին,
Դաշնակցութեան Դրօշակը,
Ծածանուում էր Բարեգար սարին:

Քաջն Շաշօն երբ մահացաւ
Յանձնեց խումբը Խօջային,
Ասաւ, պէտք է կառավարես,
Մինչև քո շունչը վերջին:

Խօջան ուխտեց կառավարել,
Մինչև այսօրս հոգով,
Աշխատում է գիշեր-ցերեկ,
Տանել այդ լուծը սիրով: Ս. Թ.



* * *


Խաղաղ դաշտի որդիք լեռները ելնենք,
Արօր գութան մոռնանք, հրացան առնենք.
Խեղդւած մեր բողոքը յայտնենք զէնքերով.
Եւ մեր արդար դազը վարենք արիւնով.
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշւած հայի որդիք հարազատ: (կրկնել):

Քան թէ ամեն վարկեան կենդանի մեռնել,
 Ազատութիւն վճռել և ազատ մեռնել,
 Հինգ դարերով մեռեալ ստրուկ հայ ազգը
 Այսպէս պէտք է լուծէ եղբարց վրէժը,
 Մեր կեանք, մեր մահ այլն...

Ըստրկութեան շղթան պարզ շառաչում է,
 Ազատութեան ճնշած ձայնն հառաչում է,
 Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
 Եւ ընդարձակ հողեր Հայոց գերեզման,
 Մեր կեանք, մեր մահ և այլն:

Յառաջ դիմենք, զարնենք Համիդին,
 Ղրկենք հայ գիւղացուն, հասնի զաւակին.
 Իմաց տանք Սուլթանին, անգութ բռնաւոր,
 Ծագէ հայ հերոսի համար պայծառ օր,
 Մեր կեանք, մեր մահ և այլն:

Յրւած խմբեր հասնեն Ձէյթուն և Վան
 Շտապենք, միանանք, կազմենք խումբ հայկեան,
 Հայի ազատութեան պարզենք Դրօշակը.
 Կեանք մահով կապւած, դնենք նոր պսակ:
 Մեր կեանք, մեր մահ և այլն:



ՀԱՅԴՈՒԿԻ ՎԵՐՁԻՆ ՈՒԽՏԸ

Թող չար օրհասը թափ է իմ գլխին,
 Ապագութ մահւան բոլոր սև շարիք

Բայց քո սուրբ անուն մինչև վերջին շունչ,
 Ես չեմ մոռանայ սիրուն հայրենիք:

Թող օրհասական բոլոր պատուհաս,
 Թափէ խղճիս վրայ իմ անգութ օրհաս,
 Բայց մինչև ես կէանքից մաշւած հետին կծիկ,
 Քեզ չեմ մոռանայ անգին հայրենիք:

Թող գոմորական արիւնոտ մոխիր
 Թափ է իմ գլխիս միշտ ճակատագիր,
 Բայց մինչև չը մտնեմ մահու դամբարան.
 Քեզ չեմ մոռանայ անգին հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին,
 Կախաղան, և սիւն, կամ մի այլ գործիք,
 Բայց մինչև չը գցեն շիրիմ իմ մարմին,
 Քեզ չեմ մոռանայ սէր իմ հայրենիք:

Թող թշնամութեան դժնեայ ծառի ճիւղ,
 Տայ ինձ իւր փշոտ թունալից պտուղ,
 Բայց մինչև կեանքիս վերջնական վայրկեան,
 Պիտի քեզ յիշեմ, սիրուն հայրենիք:

Թող կոյր ամբոխը անձրևէ գլխիս,
 Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,
 Բայց մինչ իմ բերնից չելանէ հոգիս,
 Քեզ չեմ մոռանալ անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն Վասակի թոռներ,
 Ասելով՝ տգէտ, յիմար և անբան,

Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց քեզ չեմ մոռնայ, երբէք Հայաստան:

Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս,
Տանեն սգալով դէպ մահու դարպաս,
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,
Գուցէ քեզ մոռնամ, մայր իմ Հայաստան:

Բայց ո՛չ երկնքում լուսոյ որդոց հետ,
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ յաւիտեան,
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան:



ԽԱՆԱՍՕՐԻ ԿՌԻՈՒՄԸ
ԸՆԿԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Յուլիս ամսի քսանուհինգին,
Մօսին հրացան պատրաստ ձեռքին,
Քրդի ոխը պատած սրտին,
Դէպ Խանասօր դիմեց ուժգին:

Երեք հարիւր հայ քաջերով,
Բոլորը զինւած մօսիններով,
Շէրիֆ բէկին մեծ ջարդ տալով,
Կարօն ընկաւ վրէժ կանչելով,

Ագուլեցի, քաջ պատանի,
Հօրդ մօրդ սի լուր տանի,

Քեզպէսներին միշտ երանի
Դուք էք յոյսը Հայաստանի:

Ամեն աչքեր թող արտասուեն,
Ամեն սրտեր թող կտրատուեն,
Խանի նման զոհեր տւին,
Խեղճ հայերը հնց համբերեն:

Փչեց մեզ զով Առաւուրից,
Հայերի սիրան էլ այրեց.
Խանի պէս քաջն մեզանից խլեց,
Հայ քաջերի սիրան էլ այրեց:

Դու ով ունիս որ քեզի լայ,
Գերեզմանիդ վրայ ողբայ,
Թշնամիէդ վրէժ առնէ,
Անբաղդ հայուն օգնող չկայ:

Խունկ ու մոմով զամ Խանասօր,
Արցունք թափեմ ես ամեն օր,
Քեզ հարցնելով ֆնացի մոլոր,
Նստած կուլամ միշտ սգաւոր:

Արտասուքս հեղեղ դարձաւ,
Պայծառ օրս խաւարեցաւ
Դաշտ ու ձորեր արիւն դարձաւ,
Խանի պէս քաջը զոհեցաւ:

Առնեմ սուրս ելնեմ Առաւուր
Քիւրդեր մորթեմ ես ձախ ու աջ
Ես էլ հայ եմ պարտաճանաչ,
Հայերի համար մեռնել քաջ-քաջ:

Ա՛խ, երանի թող մեռնէի,
 Ազգս ազատւած տեսնէի,
 Ուրախ գերեզման մտնէի,
 Եւ հանգստութեամբ ննջէի...



ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեծ էր կուրծքդ, մեծ սիրտ ունէիր,
 Մեծ էր հոգիդ ու արի,
 Հսկայ բոյգ, մեծ կամք ունէիր,
 Հերոս զինուոր ֆիդայի:

Դու սիրեցիր թշուա ազգիդ
 Անկեղծօրէն ուխտեցիր,
 Եւ քո սիրած հայրենիքիդ
 Չահէլ կեանքդ գոհեցիր:

Ու գնդակներդ անվրէպ,
 Արձակեցիր աջ ու ձախ.
 Կանգնած հազարների հանդէպ.
 Մինչ վերջ կուեցիր անվախ:

Դու կուեցիր Օձիքներում,
 Այն վեհ կուռում ահաւոր.
 Դու վախցուցիր քիւրդ ու թուրքին.
 Դու մեր ազիզ Գրիգոր:

Ու յիշատակդ անթառամ,
 Քեզ արժանի երգերով.

Պահել յաւերժ մեր սրտերում,
 Անմահ անուշ յիշելով:



*
 **

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,
 Կոներդ ուժեղ, պինդ պողպատ,
 Սիրել զիտես, կուել չիտես,
 Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրդերը,
 Եղբորդ արիւնն են ծծում.
 Դու անտարբեր, սառն արիւնով.
 Հանգստութիւն ես փնտրում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,
 Որ զէնք չունես քո ձեռքին,
 Քո եղբորդ կուի դաշտում,
 Տապալում է թշնամին:

Չեռքդ տուր ինձ, երդւենք այստեղ,
 Թողնենք փառքը աշխարհի.
 Գնանք, կուենք առիւծաբար,
 Ի սէր ճնշւած հայ ազգի:



ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բարով եկար սիրուն կռունկ,
Ինչ լուր բերիր հայրենիքէս.
Սօսիր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կնւիրեմ ես քեզ:

Տեսար իմ հայրենեաց տունը-
Գեղեցիկ, գարգարած գոյնը.
Նորա սիրուն տանջւում եմ,
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,
Հաղորդեցիր դու իմ սէրը.
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի կորիւն նետերը:

Տեսար մեր փոքրիկ բուրաստան
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան-
Եղեմական դրախտավայր,
Նա կոչւում է Հայաստան:

— Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ինչ կապասես ի դուր,
Արի առնեմ իմ թևերուն.
Գնանք այնտեղ ուրախացուր:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկած եմ քիւրդերու մէջ,
Արնաշաղախ վերքով լցւած,
Ինձ կարծել են մեռած,
Թողել գնացել են.
Կիսամեռ թշւառս ինչ անեմ,
Մնացել եմ անօգնական: »

Երբ նայում եմ լուսնի լուսով,
Հազարներով փռւած գետին
Սատկած և վիրաւոր.
Շարիֆ-բէկի քիւրդեր մրմնջում են միլա,
Վախկոտ հեկալօներ.
Տեսարանն ուրախալի էր.
Թեթևանում են իմ վշտեր:

Քիւրդ լացկոծների միջից,
Յանկարծ լսեց. «Մայր իմ անուշ»...
Ախ, այդ ձայնն էր հայկական:
Գնացի դէպ նորան, տեսայ ընկերս էր,
Զինւոր էր նա վէրք ստացած,
Արեան դաշտում ինձ նման:

Չեռք մեկնեցի մտերմիս ասի.
«Նայիր բոլորդ հոգի ստացիր»,
Հայի յաղթութիւնը, մեծ է ջանփիղան,
Փառք իւր Իրօշակին:
Վիրաւորներս սիրտ առած
Հեռացանք արեան դաշտից:

Էլի սաղ եմ քաջի պէս,
Տես իմ վէրքերուս տեղերը.
Հաւատացէք հայ զինուորի ուղղութիւնը,
Որ չինայեց իւր ազգին իր արիւնը,
Ազատութեան գոհեր ենք մենք,
Ազատ կամքով, ազատ խղճով:



* * *

Երբ ես մեծացայ տղամարդ դարձայ,
Ու սիրտս գնդաց սիրոյ վառվառմամբ.
Ուզեցայ սիրել աղջիկ սևաչեայ,
Բայց դ՛ու գիրկս ընկար, անգին հրացան:

Ու բոց-կարօտով գրկեցի ես քեզ,
Սխմեցի կրծքիս, անգին հրացան,
Իմ սրտի տէրը հարսնացուս դարձար,
Աննենգ ընկերս, իմ սէր հրացան:

Երբ թշնամու դէմ կուի եմ վազում,
Դու կրծքիս սեղմած, անբաժան հետս ես,
Դու ես միշտ սրտիս մըրիկը յայտնում,
Քեզնով եմ փնջում, որոտում վրէժ:

Եւ երբ գազազած գլուխս դնեմ
Կուի դաշտումը, կուգեմ, որ փորեն
Քեզնով ինձ մի փոս, կուի ընկերներ.
Քեզ հետս թաղեն, իմ հարս, իմ ընկեր:



ՄՇԵՅՈՒ ՄՕՐ ԱՂԱԶԱՆԻԸ

Թիփի բորան մութ գիշերին
Կըպտուէ ֆիդային,
Պատրօնդաշն խաչփազ թալած,
Չեղբին առած հրացան:

Ախ, ձեզ մատաղ, ջանֆիդայիք
Չեր մեր ձեզի թող մեռնի.
Մշու սուլթան սուրբ Կարապետ.
Չեզի քեօմակ թող եղնի:

Դուք վախցուցիք քիւրդ անօրէն
Քչէք մեր սար ու ձորէն,
Քեաֆը քրդու ա.ք վախեցաւ
Ջան ֆիդայու գլուխայից:

Ախ, ֆիդայիք ձեր սաղաղէն.
Չեր խետ տարէք զիմ տղունս,
Չեր խետ մըռնի ձեր խետ ապրի.
Ազգի մատաղ զիմ տղէն:

Թող դէն թողնի խարօր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիզ լաճ
Քիչ մալ թող թուանքի խետ խաղայ.
Էլ թող չը տայ քրդին խարճ:



* * *

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը գէնքով հետ խլենք.
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլ ևս չլանք և ոչ լաց լինենք,
Կրակած սրտով մեր գործը վարենք,
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ.
Երբ հայ քաջի դէմ կուի գուրս կուգայ,
Մենք վախեցող չենք մահից տանջանքից.
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէծք այն հօրը չի մղում որդուն,
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.
Ամօթ այն հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



* * *

Ես հանեցի սուրս պատեանից
Արտասուքովս օծեցի,
Տրամաւ անուշ սիրականս,
Երբ իմ ողբս կարգացի:

Նա երգւեցաւ իմ սրովս.
Չը խնայել թուրքերուն.
Այս պայմանով աշխոյժ քաջին,
Սուր, հրացան յանձնեցին:

Աստուած սիրէք, հայ ազջիկներ.
Եկէք. խորհենք միասին.
Այսուհետև ալ չը սիրենք
Կուլից փախչող վախկոտին:»

Խիստ զգւելի կերպով նայենք
Ոսկու սիրուն մեռնողին,
Համբոյրի տեղ, թոյն կամենանք
Թուրքից վրէժ շառնողին:

Ոգևորած կրկնեց քաջը
Ո՛ւմ կը սպասենք, վայ մեզի,
Նա հեռացաւ մոնչալով
Ինչպէս կորիւն առիւծի:

Կը գայ գարուն. մենք կը սպասենք.
Նոր կեանք, նոր բաղդ բիւրդի հետ.
Մեր լեռներից պիտի հոսայ
Արիւն՝ ինչպէս հղուն գետ:

Քեզի մեռնեմ Տիրան-Տիրան
Քաջ Զէյթունի սիրական.
Հազար երանի ամեն հայ կնոջ
Մարդ կունենայ քեզ նման:

Բարկենիկիս օրօրենք ոտքով
 Վառօղ մաղենք ձեռքերով.
 Շուն Սուլթանի հետ գործ ունենք
 Դեռ Զէյթունը չի ապահով:

Տիրանի պէս քաջեր սիրենք.
 Արժանի էր մեր սիրուն.
 Որը գիտէ սրով պահել,
 Կին չը յանձնել թուրքերուն:



Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ի Ն

Հին հերոսներն ինչպէս մեռնող արևներ,
 Անյայտացան հորիզօնից ռազմական,
 Կուրի դաշտում մի պահ տիրեց սև գիշեր...
 Ազատութիւն ու իրաւունք սուգ հագան:

Ձը վհատենք, վառ արշալոյս հայկական
 Բիւր երբնեւրանգ արևներով կը ծագի:
 Նորա համար այնքան արև մայր մտաւ,
 Որ զարդարեն մեր մեծ այգը նոր կեանքի:

Եւ հարգարին ծիրանիով շողշողուն,
 Լոյս առագաստն երրորդութեան ճշմարիտ,
 Ազատութիւն, իրաւունքի և սիրոյ
 Որոնք տւին մեզ ազատ կեանք ու տաք սիրտ:



ՅԻՇԱՏԱԿ 1897 ՅՈՒԼԻՍ 25-Ի ԱՐՇԱԽԱՆՔԻՆ-

Պաշարեցին Սանայ ձորեր.
 Դաշնակցութեան քաջ հայրուկներ.
 Զուն Շէրիֆի բիւր վրաններ
 Կեցցէք, կեցցէք հայ հերոսներ,
 Որ ջարդեցիք շուն քիւրդեր:

Յարձակեցան քրդաց վրան,
 Սարսափեցրին Շարաֆ աղան,
 Կին ու աղջիկ, փոքրիկ տղայք.
 Կեցցէք, կեցցէք՝ և այլն:

Առաւօտեան արշալուսին
 Հայ քաջերը ձեռք վերուցին,
 Դաշտ ու ձորեր դիակք լցրին
 Նահատակաց վրէժ լուծին
 Կեցցէք և այլն:

Հայկայ բանակը արշաւեցին
 Չեռնին առած սուր ու մօսին.
 Քիւրդաց ջարդին արշալոյսին,
 Կեցցէք և այլն:

Չատրներաց բարակ սիւներ,
 Այրում էին հայ հերոսներ,
 Սև կապեցին քիւրդաց կիներ
 Կեցցէք և այլն:

Ծածանում էր դրօշակներ.
 Որոտում են մօսիներ,
 Գլորում են անթիւ քիւրդեր
 Կեցցէք և այլն

Սպարապետ քաջ Վարդան
 Հրաման տուր քշենք դէպ Վան
 Գողացնենք այն շուն Սուլթան.
 Որ ճանչնայ հայուն իւր ձեռը
 Բռնած սուր և հրացան ու ինքն ազատէ ազատ:



* * *

Նպատակիս հասնեմ միայն,
 Թող զիս հանեն կախաղան.
 Կախաղանէն խեղդուկ ձայնով
 Պիտի գոչեմ, ախ, Հայաստան:

Ախ, Հայաստան սիրտս ու հոգիս
 Քեզ նւիրեմ ընդունէ,
 Թէ կարելի, թող ես մեռնեմ,
 Թաք Հայաստան ոտքի ելնէ:

Անոր սիրուն բանտն ալ մտնեմ
 Պալատ է այն ինձ համար,
 Ոտք ու ձեռքս շղթայակապ
 Երջանկութիւն է ինձ համար:

Թէ մինչև իսկ աքսորեմ ալ
 Թափառական գտնէ զիս բախտ,
 Հայաստանի սիրոյն համար
 Փշոտ վայրեր կլլան զրախտ:

Ախ, Հայաստան դու սիրուն վայր,
 Մինչե՞րբ այսպէս քո որդիք

Քեզնէն հեռ պիտ հառաչեն,
 Իսկ դձևք մինչ երբ թափառիք:

Ե՞րբ պիտի գայ հայ թագաւոր,
 Սուրը ձեռքին, զօրք հետեին,
 Դրօշակները ծածան-ծածան
 Արբայական թագը գլխին:

Ախ, Հայաստան աչքդ դարձուր
 Քեզի փնտուղ որբերուն»
 Պէս-պէս ցաւօք կը տանջւին
 Դարման եղիր հայ քաջերուն:



* * *

Հերիք է, մայրիկ, դու ինձ փայփայես
 Հերիք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես.
 Ես կուզեմ խմել ջրի տեղ արիւն
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քսան տարուց անց կացաւ
 Սիրտս վրէժով լիքը լցւեցաւ.
 Չեմ ուզում տեսնել եղբայրս թշւառ,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Լացով չենք կարող փրկել Հայաստան,
 Մայրիկ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,
 Չեռներս ծալած չեմ կարող նստել,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Համիզն ունի գործեր մեզի հետ,
 Մեզ կոտորում են, մեզ թալանում են.
 Հերիք է, մայր իմ, կարո՞ղ եմ լուել,
 Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:



*
 **

Եթէ կամիք փրկել թշուա հայրենիք
 Նախ պիտի կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
 Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ
 Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանուել:

Արիք եղբայրք միանանք
 Բաւ համարենք մեր տանջանք
 Ի սէր ճնշւած հայ ազգին,
 Գործ դնենք մեր ճիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին
 Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
 Ուրիշների սուտ պարգևին շլացած,
 Որ մասնեցին մինչև այժմ գերութեան:

Արիք եղբայրք և այլն:

Մենք Հնչակեան, եղբայրք, դուք Գաշնակցական
 Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.
 Արիք վճռենք, հագով սրտով միանանք,
 Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Արիք եղբայրք և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար
 Մեզ կը սպասեն անհամբեր ու անդադար.
 Ուխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն.
 Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:

Արիք, եղբայրք և այլն:



Ն Ի Է Ր

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ,
 Հայ օրիորդն ինձ ընծայեց,
 Հեռու երկրից անկեղծ նւէր,
 Իր քոյրերուն ուղարկեց:

Ասաց. «Տուր այդ փունջն ու սաս.
 Թէ չի անցնիլ էլ երկար
 Կուլի դաշտում հարս ու փեսայ,
 Կը հանդիպենք մենք իրար:

Կուլ կուտանք, կուլ արդար
 Կուլ վերջին ճգնական.
 Գօտէսնդւած, հերոսաբար
 Ու կազատենք Հայաստան»:

Գուրս ցայտեցին արցունքներ տաք.
 Իմ աչքերից այդ պահուն,
 Լսում էի կարծես անյազ
 Ազգութեան պատգամին:

Եւ երգւեցի տանել փունջն այն,
 Դէպի կարմիր Հայաստան
 Ուր վիրաւոր հայերն համայն
 Ըսպասում են փրկութեան:



* * *

Կենաց փշոտ ասպարէզը,
 Աւաղ, աւաղ ինձ դիպաւ.
 Ջուրս լեղի, կերած հացս—
 Ո՛հ, կերած հացս թոյն դարձաւ:

Հեռու երկիրք, արև լուսին,
 Աւաղ, աւաղ, տխրամած,
 Ես կը հեծիմ բանտիս խորը
 Ո՛հ, բանտիս խորէն շղթայտծ:

Չը կայ հայր իմ, չը կայ մայր իմ,
 Աւաղ, աւաղ, քոյր, եղբայր.
 Եւ ոչ միայն մխիթարիչ,
 Ո՛հ, մխիթարիչ բարեկամ:

Անմեղական լուր ղրկելով
 Աւաղ, աւաղ, Սուլթանին
 Մոլեկրօն ու վայրաշեղ
 Ո՛հ, վայրաշեղ իսլամին:

Վերաքննեց, չար նկատեց
 Աւաղ, աւաղ իմ մասին,

Վնասաւոր զիս նկատեց
 Ոհ, զիս նկատեց իւր ազգին:

Ահա կիջնեմ սև գերեզման,
 Աւաղ, աւաղ գրկեմ հող
 Իմ անունս, յիշատակս
 Ոհ, յիշատակս մնայ թող:

Մի հարցներ իմ շորերս, ||
 Աւաղ, աւաղ, դուն Սարգիս,
 Ես կը մեռնեմ մինչ յաւիտեան
 Ոհ, յաւիտեան դուն Դաւիթ:



ԴԱԻԱՃԱՆ ՄԱՐԴՈՒՆ:

Նա դաւաճան է՝ ով անտարբեր է
 Մայր-Հայաստանի կոծը տեսնելիս
 Մատնիչ է և դաւաճան՝
 Մայր-Հայաստանի լացը տեսնելիս:

Մահ ուրացողին, մահ դաւաճանին,
 Նզովք և անէծք նոցա է բաժին,
 Մեռնելիս յաւէտ ջնջւին
 Այդպիսիներն հայերի ցանկից:

Հայի նախանձը, հայի զայրոյթը
 Պիտի գրգուռի նոցա տեսնելիս,
 Արիւն նոցա, պիղծ արիւն
 Չբանալու է հայերիս միջից:

Հերիք է, հերիք, հայ հսկաներին
 Սուրբ շիրիմներին նախատինք թափին
 Անէծք և բիւր նախատինք
 Նոցա անունին և յիշատակին:



ՍԵՐՈՎԲԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1849 թ.)

Բոլոր աշխարհում լսեց քո համբաւ.
 Առիւծ քաջարի, Սերոբ ջան.
 Հայոց աշխարհի:

Հայութեան անուն խիստ բարձրացուցիր.
 Քնացած սրտեր, աղբեր ջան,
 Դուն բորբոքեցիր:

Մեզի օրինակ թողեցիր, գնացիր.
 Երիտասարդաց, աղբեր ջան.
 Դուներ բաց արիր:

Քաղցր հայրենիքդ բնաւ չի թողիր
 Մինչև վերջին շունչ, աղբեր ջան,
 Պատերազմեցիր:


Սուրբ գործ սիրեցիր, խմբեր կազմեցիր,
 Անգուլթ թուրք և քիւրդ, աղբեր ջան,
 Սարսափեցուցիր:

Քաղէշ վիլայէթը ոտքի կանգնեցուցիր,
 Խեղճ ժողովուրդին, աղբեր ջան,
 Հոգի, յոյս աւիր:

Գիշեր և ցերեկ ախլաթ լալիս է,
 Անդադար կը գոչէ, աղբեր ջան.
 (Սերովբ և Սօսէ):

Այժմ ննջում ես սև հողի տակին
 Մեզի թողնելով, աղբեր ջան,
 Օգնել հայ ազգին:

Սերովբ աղբօր, գործին հետևինք,
 Վրէժ կը գոչէ, աղբեր ջան
 Հայեր վրէժ. առնենք:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ:

Ո՞վ իմ հայրենիք, սիրուն գեղեցիկ,
 Զերթ փուշերու մէջ դու գարգ մենակիկ,
 Քո տխուր սրտէն լսի հառաչանք,
 Վիշտն է պատեր քո սզաւոր կեանք
 Անգուլթն իսկ չուզէ քո ողբ, հեծեծանք,
 Եւ մենք քաջ հայեր անզգայ մնանք:

Ա.ս ձեզ կաղերսէ թշւառ հայրենիք,
 Սիրոյ զօրութեամբ օգնութեան հասէք.
 Անոր ողբերէ ելած արձագանք,
 Ըզձեղ չի թնդեր, արթնացէք, հայգուկք:

Ո՛վ ազատասէրք, պարծանք հայութեան,
Արդ եղէք սիրով հայրենաց պաշտպան:

Եթէ ունիք սիրտք Վարանդոյ պէս քաջ,
Ի՞նչու էք կեցեր, ո՛ն, քաջ հայք, առանջ,
Անգութ. վատ թուրքի բարբարոսութիւն
Ի վրէժ կմղէ մեր սիրտն ու արիւն,
Կողբայ Հայաստան, կողբայ անդադար,
Արձագանք նրա շարժեն լեռ ու սար
Եւ ձեր սրտերը ժայսէն ալ կարծր են
Որ ողբն հայրենի՛ առ ոչինչ դնեն:

Ամօթ չէ միթէ, դեռ լինենք գերի,
Ալ բաւէ, գարթիք դուք. հայեր արի,
Ձեր վառ զգացմունք թող ալ խրախուսին
Առնել սուրն ու զէնքընդդէմ վատ թուրքին,
Եւ դու, տէր Ասուած, տուր մեզ սիրտ արի
Որով մեր անուն քաջութեամբ փայլի:

Ոչինչ են թուրքի թնդանօթ ու զէնք,
Երբ մենք հայերս միացած լինենք.
Յառանջ ընթանանք, անվախ, անվեհեր,
Մեզ զէնք ունենալով հայրենեաց վառ սէր,
Եւ մեր յոյսն այս միայն լինի՛
Ազատութիւն կամ մահ վառն Հայաստանի.
Ուրեմն պարզենք մեր դրօշակն հայկական,
Տալով նոր հոգի, նոր կեանք հայութեան:



ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎԵՐԱՅ

Ուշ գիշերին ծովն է խաղաղ
Ջրեր վճիտ ու յստակ,
Ջինջ է երկինք միապաղաղ
Աստեղազարդ, կապուտակ:

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
Մե ամպերով մռայլեց,
Քամի բրդաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլուեց:

Կուրծքն առիւծ ու փրփրուն.
Ալիքներն ահագին,
Մուգ ու հառաչ, գոռ ու գոչիւն
Թռան ծոցից ծովակին:

Միրուն ծովակ, աստ դու մեզ
Էլ ի՞նչ նորից յուզեցիր,
Այն ի՞նչ բօթէր, որ բերեց քեզ
Քամին մոլար, անձանձիր:

Արդեօք, ողբ էր թէ հառաչանք
Երգեց նա քո ահանջին,
Կոյսի մրմննջ, մօր հեծեծանք,
Թէ՛ ճիշ անմեղ մանկիկին:

Արիւնապատ մեր ձորերում
Հիւսել էր իր մեղեգին,
Թէ՛ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին:

Ախ. այդ ցաւոտ, սև երգերով
 Մեզ քուն ասին մեր մայրեր,
 Ու սարսափի զրոյցներով
 Խլացրին մեր ճիչեր:

Ու այնուհետ շատ տարիներ
 Նոյն երգերը տխրագին,
 Սև դարձրին կարմիր օրեր
 Վախով լցրին մեր հոգին:

Մի անգամ էլ մեր լեռներում
 Մի հողմ փչեց ահաւոր...
 Էլ արտասուք նա չէր երգում
 Ա՛չ ողբ ասում սգաւոր:

Սև լեռների մռայլ ծոցից
 Խլած հսկայ գոլիւններ.
 Սև ժայռերի գոչիւններից
 Նա կազմել էր իր երգեր:

Պղտոր, կարմիր գետը յուզւած
 Այնտեղ ունէր իւր բաժին,
 Մայր բնութիւնն էլ զարհուրած
 Միացել էր այդ երգին:

Երբ ժայռերը գոռում էին
 Հայր ի՞նչպէս լուռ կենար
 Երբ լեռները դողում էին
 Մեր սիրան ի՞նչպէս դիմանար:

Եւ իլեցինք մենք պատեանից
 Սրեր վաղուց մոռացւած

Եւ դուրս ընկանք մեր տներից
 Դէպ սուրբ վաթան աւերւած:

Հնու կաց քամի, մի փշիր, լնու,
 Շատ յուզեցիր ծովակին,
 Թող շնջայ մեղմիկ գեփիւն,
 Թող, հանգիստ թող ծովակին:

Հնու կաց ծով դարդերի լալկան
 Է՛լ բաւ է այսքան հառաչներ.
 Մենք զօր ունինք, սուր, հրացան
 Շուտ վերջ կառնեն քո ցաւեր:

Թող միայն մեզ շուտով լողնանք,
 Թող որ հասնենք այն ափին
 Տես, լաւում են ճիչ, հառաչանք
 Աղերս ու ողբ անմեղին...

Դէհ, ընկերներ, զարնենք թիեր
 Հզօր բազկով միասին.
 Մօտ է ափը. հէյ եղբայրներ
 Ահա հասանք ձեր հաւարին:



ՍԵՐՈՒ ՓԱՇԻ ՅԻՇՍԱԿԻՆ

Գլուխդ Բաղէշ և մարմինդ ի Մուշ,
 Հովի պէս անցար դու քաջի նմուշ.
 Անուշիդ մատաղ, թուրքի աչքի փուշ.
 Աղբեր Սերոբ ջան, անուշդ քաղցր-անուշ:


Անմահ դիւցազն Խլաթայ
 Հսկայ կորիւն Նեմրութայ,
 Հայերուս փառք և բաղձանք
 Քեզ մատաղ, Սերոբ փաշայ:

Ասկից վերջ քեզ Բաղէշ քեզ պիտի յիշէ
 Եւ յորդ արցունքներ միշտ պիտի թափէ
 Գլուխուդ, գերեզմանդ երբ նա կը տեսնէ
 Աղբեր Սերոբ ջան, միշտ պիտի կանչէ:

Հողի տակ ննջէ դուն գաւակ Հայկայ
 Անունդ ազգիս մէջ միշտ պիտի մնայ
 Հայք քեզ կոչեցին դիւցազն Խլաթայ,
 Թուրքը սարսափած քեզ կասէ փաշայ:

Սար է Սիփան, սև սար Գրգուր և Նեմրութ
 Որք են մնացել քաշեն քո կարօտ
 Երկիր դող հանիր անցար քո խմբով
 Աղբեր Սերոբ ջան մաշւանք քո սիրով:

Մենք քո ընկերներ կուխտենք երդումով
 Որ վեր սար ելնենք մեր գէնք զրահով,
 Երթալ միշտ լեցուն փուշ և տատասկով
 Աղբեր Սերոբ ջան, քո ճանապարհով:



ԴԵՐՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դերոյեան Տիգրան, Մքօ և Արշակ
 Դալիւր ու Բալա եղան նահատակ
 Քաջ երիտասարդ Վասպուրականի
 Դերոյեան Տիգրան, անուն ցանկալի:

Նա իւր խմբի մէջ հրեշտակի նման
 Էնօր սև օրն էր քաջ Դերոյեանի
 Համիդի գօրքեր շրջապատեցին
 Երեք հայ զինուոր սայլով բերեցին:

Բոլոր հայերուս սրտերն այրեցին
 Չար կուսակալի փափագ լցուցին,
 Քաջ երիտասարդներ կուլան ու կողբան.
 Եւ միշտ կը կանչեն Դերոյեան Տիգրան:

Էնա մատիչներ
 Մէջկուրու բաշա
 Պիտի որ լինեն
 Նման Վասակայ:



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր
 Իմ սիրելի թանկագին

Բաժանւում եմ ես քեզանից
Գուցէ կրկին չը դառնամ:

Կանչում է բակի միջին
Ոստոքներս սոսկալի.

Ցանկանում եմ քեզ տալու

Սիրոյ համբոյրս վերջին:

Վեր կաց սիրուն քո ձեռքովդ
Մէջքիս կապէ սուր, նիզակ
Պատերազմի փող հնչեցին
Պիտի մտնեմ գէնքի տակ:

Մնաս բարով իմ սիրելի

Իմ թանկագին բարեկամ

Միշտ աղաչէ Աստուածանից

Որ կենդանի յետ դառնամ:

Հայրենիքի սիրոյ համար

Աշուղ երգիչ եմ դառել

Գերեզմանս մէկ քարի տակ

Դուք պիտ ծածկէք սև հողով:



Ե Ր Գ Ա Չ Գ Ի

Ա՛խ, Վասպուրական, տխուր Հայաստան.

Անթիւ հերոսներ քո մէջ ժողւեցան,

Ահեղ կռի մէջ այսքան դիմացան

Ի սէր ազգութեան նահատակւեցան:

Ո՛հ, բաւ է, հայեր, միշտ այսպէս գերի,
Թողնել հայրենիք, դիմել օտարի,
Օտար սիրում է մեզ իբրև գերի
Մեր հացն ու ջուրը դարձել է լեղի:

Ո՛հ, բաւ է հայեր, մեր անմիութիւն.

Պատիւ չը բերեց մեր հայ ազգութեան

Պէտք է մենք գտնենք միութեան դարման.

Որով ազատենք մեր Մայր-Հայաստան:

Պէտք է միանայ ամբողջ Հայաստան.

Թող տեսնէ Եւրոպան ու Ամերիկան.

Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական

Քանի այսպէս տխուր է Հայաստան:

Վան սիրուն քաղաք իւր գաւառներով

Լցւեցաւ դիակ հարիւր հազարով

Ներկւեցան դաշտեր հայոց արիւնով

Չայն տւեց ամբողջ երկինք աստղերով:

Տեսէք թուրք ազգին ինչ անամօթ է

Քաշեց մեզ վրայ սուր ու թնդանօթ.

Բայց երբ շողացին հայկական սրեր,

Խաւարով պատեց թշնամեաց սրտեր:



ՍԵՐԵՄՁԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջանֆիղայ եմ,
Թափառական տունն չունեմ
Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քունն չունեմ:

Արիւնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջւած հայրենիքի սէրը,
Չը վախեցուց վտանգից:

Ես խաչւեցայ ջանֆիղայի
Սկզբունքով սուրբ մնալ,
Թող իմ արեան կաթիլներով,
Հայ զինւորն էլ դօրանայ:

Մակեդոնեայ իմ եղբայրս
Իմ խաչովս պսակեց,
Եղբայրական սիրուն զէնքով
Գազան Սուլթան խորտակեց:

Ահա հանգիստ հող կմտնեմ,
Յոյսս դուք էք ընկերներ,
Շարունակենք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբոր քամին,
Ինձ տարբերեց ճօճալէն,

Յիշէք Պետրոս Սերեմջեանին,
Թուրքից վրէժ գուալէն:



ԵՐԳ ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ

Ելլող քեօջքից հրաման տւեց դահիճ Սուլթանը,
Մնաք բարև ազնիւ ընկերք, մօտ է կեանքիս վախճանը:

Կարմրագոյն պատանքս, բանտի պատէն մեխել են,
Դիւապաշտպան անգուլթ Փարման գլխիս վերան կախել են:

Թող չթաղէ ինձ թուրքն, թողնէ հողի երեսին,
Թող կատարէ անգուլթ Փարման գազանական հանդէսին:

Ես պաշտել եմ գաղափար, ուխտել եմ զոհւել ազգիս.
Կախաղանս անգուլթ սարսափով, չի փոխիլ սուրբ հոգիս:

Բայց դուք ազնիւ ընկերներ, ձեր սրտի մէջ գերեզման
Թող թաթուլին հանգերձներով, մահս յիշէք մշտական:

Արև լուսնի կարօտով, երկար տարու տանջանքով,
Էրւած, վառւած իմ կեանքին, վերջ դրեց իմ թշնամին:



Ե Ր Գ Ֆ Ի Դ Ա Յ Ի

Մենք անկեղծ զիւոր ենք, առանցի վիճակ
 Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,
 Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
 Գնում ենք բարով, կուշանանք տարով,
 Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ կսպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուաւ «Չան Փիդայ» անուն
 Այդ անւան համաձայն, տեսաւ զօրութիւն,
 Մենք չենք ուզեր ազատ կամաց բռնութիւն,
 Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնել,
 Համողած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն:

Ստամբօլը պիտի լինի արեան ծով,
 Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
 Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,
 Այլից Վարդանը, ձախից Իշխանը,
 Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,
 Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին.
 Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,
 Քաջ Զէյթունը յաղթեց վատ, չար զազանին,
 Կեցցէ Զէյթունը խրոխտ Սասունը կուսակցութիւնը,
 Բաղդաւոր օրեր, պարծանք հայերուն:



ՔԱՉ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին.
 Ազատութեան Դրօշակ.
 Կեցցէ հայրենիք գոչելով,
 Բարձրացրին աղաղակ:

Թնդաց, որոտաց ձայներից
 Ողջ աշխարհքը հայկական,
 Խումբ-խումբ կարգած հայ զաւակներ
 Հասնում էին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)
 Քաջ Անդրանիկը ղեկավար,
 Տալօրիկի լեռներում,
 Շրջում էին անդադար:

Սարսափեցան քիւրդ ցեղերը
 Մինչ պալատը Սուլթանին,
 Հրամայեց շուտ կործանել
 Դիրքերը հայդուկներին:

Ահա անգութ քիւրդ ու տաճիկ,
 Սարսափելի տեսարան.
 Ժամանակ է վրէժ լուծել,
 Գոչեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց հայ քաջերի,
 Բնակավայր դիրքերից

Դայլայլեցան թիւրդ խուժաններ,
Ահռելի գնդակներից:



ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐՇԸ

Հայ երիտասարդներ, շուտ ըշտապեցէք,
Րոպէն շատ թանգ է, առաջ քայլեցէք,
Օտարք հայերին կասեն վախկոտ են,
Քաջութեան Դրօշակը պարգեցէք:

Միթէ մենք Վարդանի ցեղից չենք.
Մէկս հազարի դէմը կը կուենք,
Մի ժամանակ մենք շղթայւած էինք,
Հիմա ազատ ենք և ունինք շատ գէնք:

Օգնութիւն հասան քաջ Խան ու Մուրադ.
Ճիշտ հայու դաւակ ծնունդ անարատ,
Մոկացի Գրիգոր և երկու Արշակ
Գնդակ թափում են կարկուտից արագ:

Քաջ Թումանեանցը, որսորդ Գէորգը
Կազմել պատրաստել են իրանց խմբերը,
Դաշնակցութեան դրօշակի անից
Սարսափահար փախչում էին վատ թուրքերը:



ՈՐՍՈՐԴԻ ԽՄԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ղարսից դուրս եկան, Թաղբուր ժողվեցան,
Նոյն գիւղի մէջը քաջերը կարգով շարեցան
Գիշերւայ ժամի՛ գանգերը ղողանջեցան,
Քաջերը սուրբ հաղորդութիւն ստացան:
Քաջ Թումանեանը խնդրեց թշնամիներին,
Չըլսեցին հերոսին քաջերին զոհեցին:

Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,
Երգեցին միասին սուրբ դրօշակ բռնած,
Քաջ խմբապետ Թումանեանը առաջն էր կանգնած,
Չայն տուեց, եղբայրք զնանք, դէպ առաջ-առաջ:
Քաջ Թումանեանը և այլն:

Շտապով գիշերն գիւղից դուրս եկան,
Արշալոյս բացւեց Բիւրիկ աղբիւրը հասան.
Անպիտան թշնամիները շուտով տեսան,
Երկու կողմերից օգնութեան հասան,
Քաջ Թումանեան և այլն:

Ղալայ Բողազից անշուշտ նկատեցին,
Թշնամիները քաջերին շրջապատեցին.
Օգնող չեղաւ անօգնական մնացին,
Յոյսները կտրեցին այնպէս զոհեցան:
Քաջ Թումանեանը և այլն:

Քաջ Որսորդ Գէորգն չկտրեց յոյսը,
Սուրբ դրօշ պարգեց տասնապետ Պետրոսը.

Գնդակով թաղում էին թշնամեաց յոյսը,
Անվեհեր կուռում էր Քեօսայ հերոսը:
Քաջ թուամանեանը և այլն:

Ծերունի քահանան բռնել էր խաչը,
Թուամանեանից խնդրեց այսպէս Գուրգէն քաջը,
Կրակ բանանք դէպի թշնամու շարքը,
Զի կարելի ասաց խորամիտ քաջը:
Քաջ թուամանեան և այլն:

Թուամանեանը մտածում էր մեր վիճակը,
Ասաց մի բանաք թշնամու վրայ կրակ,
Սոսկալի կըլինի Կովկասի վիճակ,
Թող մեր եղբայրները քննեն մեր վիճակ:
Քաջ թուամանեանը և այլն:

Թուամանեանց ասաց մենք լինինք նահատակ,
Կովկասը թող լինի ազատ համարձակ,
Մնանք մինչևի յաւիտեան յիշատակ,
Միթէ չկամի հայը, որ լայ մեր տանջանք:
Քաջ թուամանեանը և այլն:

Ելէք վրէժ գոչենք անվախ եղբայրներ,
Այն լեռ գոհեցան առիւծի կորիւններ,
Նոցա աղերսանքից լեռը ողբում էր,
Ամօթ է հայեր, թէ մոռնանք այն դիակներ:
Քաջ թուամանեան և այլն:

Գէհ, հայեր վերցնենք սուր և հրացան,
Ուռն գոռանք թշնամուց բարձրաձայն,

Թշնամին թող դողայ երբ լսէ ուռան,
Քիւրդեր ջարդելով մանենք Հայաստան,
Քաջ թուամանեանը և այլն:



ԽԱՆԻ ԵՒ ՄՈՒԻՍՏԻ ԵՐԳԸ

(Զիւլի Սուլթանի եղանակով)

Հասակս քսան տարեկան,
Հրացան տւիք, բարեկամ,
Մենք չենք ուզում ստրկութիւն,
Մեզ խրախուսող մայրեր կան.
Աւանդ, աւանդ, աւանդ:


Ինչո՞ւ ենք կեցեր խաղաղ,
Խմբեր ունենք Պարսկաստան,
Շուտով կանցնենք Տաճկաստան,
Ունիս բազում հերոսներ,
Կուգան քեզ Մայր-Հայաստան:

Հրացանը ուսիս կախեմ,
Ես իմ կեանքս պիտ թանգ ծախեմ,
Կեցցեն կտրիչ հայ հերոսներ,
Թշնամու դէմ միշտ անվախ են.
Աւաղ և այլն:

Սուլթան, գլխիդ դու միշտ վայ բեր
Քանի որ կան Խան, Մուրադներ,

Կեցցեն նրանց թիկնապահները,
Մեր հայրենիքը չէ անտէր:
Աւաղ և այլն:

Միջաջ, երգովդ վրագէ,
Որտեղ ճշմարիտ հոն վագէ,
Թէկուզ հանեն քեզ կախաղան
Ուղղութիւնը դու միշտ պարզէ:
Աւաղ և այլն:



ՏՈՒՐԲԱՆԻ ԵՐԳԸ

Ուրեմն մնաք բարով ազնիւ ընկերներ,
Մեռնեմ ձեր հողուն երջանիկ քաջեր,
Քո հողին մեռնեմ Տաւրքիկ ազատ,
Կեցցես դու յաւէտ Անդրանիկ քո զարդ:

Քաջի համբոյրով տւաւ հրաժեշտ,
Անվեհեր Տուրբախ ընկեր հարազատ,
Րոպէ անցաւ սլացաւ ուժգին,
Վեհ դաշնակցութեան սուրբ անւան արժան:

Երկինքը պատել էր գունդ-գունդ սև ամպեր,
Արեգակ չկար, մութ ու խաւար էր,
Դժւար է գատուել քաջ ընկերներից,
Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռուից տեսնող էլ ու աշիրաթ
Երնէկ կուտային քեաֆուր Դուրբախին:

Ահ ու սարսափով լցւած թուրք միլլաթ,
Կապուաւ աչերից արցունք կը ցայտէր:

Նժոյգ ձի նստած անելի դէմքով,
Յրկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,
Սնուսայ փաշէն լցւած էր դողով,
Թռչում էր ցոլակ, ցայտում էր ցոլակ:

Անհամբեր սրտով Դաշնակի ճիւղեր,
Կտրիչ Դուրբախի գալուն կը սպասեն.
Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:



ԵՐԳ ԿԱՐՆԵՅԻ ԳՍՐԵԳԻՆԻ

Հայաստանի փառք ու պարծանք Դարեգինը կարնեցի.
Թիկունքը լայն, թևերը հաստ. ինքը կորիւն առիւծի:

Հայաստանի վերքին հմուտ, վիրաբոյժ էր խելացի,
Եզբայր լացէք ու ողբացէք այն քաջ հերոսի անձի:

Խմբով ելան Ղալաբուլաղ թշնամու դէմ կուեցին,
Մի քաջ հերոս վիրաւորւած՝ Դարեգինին յանձնեցին:

Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան գաշտից.
Չորս կողմիցն յարձակեցին և քաջին պաշարեցին:

Անիրաւ, վատ թշնամի, դու քաջ Ֆիդայուն լաւ ճանաչէ,
Ուրիշից օգնութիւն փնտռող Եւրոպայից ամաչէ:

Որքան կուզես մեզ հետ կուէ, ամբողջ այդ զօրքերովը,
Վստահ եղիր, որ քեզ յաղթող պիտի լինի քաջ Ֆիդան:

Նա ուխտել էր պէտք է զոհէր իրա կեանքը Դրօշակին,
Եւ ճշտապէս նա նւիրեց իր կեանքը թանգագին:

Կուրծքին չորս գնդակ ստացաւ, վէրք ունեցաւ անագին-
Կրկին հրացանն էր պարպում այն քաջ հերոս Գարեգին:

Միջազին եմ, պէտք է յիշեմ ձեզ նման միշտ քաջերին,
Որ թափեցիք ձեր արիւնը Հայաստանի հողերին:

Ամբողջ հայութիւնը կանգնած է ձեր վրէժը լուծելու,
Քնէք Հայաստանի քաջեր, հանգիստ ձեր ոսկորներուն:



ՍԱՍՈՒՆՅԻՔ

Հայաստանի քաջ Անդրանիկ զաւակներ,
Ողջ հայերուն փառք ու պարծանք Սասունցիք:
Ձեր ոտքերուն մատաղ, սուրբ նահատակներ,
Մեզ յոյս ու ապաւէն մեզ կեանք սասունցիք:

Դէմ քայլէք թշնամուն, անվախ քաջաբար,
Չորս ամիս շարունակ կուելով երկար,
Չոհեցիք ձեր կեանք հայութեան համար,
Տւիք հայրենիքին փրկանք Սասունցիք:

Ամեն մէկդ մէկ-մէկ խուրթեցի Յովնան,
Առիւծի կորիւններ հայրենաց պաշտպան,

Կամ կը մեռնէք կամ կը մեռցնէք նրան,
Ով որ ձեզ տայ վիրաւորանք, սասունցիք:

Բնութեան զաւակներ, անարկու ոյժեր,
Մհերայ թոռներն էք, անարատ անվախ,
Ձեր թափած արիւնը անցնէր բանի տեղ,
Չլինէր անօգուտ, զուր ջանք, Սասունցիք:

Քաջ Վարդանը նահատակեալ բանակով,
Ձեզի դիմաւորում է երկնից պսակով,
Լուսաւորիչը, սուրբ Առնգով-Սահակով,
Ձեզ տալիս է մեծ գովասանք Սասունցիք:



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐՇ

Մեր գործերը, խորհուրդները հայրենիքի սէրն է,
Մեր կայքերը, մեր կեանքերը մեր ազգի նւէրն է,
Ժառանգը պապի և նորա կալւածների տէրն է.
Այսքան տարիներ միշտ նեղութիւն տանողը մենք ենք-
Էլ չենք դիմանար, թշնամու դէմ կանգնողը մենք ենք:

Մեր նախնիքը անկախ հողի մէջ կապրէին ազատ,
Ով որ լսում էր Հայ անունը, դողում էր հաստատ,
Մարդիկը նրանք չեն, արիւնը նոյնն է հարազատ.
Այսքան տարիներ և այլն:

Արիւն ու սուր է և կրակ է մեր Դրօշակը,
Մեռնելու համար վախ չունի մեր քաջ նահատակը,

Առիւծ կը լինի խեղճ հայր, երբ առնէ նիզակը,
Այսքան տարիներ և այլն:

Մենք չենք վախենայ թնդանօթից, եթէ ունինք ջանք,
Մեռնենք կը գնանք արքայութիւն, այնտեղ է լաւ կեանք.
Ինչքան վախեցանք մեռնելուցը, կենդանի մեռանք:
Այսքան տարիներ և այլն:



ԴէՊի ՀԱՅՐԵՆԻՔ

Մեզ պէտք է երգել
Ո՛չ սիրոյ երգեր,
Մեզ պէտք է երգել
Ազատման երգեր:

Դէպի հայրենիք աշխարհ Հայաստան,
Ոգևորելու երգեր հայութեան,
Դողա պիտ գրգռեն մեր անեղ հային,
Դէպի թշնամու բանակ անազին:

Դէհ, հայեր, յառաջ
Դիմենք մենք անվախ,
Յաղթենք թշնամուն,
Փշրենք աջ ու ձախ:

Հայեր, մենք պէտք է փրկենք Հայաստան,
Մեզ օտարը չի լինի պաշտպան,
Հայեր. դէհ, յառաջ, դիմենք Հայաստան.
Փրկենք հայերին, կորչի Տաճկաստան:



*
**

Պիշեր-ցերեկ աշխատում ես անդադար,
Քո խեղճ ազգիդ քաջ պահապան Անդրանիկ,
Կեանքդ ընծայել ես ազգիդ համար
Չեն մոռանայ քեզ յաւիտեան Անդրանիկ:

Քո անունը օր-ըստ-օրէ բարձրացաւ,
Լսեց ձայնդ չար Սուլթանը սարսեցաւ,
Չէնքիդ շառաչիւնը Եւրոպան իմացաւ,
Քեզի գոչեց քաջն Վարդան—Անդրանիկ:

Քաջեր ունես դու քեզ մօտը, քաջ հսկայ,
Առիւծի պէս միշտ կուռում ես անխնայ,
Քո սրտի մէջ ան ու երկիւղ հէջ չկայ,
Տոյց կուտաս գործ դու քաջութեան—Անդրանիկ:

Երկու հազար ոսկով մարդիկ ճարեցին,
Քո դէմ հազար մի թակարդ լարեցին,
Խնն հազար քիւրդեր քեզ պաշարեցին,
Որ հանեն քեզ կախադան—Անդրանիկ:

Քիւրդիստան—Տաճկաստան էր որոտում,
Բարձրացուցիր դրօշակ Սասնոյ լեռներում.
Սիրաթս խնդրում է, ունենաս բազում,
Ազնիւ քաջեր, դու ինքնանշան Անդրանիկ:




ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ

Թող երգէ բլբուլ Մշու դաշտերում,
Թող վարդեր բացւեն Մասնոյ լեռներում,
Թող մեր թշնամիք սարսեն, սարսափեն,
Գազան քիւրդերն ճաքեն, տրաքեն:

Մշու դաշտերը ծաղկունքով բացւած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կուզեն թշնամիք թող գան,
Մասնոյ լեռներէն ի՞նչ պիտի ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,
Թող հայ ազջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռքին շարդէ քիւրդերուն...

Ս. Թ.



ՀԱՅԳՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՅ

Ե՛լ, ֆիդայի, առ զէնքերդ,
Գնա՛ գէպի Իսլամին
Զօրքեր ցրէ՛, բանակ կոտորէ,
Ճաքեցուր չար Սուլթանին:

Յոյց տուր, որ Սերոփ փաշայի,
Յաջորդն ես դու յոյս հայի.
Կոխ, սարսափ, ահ ու վրէժ,
Մահը դարձիր Թիւրքիայի:

Անյաղթ քաջեր հետը առած,
Սմայրոպ կուգայ օգնութեան.
Զուխտակ ղուժրիներն էլ հեռներին.
Շէֆ Անդրանիկ քեզ ղուրբան:

Երկու Արշակներ միասին,
Քաջ տղամարդ Մաշադին,
Ուխտ ու պայմաններով ձեռքին,
Մէկն էլ հօր Մուրադին: »

Ել սարերը արծւի մօտ,
Տաք երեսիդ հով դիպցուր,
Նոր սիստեմի հետ դինամիդ,
Գազան պետին քով դիպցուր:

Գործեր գործիր, որ ամաչէ,
Կռապաշա հայ հարուստը,
Անամօթն գուցէ զգայ,
Թշուառ հայի կորուստը:

Գործեր գործիր հեռու տեղից,
Զարմանալու լուր առնեն,
Ընթերցողներ բացականչեն,
— Շէֆ Անդրանիկ, քեզ մեռնեմ:

ՍԻՓԱՆ



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Ես պարծենալն ինչ է չիտեմ,
Եւ ուսում ալ ես չունեմ.
Միայն թէ քաղցր՝ երգել զիտեմ
Եւ զէնք շարժել սուրբ սրտով:

Բնակարանս է անտառներ,
Անկողինս է կանաչներ,
Իմ լապտերս է պարզ լուսնեակ,
Եւ ինձ ուրախացնողներն են ձնձղուկներ:

Իմ եղբայրս է իմ մաւզէր,
Եւ իմ զարդս են փամփուշաներ,
Իմ սիրելիս իմ սարերս են,
Եւ իմ ընկերս իմ մօսին:



ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Խնուսից գալող հայ զինւորները քաջ,
Արեան գաշտից եկած և պարտաճանաչ,
Հին-հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,
Քաջի պէս վազեցին թշնամու առաջ:

Մօտ թւով տառն ու չորս և իրանք անվախ,
Ղեկավար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ,
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին զիրք:

Թաթօն ընտրեց Մօսոյ, Շապուհ և Մխիկ,
Անւանւեցան սրանք խմբեր թռուցիկ,
Խարփուխ թաղի դիրքերումը միշտ անքուն,
Այրեցին, ջարդեցին, անգութ Մօլլի տուն:

Վրաստանի շքեղ Թիֆլիս քաղաքը,
Չէր ճանաչում կանխաւ իրա որդոցը,
Երբ նրանք Մուղնի թաղում կանգնեցան,
Այն ժամանակ հայերն ուրախացան:

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զոհ տւին,
Անգութ թշնամեացը շուտով յաղթեցին,
Կլինի ազատութեան գրաւական,
Նրանք պատիւ բերին հայ Դաշնակցութեան:



Թ Ո Ղ

Թող ինչպէս ընկել եմ, այնպէս վեր կենամ,
Դիմակաւոր ընկեր խրատդ պէտք չէ,
Թող իմ հօրս, պապուս ճամբովը գնամ,
Հաւատ ունիմ, քո նոր հաւատդ պէտք չէ:

Այն գունով կրմեռնիմ, ինչով որ ծնայ.
Չեռք մի տար իմ վէրքիս, թող այնպէս մնայ,
Մի կտրատիր ծառիս ճիւղերը, գնա,
Վնասատու կոպիտ մկրատդ պէտք չէ:

Միայն դու Ձիւանուն եղբայր անուանէ,
 Միւս ծրագիրներդ մտքիցդ հանէ,
 Իմ փլիլած տունս ինձ բաւական է,
 Քեզ լինի, բարեկամ, պալատդ պէտք չէ:



ԹԻՖԼԻՉԻ ԵՐԳԸ

Ուրախ դւարթ դու Թիֆլիզ,
 Ի՞նչու այդպէս ես տխուր.
 Վրաստանի մայր քաղաք,
 Մտածում ես դու ի գուր:

Ո՛չ մի ազգ քեզի չօգնեց,
 Բացի հայերիցը դատ,
 Չորս կողմից կրակ տւին,
 Հայ քաջերը հարագատ:

Հնչակն ու քաջ դաշնակը,
 Չեռք-ձեռքի տւած կուում են,
 Թուրքերի վատ արիւնը,
 Լինճ գառուցին իսկապէս:

Չորս կողմից մեր քաջերը,
 Պաշարեցին դիրքերը,
 Հրացանի որոտից,
 Մոլորվեցան թուրքերը:

Բորչալուի թուրքերը,
 Եդիգարովից դրդւած,

Թալանի յոյսով եկան,
 Վերագարձան շատ տրտում:

Չորս կողմից հրահանգ կուտար,
 Քաջ Դուրբախը դեկավար,
 Չեռքին ունէր հրացան,
 Շրջում էր անվախ, անդադար:

Դաշնակցութեան քաջերը,
 Մահը առած աւերը,
 Վրայ տուին Մէյդանին,
 Թուրք չթողին կենդանի:

Ժայռոտ Խարփուխի վերայ,
 Կանգնած դաշնակցութեանը,
 Պատրաստած հայերը,
 Այրեցին Մօլլի տունը:

Պաշտպանեցին Թիֆլիզը,
 Դաշնակցութեան քաջերը,
 Սարսափեցուց թուրքերին,
 Մաւղէրի գնդակները:

Թուրքերաց դիակները,
 Լցւեցան փողոցները,
 — Ասին փախչենք Թիֆլիզից,
 Մեզ վերջ կուտան հայերը:

Միջազ, ուխտէ առ Աստուած,
 Հայը լինի ազատուած,
 Հայ հերոսը միշտ անվախ,
 Ազատ դուրս գայ յաղթական:



* *

Թող կորչեն տաճիկները
Հայաստանի սուրբ հողէն,
Իսլամական անարգ լուծը
Թող ջնջւի Հայաստանէն:

Բաւական է որքան նորա,
Հայի արիւնը ծծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով
Պետութիւն պաշտպանեցին:

Հայի հացը հայի ջուր
Բաւական է տաճիկն ուտէ,
Եւ գարշելի պիղծ բերանով,
Հայութիւնը անարագէ:

Աչքերի տեղ աչքեր հանենք,
Ատամի տեղ ատամ,
Մեր մէկ հաւը գողացողին,
Ամբողջ տունը թալանենք:



Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ-արագ,
Տեսանք, որ քաջ Խանի խումբն էր,
Զինւած էին բոլոր նրանք:

Կեանքերը ազգին նւիրած,
Կտրիճ Խանը առաջ ընկած.
Գնում էին Տաճկաց սահման,
Թուշում էին ինչպէս կրակ:

Հրացանները ուսերին.
Դրօշակը պարզել էին.
Գնում էին ուրախ, գլարթ.
Ազատութիւն երգում էին:

Մութ անտառից անցնում էին.
Ամեն մէկը առիւծ էին.
Նժոյգ ձիաներին նստած.
Մերկ սուրերը քաշել էին:

Երբ քաջ Խանը ելաւ Բասեն.
Թնդանօթներ արձակեցին.
Հայ քաջերի մօսիններից
Գնդակները գողգողացին:

Երբ քաջ Խանը հրահանգ կուտար.
— Արիք առիւծներ իմ քաջ.
Մտան թշնամու խիտ շարքեր.
Կոտորեցին ձախ ու աջ:

Երբ քաջ Խանը ուռայ գոռաց,
Թշնամիքը մոլորւեցան,
Հազարաւոր տաճիկների,
Գլուխները ջախջախւեցան:

Ձերմ եռանդով կուում էին,
Սրտերումը կար շատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր.
Ձէին կարող կանգնել առաջ:

Կեցցէ Սանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու զիշեր կուեց,
Աչքերիցը քունը կտրեց:

Հայաստանի հողի վերայ,
Քաջը թափեց իւր արիւնը,
Միճագ, յիշէ չըմոռանաս,
Կտրիչ Սանի քաջ անուն:



* *

Հայաստանից եկած զինւոր,
Պատմէ ինձի հայրենիքից,
Անդրանիկի զինւորները
Վրէժ լուծում են քիւրդերից:

— Ուրախ եղիր, դու հայ տղայ,
Ունիս պաշտպան քաջ Անդրանիկ,
Մուրադի պէս հոտոտ ծաղիկ,
Էլ ի՞նչ է ուզում հայրենիք:

Վիթխարի պէս կտրիչ Սեպուհ,
Պողպատի պէս բազուկները,

Կայծակի պէս կտրիճները,
Էլ ի՞նչ են ուզում հայերը:

Գէորգ Չաւուշն ու Հրայրը,
Հազարաց զօրքի դէմ կանգնած,
Թուրքաց զօրքին փախցուցին Վան,
Էլ ի՞նչ է ուզում Եւրոպան:

Երկու առիւծ Պօղոս, Տիգրան,
Չեռքերը բռնած հրացան, ||
Թշնամուն արին ցիր ու ցան,
Արդեօք պատիւ չէ Դաշնակցութեան:

Մոկացին ու Աւետիսը,
Սարսափ ձգեն Թիւրքեստանը,
Կոտորեցին ողջ բանակը,
Ազատւած չէ Հայաստանը:

Ֆէրհատ, Արշակն ու Մէշէզին,
Կուում էին միշտ անխախտ,
Թշնամուն զարկին մեծ փլաս,
Ուրախ չէս դու երգիչ Միջագ:



ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Հայեր, ջարդենք քիւրդ ու տաճիկ,
Մեր պապերի վրէժը լուծենք,
Նրանց կայքը մեզ դարձնենք,
Սուրբ հաւատը բարձրացնենք:

Զարթիր, զարթիր, քաջ Կորկոտեան,
 Զարթիր հրացանդ բռնէ,
 Քիւրդի աչքերն անվախ փորենք,
 Ատամները փշրենք,
 Լեզուն ծոծրակից դուրս հանենք,
 Արտերին արճիճը հալենք:
 Զարթիր և այլն:

Տաճկաց զինարանը մտնենք,
 Այնպիք Հայոց ցրւենք,
 Թնդանօթներն էլ դուրս քաշենք,
 Պատերազմի դաշտը մղենք:
 Զարթիր և այլն:

Ամբոցների վրայ վազենք,
 Անխիղճ տաճկաց զօրքը ցրենք,
 Հայաստանի սուրբ դրօշակը,
 Միջնաբերդը բարձրացընենք:
 Զարթիր և այլն:

Ո՛վ Կարնեցի դու Կորկոտեան,
 Ցանկայ հայրենիքիդ բարի,
 Նրա անւան գո՞հ եղիր դու,
 Հանգիւր մտիւր գերեզման:
 Զարթիր և այլն:



ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ

Գուշմանները չորս կողմից շրջապատել են մեզ,
 Կարօտ ենք օգնութեան, մեռնում ենք անպաշտպան
 Լողում ենք անյատակ արեան ծովերի մէջ,
 Երկինքն էլ կարծես մեզնից ձեռք վեր առած է:

Թշնամին վառօդ է ծխում,
 Բռնել է արեգակի դէմ,
 Մնացել ենք. զթութիւն, օգնութիւն,
 Փրկութիւն մի տեղից չկայ մեզ:

Միւսը, միւսը քաջ Մուրադ,
 Պահէ քեզի անվհատ,
 Արտասուքդ ծով եղաւ,
 Ազդում է զինւորին.
 Ի սէր Աստուծոյ լաց մի լինիր,
 Հառաչանքդ է սրտառուչ:

Անտօք, Անտօք, պաշտպանիր քաջերիդ,
 Ամենից յոյս կտրած, յոյս դրինք քո ժայռերին,
 Թուշունները բոյներից, եղջիւրները անտաւից,
 Հրացանների ձայներից փախչում էին դէպ դաշտ:

Անգութ շէյխերը արիւնարբու քրդերով,
 Երգւելով եկել էին, որ մեր անմեղ կոյս, հարսանց,
 Արիւնովը լողանան, դրդւած պետ Սուլթանից:

Էրզրում աւերակ, Բաղէշն էր փլստակ.
 Թուրքասէր պուլանխցին, չէր տեսնի մեր վիճակ.

Այրում էին կրակով, մաշում են մեր սիրտը,
Օգնութիւն, օգնութիւն, քանդում են Սասունը:

Իսկ անօգնական Սասունցիք,
Չունին փախուստի ճանապարհ,
Ո՛հ մատնւած, սովից, առանց հաց,
Հալածւած, տանջւած, գէնք ձեռքին կռում են:

Ելի՛ր, ելի՛ր քար արիւն, Մուրադ առիւծի կորիւն,
Հագար ամօթ մեր հայերին, որ նորա էլ,
Թուրքերի պէս չգթացին Սասունին.
Չոհեցին մի պատառ հացի:



Ե Ր Գ

Առանց վախի առանց ահի,
Քաջերի բուն Սասնայ սար,
Քեզնից հրդեհ կը պատահի,
Կրակի բուն Սասնայ սար:

Եկաւ ողջ Արաբըստանը,
Որ նւաճէ Հայաստանը,
Քեզ չըյաղթեց Չինգիզ խանը,
Կեցար կանգուն Սասնայ սար:

Հայաստանը երբ կանաչեց,
Թշնամին տեսաւ ամաչեց.

Եւրոպան ըեզ լաւ ճանաչեց,
Առար անուն Սասնայ սար:

Քիւրդի, թուրքի դահիճները,
Թունաւորող կտրիճները.
Սարի միջի կտրիճները
Դու և Զէյթուն, Սասնայ սար:

Վերացաւ խաւար գիշերը,
Փայլեց երկնային լապտերը,
Կսպասեն Տաճկա-հայերը,
Քեզնից գարուն, Սասնայ սար:



Ե Ր Գ

Սուրբ Դաշնակցութեան անկեղծ զինւորներ,
Բաւէ, համբերէք անձնազոհ քաջեր,
Հասել է ժամը չար Սուլթանի անկմանը,
Միացած ուժով դուրս գանք դէպի դաշտ:

Բանապետութեան դահը տապալենք,
Մեզ ճնշողներին մաս-մաս կտաորենք,
Դոչենք մենք կեցցէ ազատ երկրում,
Փշրենք շղթաներ բռնութեան զրկում:

Մահ, ազատութիւն ուխտենք, եղբայրներ,
Որտեղ կայ ճնշւած, թոչենք մենք այնտեղ,
Դրօշակ պարզենք սուրբ Դաշնակցութեան.
Մինչև որ փրկենք թշառ Հայաստան:

Ամեն տեղ ճնշում, լաց ու աղաղակ,
Դարերով ճնշած ստրուկ հայ ազգը,
Սրբութեամբ պահենք Հայկայ անունը,
Թափենք մեր վերջին կաթիլ արիւնը:



ՆԱԻՐՈՒՋԻ ԵՐԳ.

Դաշնակցութեան քաջ խմբերը, Պերնա գիւղում միացան,
Խմբապետ էր քաջ Նաւրուզը, բաժանեց քաջաց հրացան.
Նրդեցին դրօշակին, քահանայով միասին,
Շարժեցաւ խումբը յառաջ, երկու սահմանից անցաւ:

Արշալոյսը նոր բացուում էր, տեսան թշնամեաց զօրքեր,
Քաջ Նաւրուզը հրահանգ տւեց—յառաջ եկէք տասնեակներ,
Ամեն մէկս հազարի դէմ պիտի կուենք, եղբայրներ,
Կարնեցի քաջ Դերենիկին ասաւ.—բռնէ լաւ զիրքեր:

Դերենիկն ու Արտաշէսը, ինչպէս կորիւն եղբայրներ,
Բասէն դաշտու մէջը լցրին թշնամու շատ դիակներ,
Քաջ Սերոբը և իւր որդիք, ինչպէս ազնիւ էակներ,
Նահատակւան քաջերն այնտեղ մեզի մնաց վրէժներ:

Հայաստանի հողի վերայ դրօշակ ծածանւեցաւ,
Նրեսուն ժամ ճակատամարտ հազարաց դէմ կուեցաւ,
Հայ քաջերի գնդակներից, շատ տաճիկ գլորեցաւ,
Նս Միճագս կրպարձենամ ունեմ փամփուշտ հրացան:



Ե Ր Գ

Ձմեռն անցկացաւ, գարուն էր արդէն,
Ծաղկունք բացւեցան, բլբուլք թող երգեն,
Հայոց քաջերի ժամ է հարսանեաց,
Ահեղ պատերազմի ձայնը որոտաց:

Ձէնքի շաչիւնէն թնդում է երկիր,
Հերոս, հայրենեաց օգնութեան հասիր:

Ծաղկեցան այգիք, ծաղկեցան դաշտեր,
Վրէժ գոչեցէք, անվախ քաջ հայեր,
Ժայռեր թող դողան, քարեր պատուեն,
Իսկ դուք քիւրդ ու տաճիկ, ուր պէտք է փախչէք:

Ձէնքի շաչիւնէն և այլն:

Քանի դարերից ծանր շղթաներ,
Այժմ կը սիրեն մեր հայ հերոսներ,
Իսկ դուք դաւաճանք ուր պէտք է փախչէք,
Որ հայ հերոսի սրից ազատուէք:

Ձէնքի շաչիւնէն և այլն:



Ե Ր Գ

Սև ամպերը Հայոց երկիրնը պատեցին,
Պայծառ արևն ու լուսին խաւարեցին,

Աստղերն ընկան երկնքից երկիր, չքացան,
Նստեր անտէր, արիւն կուլայ Հայաստան:

Կայծակը խփեց, այրեց սրբավայրերը,
Հայապատկան գեղատեսիլ դաշտերը,
Սրծաթափայլ գետերն ամենն սևացան,
Նստեր անտէր կուլայ Հայաստան:

Ովկիանոսն ալ արեկոծւած կատաղեց,
Կլանում է խղճուկ հային, ո՛ւր փախչի,
Ո՛չ յոյս մնաց, ո՛չ ապաստան, ո՛չ պաշտպան,
Նստեր անտէր արիւն կուլայ Հայաստան:

Էլ մենք ի՛նչու արդեօք կասենք թէ հայ ենք,
Որ ամեն ժամ թշնամեաց դէմ չկուկնք,
Պէտք է կուել կամ չքանայ հայութիւն,
Կամ ազատել գերութիւնից Հայաստան:



Ե Ր Գ

Նպատակիս գէթ մի մասը կատարւէր,
Նարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ.
Նար արի, տուն արի, շուտ արի բլբուլ,
Իմ սարերի գիւլն եմ:

Ախ իմ դարդս շատացել է չեմ կարող,
Նարալի բլբուլ եմ,

Դարդի ձեռքից ո՛ր շուրն ընկնեմ ազատեմ,
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

Ախ, անբախտ հայդուկիս Տէր իմ, դու խղճայ,
Նարալի բլբուլ եմ,
Մի թողնիր թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ.
Նար արի, տուն արի, շուտ արի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ: »



Ե Ր Գ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,
Նրկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր,
Կաթնանըման իւր լուսով: (Կրկնել):

Նա նայում էր, լռիկ մնջիկ,
Իբրև մի կոյս գէպի Վան,
Նորա աչքին երևում էր,
Բիւր ցաւալի տեսարան, (Կրկնել):

Նա տեսնում էր անթիւ քրդեր,
Առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են,
Աւերում են Հայաստան (Կրկնել):

Եւ կարծես թէ երկնքիցը,
 Ասում էր այդ լուռ վկան.
 Վրայ հասիր հայ ազգասէր,
 Չեռքից գնաց Հայաստան (կրկ.):



ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴՐԵՍ...

Դու գո՞վ խնդրես մայր իմ անուշ,
 Ե՛կ, մի դողար, մօտեցիր հոս,
 Անլաց աչօք դիտէ զորդիդ,
 Ու իւր վէրքերն արիւնահոս:

Թուրքաց մայրեր թող լան ու դուն՝
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ,
 Կակուղ ձեռքով փայփայելով,
 Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
 Իբրև հրեշտակ նւագելով:

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն՝
 Ուրախ լուրեր...

«Նորեկ որդւոյս կենացն արև
 Չեզի համար փայլի հայեր»,
 Այսպէս յայնժամ դու կերգէիր,
 Օրօրոցիս նստեալ քովեր:

Անոնց համար չիջաւ, ու դուն՝
 Ուրախ լուրեր...

Վերջին համբոյր մ՝ տամ քեզ, մայրիկ,
 Հատուցանես դայն սիրելւոյս,
 Վերջին անգամ գրկեմ մեր հող
 Ուր արդ կիջնիմ ի ծոցն անլոյս.

Խաչ մ՝ տնկէ վրաս, ու դուն՝
 Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:



Ե Ր Ա Չ

Ես լսեցի մի անոյշ ձայն, —
 Իմ ձերացած մօր մօտ էր.
 Փայլեց նշոյլ ուրախութեան,
 Բայց ափսոս որ երազ էր:

Կարկաչահոս սողիւր այնտեղ,
 Թաւալում էր մարգարիտ.
 Նա յստակ էր որպէս բիւրեղ,
 Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի,
 Յիշեց մանկութեանս օրեր. —
 Մօրս համբոյրն ես զգացի, —
 Ա՛խ, ափսոս որ երազ էր:

Կուրծքին սեղսեց կարօտագին,
 Աչքերս սրբեց— շատ թաց էր,
 Բայց արտասուք գնում էին,
 Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:



Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ե Ր Գ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
(վերջին խօսքը միշտ կրկնել).

Դու հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ:

Ձը կայ ծնող, չը կան որդիք, քոյր, եղբայր,
Ձիք ամուսին, որով ցաւերս մեղմանան.

Օտար երկիր, արե, աստղեր և լուսին,
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թւին:

Բնակարանս՝ տխուր պանդուկ օտարաց,
Օդս օտար, շուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն.
Ո՞ւր գաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն:

Սակայն ունեմ քովս Յիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ. նա իմս է, սիրէ զիս:



Ե Ր Գ

Ահա բացւեցաւ մի նոր ասպարէզ.
Խմբւեցէք զինւորք Սասուն երթալու,
Մայր-Հայաստանը սպասում է մեզ.
Անգութ քիւրդի զէմ կռիւ մղելու:

Ձէքեր առնենք կուրի դաշտ վագենք,
Անվեհեր կանգնենք չար բռնութեան դէմ,
Հայկական դրօշ ձեռքներս առած,
Անգութ Սուլթանին հասցնենք հարւած:

Մարտնչենք այնպէս, ինչպէս Սասունցիք.
Եւ այդ շնորհով փրկենք Հայաստան,
Խրախոյս առէք, ով խմբապետներ,
Վրէժ են գոչում մեր նահապաղներ:

Հրաւէր կը կարգան, ով քաջ հայդուկներ,
Ջարդել աներկիւղ թշնամու դիրքեր,
Արդէն փայլում է հայի դրօշակներ,
Մօսին հրացան ահռելի գնդակներ:



Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Հայրենիքէս հեռացեր եմ,
Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ.
Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
Տխուր-տրտում—քուն չունեմ:

Սարէն կուգաք նախշուն հաւքեր,
Ախ, իմ մօրս տեսեր չէք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Ախրը, բարև բերեր չէք:

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձէն դիպան ու անցան.

Պապակ—սրտիս, փափագ—սրտիս
Անխօս դիպան ու անցան:

Ախ, քու տեսքին, անուշ լեզւին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
Երնէկ, երնէկ, երազ լինեմ,
Թռնեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կըպնիմ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան . . .



* * *

Սիրեցի,—եարբս տարան,
Եարայ տւին ու տարան,
—էս ինչ գուլում աշխարհ է,
Պոկեցին սիրտս ու տարան:

Ցաւս խորն է, ճար չկայ.
Ճար կայ, սխ ճարող չը կայ.
—էս ինչ գուլում աշխարհէ,
Սրտացաւ ընկեր չը կայ . . .

Լաւ օրերը գնացին,
Ափսոս ասին, գնացին,
—էս ինչ գուլում աշխարհ է,
Սև դարդերը մնացին . . .



* * *

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր . . .

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտէր կուլամ էս.
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ էս . . .

Ախ, եարս ինձի հանեց սրտէն,
Անճար թողեց ու գնաց . . .
Սրտիս սաւղէն—խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գնաց . . .

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր . . .



Ե Ր Գ

Երբ հեռացայ հայրենիքէս՝ դառայ ես մի խելագար,
Մի մանաւոր վէրք ունէի, նա մեծացաւ եղաւ սար,

Չունիմ հարազատ բարեկամ բոլորին եղել եմ վատ,
Խնդրում եմ քեզանից, Արարիչ, դու արա վերքիս ճար:

Իմ մտերիմ լաւ ընկերս բոլորովին խոյս տւեց,
Ինձի երեխայ կարծելով մի աննշան յոյս տւեց,
Աւելացուց իմ վերքերը խոր արմատից բոյս տւեց
Փռւթան ինձ. օգնութեան հասիր. սիրելի հարազատ մայր:

Ապերախտից ինչ կսպասես, նա չի տալիս քեզ օգուտ
Նա իրա գրպանն է քաշում, որովհետեւ է անգութ,
Տարիներով քաղցած մնան թշնամուն ինչո՞ւն է փոյթ.
Մի խափւիր նրանցից. սիրելիս, քեզ կը զարնեն քարէ քար:

Մնացել եմ խեղճ ու շւար, չեմ կարող օգնել ազգիս,
Ոյժ ու զօրութիւնը զնաց երկաթի նման բազկիս,
Գիշեր, ցերեկ, արիւն-արցունք թափում եմ ես, Միջազիս
Թագաւորաց թագաւորը ցաւերը ինձանից տար:



Ե Ր Գ

Հեռացիր ինձանից, օրիորդ,
Էլ չեմ քեզի համակրում:
— Պատասխանիր ինչո՞ւ, պարոն,
Վիրաւորում ես անտեղի:

Կարդացիր զրկած նամակս.
Գրել էի հայ տառերով,

Պատասխանիր դու ինձ
Օտար լեզուով ու բարբառով:

Միթէ դու ուրախ չես, որ ես.
Քանի մի լեզուով կարգալ գիտեմ.
Բարձր ուսում եմ ստացել
Չը կարծես՝ թէ ես անմիտ եմ:

Ուսումնական կասեմ այն ժամ
Երբ կը լինես դո՞ւ հայի մօտ.
Խօսէ քո մայրենի լեզուդ
Որ ասեմ քեզ հայ օրիորդ:

Կեցցես դու հայ կտրիճ տղայ
Մեղաւոր եմ ներէ ինձ,
Էլ չեմ խօսի օտար լեզու
Պիտի խօսեմ միշտ հայերէն:

Հիմա եղար դու երջանիկ,
Դառար հայ ազգի պիտանի
Միջազին եմ հիմա կասեմ,
Նորոգում է մեր խեղճ Անին:



Շ Ո Ւ Շ Ի Ի Ե Ր Գ Ը

Պատերազմը սկսեցաւ անվախ Շուշի քաղաքում,
Հայ քաջերը կրակ տւին իրանց ամուր գիրքերից,
Սարսափեցաւ թուրք խուժանը Իշխանի խրոխտ ձայնից,
Ո՛չ մի մարդ չէր կարող ազատել առիւծի ճանկերից:

Քաջ Իշխան և Մարգար քաջերը պարտաճանաչ.
 Դաշնակցութեան դրօշակը տանում էին միշտ յառաջ,
 Ամեն կողմից խումբ-խումբ հայեր հասնում էին օգնութեան,
 Յետ մղեցին թուրք խուժանին զինւորները Դաշնակցութեան:

Քաջ Իշխանը և Մարգարը պատերազմի սիրահար,
 Հայ քաջերի առաջն ընկած շրջում էին անդադար.
 Հազարաւոր զնդակի դէմ կանգնած էին քաջի պէս,
 Մեր թշնամեաց արիւնը լիճ էր դառել իսկապէս:

Կեցցէ Շուշայ քաջերը. թող պարծենան հայերը.
 Երկինք-գետինք ձայն էր տալիս թնդացուց մեր ունմբերը,
 Միջագն եմ ձեր, խնդրում եմ կապեցէք սէր, միութիւն.
 Սիրեցէք սուր, զէնք. փամփուշտ, որ գտնէք դուք փրկութիւն:



Ե Ր Գ

Որոնց որ անկեղծ սիրեցի, նա եղաւ ինձ թշնամի,
 Աշխատեցի բարիք անել, նա եղաւ ինձ թշնամի,
 Լսելով այդ վատութիւնը, մի բոպէն եղաւ տարի,
 Հեռացիր այդպէս մարդուց, որ սրտում չկայ բարի,
 Մոլորւած ոչխարի նման մնացի ապառաժ քարի:

Բախտը ինձի որոնեց, որ պիտի չարչարւիմ այն տարի,
 Թէ սիրես անկեղծ ընկեր, աշխարհի պայծառը դու ես,
 Կունենաս երջանիկ օրեր, Աստուծոյ գառը դու ես,

Անշարժելի, անխախտելի, ինչպէս բարձր սարը գու ես,
 Յուսահատւած հիւանդներուն դեղն ու ջուրը գու ես,
 Մոլորւած և այլն:

Կորուցի փառքս ու պատիւս, որոնում եմ չկայ,
 Քանի որ սէրութիւն չունէք, մեր աշխատանքը գիփ ջուրն են,
 Միջագ, դու ճանապարհդ ուղղէ միթէ քո աչքերդ քոս են,
 Մոլորւած և այլն:



ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Ա՛խ, հարենիք քեզնից զրկւած,
 Օտար աշխարհ եմ գնում.
 Միրուն հողդ. սիրած, գգւած,
 Միրտս միջումդ եմ թողնում:

Ես իմ կամքով չեմ հեռանում,
 Ա՛խ, պաշտելի Հայաստան.
 Չար ոսոխն է ինձ ուղարկում
 Դէպի օտար Ռուսաստան:

Դէ՛հ, կաց բարև, իմ հարենիք,
 Իմ մանկութեան օրօրան,
 Ես չեմ մոռնայ քո երախտիք,
 Ազգիս պարծանք, Հայաստան:

Ո՛ւր էլ գնամ. ինչ տեղ լինեմ,
 Լաւ թէ վատ պայմաններում,

Գարձեալ թևեր կառնեմ թռչելու,
Վե՛ն ցաւերը անպատում:

Ճշմարտութեամբ ես կը զինւեմ.
Դէպ արձանը բռնութեան.
Եւ այդ լուսով կը խորտակեմ.
Նախատինքը գիտութեան:

Շղթայակապ երբ դուրս բերին,
Մեռէլի բանտից, որ դուրս տանեն
Դէպի հիւսիս մութ սարերէն,
Սառնամանեաց մէջը տանջեն:

Տեսնողները գուցէ ասեն.
Տեղնէ գող աւազակին.
Գուցէ շատերն էլ լաւ գիտեն.
Որ գո՛նեմ աւազակին:

Ես ո՛չ գող եմ, ո՛չ աւազակ.
Հափշտակող քինաբար.
Եւ ո՛չ մատնիչ ինչպէս Վասակ
Ուրացող վե՛ն գաղափար:

Տներ քանդող աւազակի
Դէմը կռւող մի գո՛ն եմ,
Արեւ տւող հայրենիքի
Յոյս տարածող զինուոր եմ



ԳԷՈՐԴ. ՉԱԻՈՒՇԻ ԵՐԿԸ

Թուրք լաւ անունդ Չաւուշ
Դէմքդ սիրուն. լեզուդ անուշ.
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար.
Թշնամեաց դարձուցիր ապուշ.
Սասուն է քո ապաստան.
Վրէժ է քո դատաստան:

Հայոց համար սպարապետ.
Անդրանիկին ընկեր վարպետ,
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ կարապետ
Սասուն է քո և այլն:

Կոտորեցիր քանիցս վաշտ.
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս թուրքաց դէմը,
Մինչև վերջը մնացիր անհաշտ:
Սասուն է քո և այլն:

Անվախ հերոս ես ճշտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս,
Քաջաց քաջն ես Գէորդ սարդար
Վարդանի տիպ ես իսկապէս:
Սասուն է քո և այլն:



ԵՐԳ ԱԼԱԳԵԱԶԻ

Սև մութ ամպեր ճակտիդ դիզան
Դուժման հագար, Ալագեազ,
Մրտուժս արև հէջ չի ծագում.
Սիրտս էլ դուժման, Ալագեազ:

Զառ փէշերդ անցայ, տեսայ,
Առանց դարդի մարդ չկայ,
Է՛հ, իմ դարդս, ջան Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէջ չկայ:

Է՛յ, Մանտաշի մարմանդ հովեր.
Իմ դարդս որ ձերն եղնէր.
Ձեր նուշ-անուշ ծաղկանց հոտը
Թոյնի, տօթի կը փոխէր:

Է՛յ Մանտաշի նախշուն հաւքեր.
Իմ դարդս որ ձերն էղնէր
Ձեր էդ գառվառ, խաս փետուրներ
Կը սենային քանց գիշեր:

Է՛յ, վախ կոտորան իմ թևերս.
Ընկայ գիրկդ, Ալագեազ,
Ա՛խ, մեծ սրտիդ սղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագեազ:



ԵՐԳ ՍՈՆԱԿԻ

Սիրուն սոխակս գիտեմ արթուն ես,
Կարօտ եմ ձայնիդ. որտեղ երգում ես,
Աւանդ որտեղ երգում ես (կրկն.):

Մշտապէս կասեմ, սիրունիկ վարդ ես,
Էլ չեմ սպասիր ո՛ւր է իմ զարդը.
Աւանդ, ո՛ւր է իմ զարդը (կրկն.):

Ինձ մոռացար, ինձ ուրացար
Ո՞րտեղ սլացար.
Թողիր ինձի անտէր, անճար,
Ո՞րտեղ հեռացար:

Վարդի թուփերին ագռաւն է կանգնել,
Որ նրա տեղը ապառաժ, քարէ (կրկն.):
Ինքը ծերացած, ձագերը փոքրիկ,
Յետոյ կը մեծանան մայրերին կօզնեն (կրկն.):

Աւանդ որտեղ ես, արի. աւանդ քո սիրտն է բարի.
Աւանդ ընկերներ ճարի:
Ինձ մոռացար, ինձ ուրացար (կրկն.):

Սոխակ խօսքերս սրտումդ գրէ,
Քո հայրենիքիդ կեանքդ նւիրէ,
Աւանդ կեանքդ նւիրէ (կրկն.):

Այն պարտէզը, որ քեզ կը պատկանի
Թողեր ես անտէր, քանի մէկ տարի.

Աւանդ մի սգար պարտէզ, աւանդ քեզ կուգայ հանդէս,
 Աւանդ չես մնար այդպէս:
 Ինձ մոռացար և այլն:

Սոխակը դարձաւ դէպի հայրենիք,
 Տեսաւ իւր տեղը նստած վայրենիք,
 Աւանդ նստած վայրենիք,
 Զարդեց, փշրեց ագռաւի բոյնը
 Վերանորոգեց հայրենի բոյնը (կրկն.)

Վարդը հասաւ նպատակին.
 Իւր կարօտն առաւ.
 Ագռաւն ընկաւ նախանձը սրտին.
 Շուտափոյթ մեռաւ:



* *

Ո՛վ սեպակատար Արարատ մեծ սար,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես,
 Դաշտ Արարատեան բարութեան ամբար,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես:

Ծաղկանցով չքնաղ սիրուն Արագած,
 Դու ծաղկի հոտով ինձ արիւր հարբած,
 Զորս կողմդ նայեմ աղբիւր ու ջուր ես,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես:

Ո՛վ շքեղագարդ դու սիրուն Անի,
 Դու մայրաքաղաք հայոց պիտանի,

Պատմիր դու ինձի շինողդ սիրես,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես:

Այգի անտառով լի երկիր կովկաս,
 Մինչի երբ այլոց ձեռքի տակ մնաս,
 Հայոց սեփական բնիկ երկիրն ես,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես:

Ո՛վ Տաճկաստանի Փոքր ու Մեծ Հայք,
 Տիգրան, Արամի երկիրը և կայք,
 Տաճիկն է տիրում տես հիմա ուր ես,
 Ո՛ւմն էիր առաջ և հիմա ումն ես:

Ա՛խ թէ հայերս իրար կսիրենք,
 Տես ձեզի դարձեալ ինչպէս կտիրենք,
 Թէ զաւակացդ զէնքով կզինես,
 Մերն էիր առաջ և էլի մերն ես:



* *

Պարզիր աղբիւր. պարզիր քեզնից ջուր տանեմ.
 Պարզիր, պարզիր, բէկի տղին ջուր տանեմ:

Աղբիւր, գիտե՛ս քիւրդը մեզի ինչ կանէ,
 Կը կողոպտէ, կը չարչարէ, կսպանէ:

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
 Մեր սեփական թագաւորներ ունէինք:

Կան ու փառքից, ազատ կեանքից զրկեցինք
 Արիւնարբու թշնամու ձեռք մատնեցինք:

Դէ՛հ, շո՛ւտ պարզիր, բէկի տղին շուր տանիմ,
Պարզիր. պարզիր. խան-Մուրադին շուր տանիմ:



ԲԱԳՈՒԻ ԵՐԳԸ

Ձի ցամաքում աչքիս արտասուքը
Երբ յիշում եմ Բագուայ վատ դրութիւնը.
Տեսէ՞ք ինչքան թևաւորւան թուրքերը
Նրանց ուժէ՞ր տալիս՞ աղիեւի հարստութիւնը:

Երբ լսեցի Բագուայ կոտորածները,
Պատեցին սրտիս մէջ ցաւը ու վերքերը.
Նախջևանն էլ վերցրեց այն պատկերը.
Բագուայ քաշած հայերի գերութիւնը:

Քաջ Վարդանի դարն է այսօր մեր օրը.
Հայերի վրայ են կատաղել բոլորը.
Երկնքին ինչ պատասխան տայ հզօրը,
Տաճկա-Պարսկա—Ռուս Նոր ընկերութիւնը:

Թշնամիներին պարսկի շոր հագցրած,
Ձեռքերին մօսիններ վերցրած.
Փողոցներումը հայի դիակները վար ընկած,
Ո՛վ էր պատճառը այսպէս անխղճութեանը:

Ո՛վ որ այս վատ օրերին պատճառ դառաւ,
Նա էր եղել հայերի արեան ծարաւ,
Այն արիւնն էլ իսկոյն նրան զոհ տարաւ,
Կեցցէ մեր հայ Դաշնակցութիւնը:

Կրակ տւին Ազամովների տունը,
Ջնջեցին աշխարհի երեսից Լալայի անունը.
Փողոցներում հոսում է երեսանց արիւնը.
Ձէր պատկանում թուրքի, հայի սէրութեանը:

Դաշնակցական խումբը հասաւ օգնութեան.
Յոյց էր տալիս քաջութիւնը մարդկութեան.
Մերն էր կեանքը զոհ էր վերջին յաւիտեան.
Երիտասարդ չէր սպասում ծերութեան:

Բագուից, Երևանից, Նախիջևանից լուր.
Մեզի հասաւ սիրտս դարձաւ տխուր,
Աբղուլ-Բադին ալ մեզ վրայ հանեց սուր.
Ձի պատկանի իսկ նրա ծերութեանը:



ՁԷՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Խնդացէք վե՛հ բնութեան զարթեր.
Նախշուն քնքուշ ծաղիկներ.
Ուրախացէ՞ք, սիրուն վարդեր,
Պայծառ երկնից աստղիկներ:

Անառիկ Ձէյթուն
Իւր անյաղթ քաջերով,
Վրէժ է գոչում
Անվախ առիւծներով:

Երկինքը մեր գլխին պարզեց
Լացը փոխեց հրճուանքի

Ստրուկ հայը արդէն ցնցուեց,
Չեռքը մեկնեց նա զէնքի,
Անառիկ և այլն:

Խորհրդաւոր քնից զարթնեց,
Հայ պատանին քրտնաթոր.
Աչքը բացեց և ինչ տեսաւ
Նա, քաջերին չինաւոր:
Անառիկ և այլն:

Ամեն մի հայ պարտք համարեց,
Իւր սուրբ դատը պաշտպանել,
Ազատ, անկախ, ու անվեհեր,
Թշնամեաց դէմ մարտնչել:
Անառիկ և այլն:




ՄՇԵՅՈՒ ԵՐԳԸ

Չուր երբ մնանք զէլու դռներ,
Երթամ գտնիմ զիմ խեղճ գառներ.
Սուքեմ զիմ պախչայիս ծառներ.
Զարթիր, լաօ, մոնիմ քզի:

Խեղճ Մշէցին մեռաւ լալով
Օտար երկիրներ մանգալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթիր, լաօ, մոնիմ քեզ:

Գրող տանի քուրդ Հասոյին.
Որ չսպաննէր ջօջ Ափօյին.
Ի լաճ մացեր Արաբոյին.
Զարթիր, լաօ, մոնիմ քզի:

Դէն իրիշկէ. գալողն սրն ա,
Քաջ Արաբօ բաղդաւորն ա,
Կարմիր երիցանց զինուոր նա,
Զարթիլ, լաօ, մեռնիմ քզի:



ՍԵՐՈՒՅԻ ԵՐԳԸ

Առիւծն ելաւ Սուլուխ գիւղէն.
Ինքն և իրան ջուխտակ տղէն.
Թող խապարի գայ, հայու գաւակ.
Քեզ կը նուիրեմ առանց պսակ:

Առիւծն ելաւ, ձագերն էլ հետ.
Ղրկեցին Մըլմուրազ գեղ,
Յիսուս ըլի փաշայի հետ.
Պատերազմելու թուրքի հետ.
Թող խապար ի գայ և այլն:

Անդրէյ եղբայր, գացէք բարով,
Ես ուխտել եմ հարիւր տարով,
Նամակ գրիմ էլի արի
Հայոց քաջեր չեն դադարի:
Թող խապար գայ և այլն:

Լուր տւեցին Մշու փաշին,
 Փաշէն կանչեց թեջի պաշին.
 Բոլոր աշխարհ թեւ կը քաշիմ
 Ի գան Սուլուխ Սերոբ տեսնին:
 Անդրէյ եղբայր և այլն:

Թագաւորը խիստ հրամայեց,
 Զօրքեր զրկեց Սերոբ տանին.
 Սերոբ կանչեց Ամրամանին.
 Կեցցես Սերոբ, մեր փաշէն է:
 Թող խապար և այլն:



ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Քաջ Անդրանիկի այրող Կայծակի.
 Առիւծ Մուրադի ընկերն ես, Մուշեղ.
 Հայոց անձնուէր, կտրիչ խմբակի.
 Փայլուն հերոսը, լապտերն ես, Մուշեղ:

Հայրենիքդ և լեզուդ քաղցր, անուշ,
 Ինքդ դեռահաս, ոյժդ անպակաս,
 Պապիգ Վարդանայ պատկերն ես, Մուշեղ:

Թողած տուն ու տեղ, հայրենիք, ծնող,
 Վսեմ, սուրբ գործին, սրտանց հեռեղ,

Զինավարժութեան հմուտ ու յաջող,
 Կրակն էլ մտնես, դուրս կելլես յաղթող:

Անյաղթ քաջի պէս դուրս կուգաս հանդէս,
 Կուռւմ ես անվախ, խփում աջ ու ձախ.
 Մասնոյ դիւցազն, հերոս ես, Մուշեղ:

Բերդաքաղաքում հրաշք գործեցիր.
 Մարտնչող խմբին նորից կեանք տւիր.
 Մեծ ու փոքրից սիրւած, անխտիր.
 Ժողովրդի ճուտ, ինքդ քաջ ու ժիր:
 Թաթարներու մօտ չեղար ամօթով.
 Տէրը տայ քեզ կեանք. դու հայի պարծանք,
 Գո՛հ ենք Արարչից, որ մերն ես Մուշեղ

Լևոն ու Մարգար. Շամիր, քաջ Իշխան.
 Հայ պատւի համար նահատակ եղան.
 Երանի նրանց քաջի պէս մեռան,,
 Դու էլ ստացար ծնկէդ մէկ նշան.
 Բայց չը մահացար, դեռ կապրիս երկար.
 Քեզ շատ են յարգում քաջերի շարքում
 Բարձր տեղ ունիս, միշտ վերն ես, Մուշեղ:

Քաջն Վարդանի, հերոս Իշխանի.
 Դու քաջ զինակից զինւոր պիտանի,
 Արցախ գաւառում Եղար անւանի.
 Պատւական մօրդ հազար երանի
 Ծնել է իստակ քեզ նման գաւակ.
 Անխարդախ գործիչ.
 Լուս ու մունջ, անջինջ

Խմիր մաքուր կաթ
Դու սերն ես, Մուշեղ:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ պաշտելի քաղցր հայրենիք.
Հողիդ, ջրիդ ես մատաղ,
Քանի տարիք քեզնից հեռի.
Կարօտակէզ քաշեմ ան...

Հալով աչքերս կուրացաւ,
Զրկեցայ քո քաղցր տեսքից.
Լեզուս բերնումս չորացաւ.
Քո սուրբ անունն երգելիս:

Ա՛խ. տօնելի սուրբ հայրենիք.
Երկիր բարի պողպարեր.
Անուն քաղցրիկ և սիրելի.
Դրախտ, եզեմ ցանկալի:

Քեզնից հեռի չունեմ հանգիստ,
Սուգ է ինձի ամեն ժամ.
Քունը աչքիցս հեռացել է.
Ինձ չարչարում յարածամ:

Ի՛նչ կարող է ինձ ուրախցնել,
Երբ քեզանից կամ հեռի.
Թէև փառքեր հարստութիւն.
Բայց ինձ համար ատելի:

Ա՛խ, լինելու է ով իմ Ասուած
Բարի, քաղցրիկ և զթած.
Յուսով եմ որ կը հասցնես,
Ինձ տեսութեան հայրենեաց:

Կեանքիս թելը կտրելու մօտ
Հասնում է իմ վերջին ժամ,
Հայրենեացս մեռնել կարօտ,
Կաղաչեմ մի տար Ասուած:

Երբ լցւի իմ բաղձանաց վերջ.
Տեսնեմ իմ սէր հայրենեաց,
Տեսնեմ ծնողք ու սիրելիք,
Ապա հոգիս հանգիստ տամ:



Հ Ա Մ Ա Ջ Ս Ս Պ Ի Ե Ր Գ Ը

Ծագեց արև ազատութեան.
Փախէք ամպեր երկնքից.
Համազասպը իր խմբովը
Կուզայ Խաչէն գաւառից:

Գալիս էին բազմաթիւ զօրքով.
Ազիգեօզալ Բէգեանը.
Յանկարծ ընկաւ Ասկեարանը.
Հերոսների ուռկանը:

Թուրք խուժանը սարսափահար.
 Փախչում էին. իսկ զլխակոր,
 Թողնելով իրանց յետևից,
 Դիակներ հարիւրաւոր:

Մաչէն, գաւառը սրբեցիր
 Թարաքեամայ թուրք ցեղից
 Ժողովրդին հանգիստ տւիր,
 Թուրք չի անցնում այնտեղից:

Աշխարհիս տէր Դաշնակցութիւն,
 Քաջեր ունիս սրտալի.
 Ամբողջ աշխարհ հռչակեցաւ
 Համագասպը պանծալի:



Ո Ւ Խ Տ Ի Ր

Նւէր իմ քոյր Ս-ին

Փափկասէր քոյրիկ, տես հայրենիքում,
 Անթիւ գոհերի արիւն է բուրում,
 Բայց տես, կիսաւեր գիւղերի միջից
 Անվախ հայդուկը վրէժ է գոչում:

Անվեհեր է նա, տաք կուր շեմքում.
 Ուխտել է անխաղտ իր ամբողջ կեանքում

Ծծել արիւնը չար դուշմանների
 Լուծել վրէժը նահատակների:

Պճնասէր քոյրիկ, տես հայդուկունին
 Նոյնպէս քաջաբար սեղմած իր կուրծքին.
 Փրկող հրացանը դէպի թշնամին.
 Գնդակ թափելով վրէժ է գոչում:

Կուռում են, երգում կախարդիչ ձայնով.
 Երգը ռազմիկի, քաղցր հնչիւնով.
 Որոնց աչերում կարծես բոցավառ.
 Կայծեր են փայլում հայրենավառ:

Եւ խորհրդաւոր այդ վսեմ ժամին
 Գոռում են այսպէս «վայել չէ հային
 Սրանից յետոյ ապրել աշխարհում.
 Անմուռնչ գերի բռնութեան ծոցում:

Քոյր ու եղբայր են միասին ուխտած.
 Զէնքով վճռել են սրբել անարգւած
 Բախար՝ լկըւող անբախտ քոյրերի.
 Եւ արտասուքը՝ լացող մայրերի:

Իսկ դու մինչև երբ նստած մունջ լուիկ
 Հագիդ նուրբ թաւիչ, կրծքիդ վարդ գողտրիկ.
 Խոր-ծով վշտերին անփոյթ, անզգայ
 Ի՞նչ ես երագում, բախտ թէ ապագայ:

Փայլուն ապագայ, կամ բախտ երջանիկ,
 Ձես տեսնիլ երբէք. նազելի քոյրիկ,
 Գիացիր մեզնից դեռ արիւնտտ ներկան
 Ձո՞ն է պահանջում զո՞ն նւիրական:

Ես այդ զոհերի մաքուր արիւնով,
 Վաղուց եմ ուխտել փրկարար գէնքով
 Փշրել դարևոր շղթան բռնութեան.
 Գրկել պսակը՝ վեհ ազատութեան:

Դո՛ւ էլ ուխտիր. ու հէնց այսօրից
 Թուլութեան փոշին թափ տո՛ւր քեզանից.
 Եւ թաւիշի տեղ վարդի փոխարէն
 Կրծքիդ պինդ սեղմիր անգութ հրագէն:

Ու մի ազից օր, քոյրիկ, երբ լսես,
 Որ ես գնում եմ կուլի վառ հանդէս.
 Եւ կամ կախաղան ինձ առաջնորդեն.
 Անարգ դահիճներ, բիրտ արիւնալէզ:

Շտապիր, անվախ, եկ կուլի դաշտում,
 Կապիր վէրքերս ուրախ անարտում.
 Կամ կախաղանից, քոյր իմ, Սաթենիկ.
 Գոչենք միասին, կեցցէ հայրենիք:

ԽՄՕ.



* *

Ոչ ոք մեզ այնպէս չէ հարւածեր խիստ մահացու վէրքերով
 Յատուկ մենք ենք մեր թշնամին թոյն, աւերիչ ձեռքերով
 Նախանձ, ամբարիշտ բամբասող, գինին ձեռքերուս ազգասէր
 Զւարճանում ենք թուրքերու անպատուաբեր երգերով:

Մենք իրար սիրել չը գիտենք եղբայրական ջերմ սիրով
 Թշնամի ենք մեր լաւ մարդկանց հալածասէր չար սրտով:

Ազատ, անկախ ապրել բառը հասկանում ենք վառ մտքով
 Ազատութեան հակառակ ենք անմիաբան բարքերով:

Մենք միասին գործել չգիտենք, կուսակցական ենք ծայրահեղ,
 Հին նախարարների ոգին մեր մէջ եռում է անհեղ,
 Հայրենիքից ընթանում է անուելի արեան հեղեղ.
 Կոյր ենք, չենք տեսնում ապրում ենք հին ստրուկի վարքերով:

Ազգային պատմութեան փոխան, Շահ-Իսմայիլ, Այսմաւուրը
 Աւետարանից խօսողին կասենք Փարմասիօն կամ թուրք
 Մայրաքաղաք պաշտող հայ գիտնականն է իդիալից զուրկ
 Գաւառներում չկայ խրատող ու ապրում են ազէտ մտքերով:

Մեր թշնամիք նեղ սրտով մեզ հրէայ են ասել
 Բայց սխալ են, հրէաներ գիտեն իրար շատ սիրել
 Մենք ընդհակառակն իրարու հարստահարող ու զրկող
 Մատնիչ ենք մեկգմեկու թուրքին հաճելի կրքերով:

Օտարը մեղաւոր չէ, իրար վնաս պատճառողը մենք ենք
 Մէկ մէկու ջան ասած բառը չոռի ճառողը մենք ենք.
 Մեզ մորթող քիւրդ ու թուրքերն չեն, վաճարողը մենք ենք
 Այդ գիտնալով գործում ենք սև գրոշ ձեռք բերելու յոյսերով:

Զուռնիք տէրսէր, և ուսուցիչ լաւ վեհափառ հովապետ
 Որ կուլինք դարաւոր մեզ վէրք պատճառող ախտերի հետ,
 Գաւառներում կին ու աղջիկ ապրում են անգրագէտ.
 Անգրագէտներից մարդիկ ծնւում են փթած իղձերով:

Երգիչ «Սօ ջաս» չեմ տեսած հայ հարուստներից լաւ բան
 Դեռ չի մեռած կտակն անեն օգուտ խղճուկ հայութեան:

Գառնում են երեցփոխաններ, գողնում, զեղծում անպայման,
Մեռնելիս մի սուտ կտակով թաղում են մեծ փառքերով:



ՄՇԵՑՈՒ ԳԱՆԳԱՏԸ

Տղոր մացիր. տէր իմ, գուժով նայիր մեզ.
Մինչ երբ թողնիս նկուն տխուր հայ ազգիս
Հինգ հարիւր տարի է կաղանչենք քեզի
Չարիւր մէկ օգնութիւն տխուր հայ ազգիս:

Քեզ պաշտեցինք մեզ շղթայով փակեցիր.
Մեր բերդերն ու ամրոցները փակեցիր
Կարծես զերութեան հետ մեզ պսակեցիր
Տւիր ստրկութիւն տխուր հայ ազգիս:

Առար քաջ Տրդատի ձեռքէն թագ ու թուր
Ենելով սարն ասաւ աշխարհն է իզուր.
Այն օրից մինչ այժմ խեղճ հայն է տխուր.
Տւիր թոյլ բնութիւն թշւառ հայ ազգիս:

Առ միշտ արիւր Մերուժանին սիրական
Պարսկաց զօրքեր ուղարկեցիր Հայաստան
Չարեանդի մօտը մեծ հարւած տւաւ
Անիրաւ չար Շապուհն խղճուկ հայ ազգիս:

Խեղճ Խօջան եմ երկար ողբալով լացինք
Մեր սխալը յետոյ, յետոյ զգացինք.

Թողինք ցնորք. աղօթք զէնքի զիմեցինք.
Գուցէ տաս յարութիւն խղճուկ հայ ազգին:

Հայի սրտին սուր են զարկեր
Արեան գիտեր են դարձուցեր.
Չկայ բժիշկ, որ բժշկէ
Ինձ մահ տանող խոր խոցերէն:

Հայ տէրտէրին մինչ երբ լսենք,
«Սոնարհեց՛, ապրեցո՛ւներ»
Մինչ երբ փակեն մեր ականջներ.
Չեր անկատար ողորմեա՛ներ:

Հայի սուրը անա վեց դար.
Փոխւել, դառել էաչ ու խաչվառ
Այդ խաչերով պիտի փրկենք
Գերի ընկած եղբայր ու մայր:

Ո՛վ դու թշւառ շահամու Արմէն.
Դու չես լինի քաջ ազգասէր.
Մինչ երբ արբես արբեցուցես
Գինիներով լի բաժակներ:

Հայոց բերդեր ու ամրոցներ,
Վաղուց եղան կործան աւեր.
Հայոց դրօշակ Մասեաց
Այլ փակւած են չեն փողփողեր:



ԵՐԵՔ ՉԱՅՆ

Երեք ձայն կայ շատ է սիրում ականջս.
Ոսկիի ձայնը, սիրունի ձայն ջրի ձայն,
Այդ երեքն են մշտական իմ պահանջս
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Ջուրը կեանք է, ոսկին գորաւոր, յաղթող,
Սիրունից կը լսես կենսատու ներքող,
Արդեօք մարդ կայ այդ երեքը չը սիրող,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Գրպանդ ունենաս ոսկով լի քսակ,
Մօտդ մի չքնաղ կոյս, դիմացդ գետակ,
Իրեքին էլ լսես զիշեր ժամանակ,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:



ԻՐԱԻՈՒՆՔ

Թող ես մշակ լինեմ, դու եղիր իշխան.
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի,
Թէ կուզես հաշտ ապրենք, բարի հարևան,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,
Իմ պարտքն է աշխատեմ, ոչ ոքի չը տամ:

Թէ կուզես իրար հետ մնանք բարեկամ,
Պատւիս ու կրօնիս հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,
Պատիւ չեղած տեղը հաց չը կայ առատ,
Կը ցանկանաս որ չանեմ քեզանից զանգատ,
Պատւիս ու կրօնիս հացիս մի դիպչի:

Բնաւ չեմ նախանձի քու ճոխ սեղանին,
Քու ոսկուն, արծաթին, քո գանձարանին,
Այս երեքով կապրի աշղ-Ջիւանին,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:



ՏԻՖԷԻԹ

Ազգ իմ, որքան նկուէ մնաս,
Սիրտս քեզնից չի գատւի,
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզնից չի գատւի:

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,
Հարագատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ զրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզնից չի գատւի:

Քեզանով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,

Ծոցիդ մէջը հանգչեմ մայրիկ,
Սիրտս քեզնից չի գաուի:

Զիւանին եմ, քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրտս քեզնից չի գաուի:



* * *

Ով իմ Հայաստան, անուշ բուրաստան,
Կարօտ եմ քեզի անթառամ ծաղիկ,
Դու ես յոյս տւող բոլոր մարդկերանց
Անունով կոչւած, ով իմ անուշիկ:

Իրաւ եմ տկար որ չեմ քեզ յարմար,
Ով իմ բարերար, պայծառ Անդրանիկ:


Կերթայ անունդ երկրրէ երկիր
Դու որ այդպէս ես անուշ հայրենիք.
Ո՛հ զաւակներդ որք ու անտէր են
Չունենք մենք օգնող նրանց պահապան:

Միշտ կը փնտուենք քեզ, չունենք ասպարէզ,
Ունենք մենք պարտէզ կարօտ ենք նրան:

Հայրենեաց երկիր յիշեալ ախոյեան.
Առանց քեզ կուլան, ուր ես քաջ Վարդան:

Պատերազմի մէջ ով յառաջադէմ,
Դու ես թշնամուն տւող պատասխան:

Մեռար, գնացիր, մեզ ուր թողուցիր,
Քեզ չի մոռանայ թշւառ, խեղճ Սօջան:



* * *

Սաւար եմ ես ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չեմ սիրի քեզ, չեմ սիրի քեզ,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբախտ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.
Եղբայրագուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրէք ինձ մի սիրէք.
Ես շատ ու շատ փոխւել եմ.
Առ թաշկինակդ աչերդ սրբէ.
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնաս բարև իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այդ արասուքը ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:

*
* *

Արթուն մտքիս հանդարտ քայլեր,
Չէ պէտք կապանք ձեռքերիս,
Կուզեմ ման գալ Հայոց լեռներ,
Այնեղ գտնել իմ պապիս:

Բազուկներիս կապ ու կապանք
Չէ պէտք սրտիս դեռահաս,
Կուզեմ զրկել մի արձագանք.
Հայ զաւակաց մանկահաս:

Իմ մարմնիս բանտ ու շղթայ,
Այլ է քաղցր Հայրենիք
Սակայն Մասիս թող պարծենայ
Մէկ օր կանէ հարսանիք:

Հայ քաջերին թող չը մոռանայ
Այդ օրն ուրախութեան տօն
Չմոռանայ Սէզն Սիփանայ
Երբ ես հասնիմ ի Տարսոն:



ԵՐԳ ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆՅԻ

Քանտին գոներն էին եօթը ելքերով.
Շուրջն էր պատած ամուր երկաթ քարերով,
Չեռս, ոտս շղթայ զարկին այս պահուն,
Վիճակումս այսպէս ինկաւ կախաղան:

Պարան պարանոցը լեռ քաշւեց
Գոչեց Արամ տրանջալով կախաղան.
Փամացոյցը ընծայ տարէք իմ մօրս,
Եւ մի ասէք Արամ կախւեց իմ մօրս:

Անունս իմ քաջ Արամ
Մահանունս Արամեան
Խմբապետ եմ խուճը կը կազմեմ,
Հայ ազգեան:



*
* *

Խեղճ պրոկւած հաւ ես դառել գեղեցիկ ալիւրի մէյդան
Ողջ Թիֆլիսի պարէն տւող բարիքների շտեմարան,
Ո՛ւր են կշտիդ խանութները աւերակ դարձել են չկան
Չարամիտ թուրքերու ձեռքով կրակի բոցի զոհ եղան:

Մէջի եղած ապրանքները գողացան, բոլորը տարան
Չեռքերը ծոցը դրած խեղճ տէրերը արիւն կուլան,
Մարդասպանութեան չար հողին Գանձակից մինչ Թիֆլիս
հասաւ,

Առանց պատերի համեմատ թուրքերի հողուն մէջ մտաւ:

Կովկասի մալրաքաղաքը չազատւեց հնար չեղաւ,
Ձինեց կտրիչ զաւակները պատերազմի շորեր հագած.
Ով որ կուի ընդունակ էր շտապեց ձեռքը զէնք առաւ.
Հարուստ աղքատ կանչում էին տւէք մեզ սուր հրացան:

Նոյեմբերի 22-ին երեկոյեան ժամի ութին
 Մէշիթի կամուրջի մօտը աղմուկ բարձրացաւ ահագին
 Հաւաքարից դէպի քաղաք եկող երիտասարդ հային
 Թուրքերը ուզեցան սպանել կրակ բացին վրայ տւին:

Հայերի վրայ յարձակողը՝ թուրքերը եղան առաջին
 Գարշելի թունաւոր մաղձը կրկին հանեցին երևան,
 Շարունակեց պատերազմը, այստեղից սկսեց բանը
 Երկու կողմից ամպի նման գոռաց անգութ հրացանը:

Պատերազմի ասպարէզ դարցրեց ալրի մէյդանը
 Քաղաքը անտէր էր մնացել ժողովուրդն էր իւր պաշտպանը
 Անտարբեր նայում էր զօրքը ապշած բաց արած բերանը,
 Գործի մէջ խառնելու չկար վերեկից հրամանը:

Դաշնակցական և Հնչակեան քաջերը ձեռք ձեռքի տւած
 կուռում էին առիւծի պէս, կանչում էին հայի Ասուած
 Զինւած ֆէդէրալիստները խսկապէս եկան օգնութեան
 Հայերու հետ եղբօր նման կուր ասպարէզ մտան:

Սօցիալ-Դեմօկրատները խաղաղութեան ուղին բռնած,
 Երկու կողմին բարեկամ աշխատում էին հաշտութեան:
 Վերջը զօրքն էլ միջամտեց պատերազմին եղաւ ներկայ
 Ասաւ հայերին յետ կանգնեցէք պէտք է մենք կուենք հիմա:

Գլխաւորի հրամանով գուրս եկաւ մի սպայ
 կարծում եմ Թիֆլիզեան գնդից զօրք վերցրեց մի ըօտա,
 Բարձրացաւ մեր հայ քաջերու ունեցած գիրքերու վրայ,
 Մի քանի յարձակում գործեց թշնամուն բռնելով նշան:

Բօրչալից դէսից դէնից հաւաքւած յիմարները
 կուշտ եկան անօթի փախան Թիֆլիսը չաւեց պաշար
 Բաւական մեծ գոհեր տւին. իղձերը մնաց անկատար
 կորան սև ու սուգը մտան թելադրող, մարդիկը չար:

Համարեա Թիֆլիսի մէջ հայ կայ հարիւր հազար.
 Իսկապէս հայաշատ տեղը, ոչ Գանձակը և ոչ Նախիջևանը
 Զիւան խնդրէ ջարդ ու փշուր լինի չարի օրօրոցը
 Չար մարդը չը մեծացնէ չարի առաջնորդ որդոցը:

Յունաց եկեղեցու կայքին դիպաւ չարի վատ հնոցը,
 Լափեց բոլոր խանութները մինչ երկինք բարձրացաւ բոցը
 Հրդէհն էլ բան չը թողեց Անին դարձաւ մեր փողոցը,
 Զգիտեմ որտեղ պիտի երգեմ ոչ տեղ մնաց ոչ սրճարան:



ՄԻՀՐԱՆԻ ԵՐԳԸ

Խմբապետ քաջ Միհրանը,
 Սրտումն ունէր ուխտ ու պահանջ
 Պատրաստեց իւր քաջ խմբերը
 Արշաւեց Տաճկաց սահման:

Անցան սահմանը ազատ,
 Անվախ պատրաստեցին գէնքերը,
 Ամեն կողմից երևացին
 Զինւած քիւրդաց խմբերը:

Հրացանների որոտը
 Սկսեց երկու կողմից

Գլորուում էր քիւրդ ու տաճիկ
Ասատուրի գնդակից:

Քաջ Միհրանըն ու Ասատուր
Առաջ անցան կուելով
Լեռներ, ձորեր ներկեցան
Թուրքաց, քիւրդաց արիւնով:

Օգնութեան հասան տաճկաց զօրքերը
Արիւնաբու քիւրդերուն
Երկու կողմից կրակ տւին
Հայ քաջերի դիրքերուն:

Աստղն ու լուսին միացան,
Կռիւ տուին եւանդուն
Նահատակած հայ քաջերից
Ասատուրն ու Արաբոն:

Նա ծնել էր Վասպուրական
Կուզէր գնալ Հայաստան
Ասատուրի քաջ անունը
Միճագ յիշեր անպայման:



ՂԱԶԱՆԵՅԻ ՀԱՅ ԱՂԶԻԿԸ

Փրփրագէզ գետի յուզւող ալիքներ
Դեռ նոր են ներկել հայի արիւնով
Զայրոյթով լցւած թունոտ բողբոջներ
Գրկած գնում են դառն աղբիւրով:

Ահարկու ժայռեր գետի եզերքին
Սուգի պար բռնած խոժոռած դէմքով.
Դիտում են անվերջ մռայլ երկնքին
Զուլում են կանչում խոր հառաչելով:

Այնտեղ մօտակայ փոքրիկ պուրակում
Քնութեան երգիչ սոխակը սիրուն
Ողբակէզ ձայնով իր դայլայլիկում
Գուժում է տխուր արիւնոտ գարուն:

Եւ մի հայ աղջիկ, չքնաղ հերարձակ,
Վառ ծաղիկներից փունջեր գեղեցիկ
Քաղում է դաշտում ազատ, համարձակ
Հայդուկի երգ է երգում անուշիկ:

Նորա շրթունքից ցայտող երգերը
Կռիւ են մղում հայդուկի սիրտը
Շանթող սրտավառ նրա երգերը
Յուզեցին իմ մէջ էլ թախծալի վիշտը:

Եւ զիլ, զիլ ձայնը ինչպէս մի դաշնակ
Դիւթեց իմ սիրտը անբաժան կերպով
Իսկ սուր հայեացքը, այրող մի նիզակ
Խրւեց իմ կրծքում սիրային կապով:

Դիմեցի նրան զգայուն սրտով
Մի փունջ խնդրեցի իմ ետրի համար
Եւ ուրախ դէմքով ուրախ ժպիտով
Բաց արի սրտիս դարդերն անհամար:

— Ի՞նչ ես դու խօսում այդպէս անյարմար.
Տւեց պատասխան նա ձայնով մեղմիկ
Ծաղկեփունջ խնդրում դու եարիդ համար,
Այդ չի կատարիլ ո՛չ մի հայ աղջիկ:

Չես լսում արդեօք, որ հայրենիքում
Քանի հայ քոյրեր, քանի հայ մայրեր
Գերել է թուրքը, իր պիղծ հարեմում
Վրէժ են կանչում նորա անվեհեր:

Երբ կը լուծես վրէժը նրանց
Անարգ դուշմանից սրով մահաբեր.
Ահա այն ատեն սիրով և սրտանց
Ծաղկեփունջի տեղ կը տամ քեզ համբոյր:
ԽԾՕ



ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը ընկած, կործան
Չի կտրւում նորա կական.
Չկայ մէկը լինի պաշտպան
Բայց միշտ կասենք որ մենք հայ ենք:

Վանքեր աւեր, բերդեր քանդած,
Սուրբ տաճարներ հողով ծածկած
Հայի խղճուկ որդիք ցրւած
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Սուրբ հարց երգոց դեռ նոցանում
Քոռ բուն իրա վայն է կանչում
Աւեր բերդեր, տաճարք ողբում
Բայց միշտ կասենք որ մենք հայ ենք:

Նախնեաց շիրիմք հաւսար հողին
Չկան Վարդան և Գարեգին
Ոչ հետևողք նոցա շաւղին
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Ամայի են դարձել դաշտեր.
Ցամաքել յատակ վճիտ ջրեր.
Անգութ տաճիկ նոցա տիրեր
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Քաղցից հայեր միշտ կոտորւին
Սով է տիրում Հայաստանին
Չուզենք օգնել խղճուկ հային
Լոկ խօսքերով կասենք հայ ենք:

Կը վայելէ ուղիղ հային
Այսպէս թողնել իւր հայրենին
Չըհոգալ թշուա օրւայ մասին
Դատարկ խօսքով կրկնել հայ ենք:

Երբ ըստփենք նորա ցաւեր.
Երբ փարատենք նորա վշտեր.
Քրդի ձեռքից հայն ազատենք,
Ապա ասենք, թէ մենք հայ ենք:



ՄՕՐՍ ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Տւեց համբոյր վերջին անգամ,
Իմ հարազատ ծնող մայր,
Ես սւր գնամ, որտեղ ման գամ,
Բանտ է աշխարհն ինձ համար:

Ես այն օրից թափառում եմ.

Անօթևան թռչնի պէս.

Օտար երկրումը տանջւում եմ,

Կեանքս արդէն եղաւ կէս:

Դեռ եմ դրել ես տուն ու տեղ,

Ընտանեկան յարկի տակ,

Թափառում եմ անտուն անտէր,

Անհիւրընկալ երկնի տակ:

ԱՐՇԱՆՈՅՄ



* *

Հայ ազգի որդիք, էլի՛ համբերինք
Թշնամու արած մինչև երբ ներենք,
Դանակի ծայրը հասաւ ոսկորին,
Վտանգը մօտ է մեր մայր աթուին:

Նա դաւաճան է, ով այս օրերին
Կուրծքը դէմ չի տայ թշնամու սրին,
Լաւ է վաղ մեռնել, քան այսպէս ապրել,
Եւ կամ թշնամուն հիմքից կործանել:

Չարքաշ այս կեանքը այլևս պէտք չէ.

Մեր թշնամին էլ, որ չի ամաչէ.

Չազդեց Եւրոպին մեր լաց ու հառաջ

Մնում է դուրս գալ թշնամու առաջ:

Ահա տեսնում ենք թուրքը կոյր գործիք

Աւերել կուղէ տուն տեղ հայրենիք,

Չէ՛ որ Վարդանի մենք արիւնիցն ենք.

Էլ ինչ լուենք, ինչո՞ւ համբերենք:

Կոչնակ դու հնչէ երկրի ծայր ի ծայր.

Հայեր իմանան վազեն Աւարայր.

Այնտեղ մենք պարզենք դրօշն հայկական.

Տարածենք լուրը սուրբ ազատութեան:



ԱՆԻՐԱԻ ՉԿՆՈՐՍԸ

Անիրաւ վատ ձկնորսը, մտաւ գետը որսալու.

Պաշարելով ամբողջ գետը, ուզեց բոլոր պարպելու.

Բայց չէր տեսած գետի փին, մի ահագին վիշապ կար

Երբ որ տեսաւ քաջ վիշապին, սկսեց նա փախչելու:

Այդ ձկները շատ քիչ էին, չունէին տէր տիրեկան
Մնացել էին խեղճ ու մոլոր, յուսահատւած անպաշտպան
Յանկարծակի մի լոյս ծագեց, վիշապն հասաւ օգնութեան,
Երկնքիցը կրակ թափեց, չարժանացաւ կուլ տալուն:

Այդ խեղճերի սքավայրը կոտորեցին քանդեցին
Բազում մարդով մօտեցան աւերեցին վառեցին
Չէին կարծում թէ յետ տալ կայ գողացան ու թալանեցին
Կէս ճամբայ մնացին չը կարողացան տանելու:

Երգիչ Սիրաթ քաջ վիշապը դար ու կէս շարունակ
Տարաւ յաղթութեան պսակը, թափելով անշէջ կրակ
Նրանով էր մեր գործերն յանկարծ դարձաւ աջողակ
Այնուհետև սկսեց մէկիկ մէկիկ յետ տալու:



* * *

Արագն եկաւ լափին տալով
ժեռ քարերի ափին տալով
Որտեղ թաղեմ ես իմ դարդը
Չոր գլուխս տափին տալով:

Այ իմ Արագ շուրդ վարար
Սիրուն եարիս եարաբ տեսնոր,
Ես չը հասա իմ մուրազին
Արագ եարաբ կարօտս առար:

Ամպերն ընկան Մասիս սարին
Կարօտ մնացի ես իմ եարին.
Աստուած սիրես էրևած սրտիս
Ջուղաբ բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ
Արտասուքս թանաք շինեմ.

Արտոգ ծէգը ջրիդ չառած
Իմ սև դարդը քեզ կը բերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ
Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ
Կամար ունքից թուխ աչքերից
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:



* * *

Դարդուդ եմ, դարդաքաշ եմ
Սարի չափ դարդ կը քաշեմ,
Դարդըդ դիր դարտիս վրայ
Էն էլ ես կը քաշեմ:

Մօրից անից ձեռ քաշի
Սիրու խաթեր ձեռ քաշի
Ազից եարիս որ տարան
Չոր գլխուցս էլ ձեռ քաշի:

Դօխիկ ջան, ես ինչ անեմ
Կարօտդ եմ ես ինչ անեմ.
Ես կերթամ, սիրտս չի երթա
Դուն կերթաս ես ինչ անեմ:

Կեանքս գնաց յետ չի գայ
Հաւք էր թռաւ յետ չի գայ,
Մարդուս սիրտը որ կոտրաւ
Կեանքն էլ գնաց յետ չի գայ:



* *

Ընկերներս վաղ են մեռել
Ազիզ սրտերն հող են դառել.
Չոր ծառի պէս ես եմ կեցել
Ընկերներս հող են դառել:

Անզին մէրս ան մէջքը կոր
Անկուշտ հողին աչքն է քցեր.
Ազիզ մօրս կեանքն է հատեր
Չոր ծառի պէս ինչ եմ կեցեր:

Ծառս ծաղկած անբեր մնաց
Ծիյ ու ճուղիս գարնան չորցան.
Դարդի որդն էլ սիրտս է մաշեր
Չոր ծառի պէս ինչ եմ կեցեր:

Մի վռագի էյ մաշւած սիրտ,
Աշնան քամին հիմա կուգայ,
Ծառդ արմատով կառնի կերթայ.
Աշնան քամին հիմի կուգայ:



ԳՈՂ, ԿՍՏՈՒ

Ախ գող կատու քո երեսդ լինի սև
Քանի մէկ փրաս տաս իմ խեղճ ձագերսու
Հիմա եկել դէմս ես կանգնել դու կաղ դև.
Մոմոալով ման ես գալիս իրև կոյս:

Չուեր դրի ձագ հանեցի խեղդեցիր
Խեճղուկ փիւնիկ հաւիս ձագից գրկեցիր
Որտեղ մի բան տեսար յափշտակեցիր,
Լւացւեցար յետ քաշւեցար սուս ու փուս:

Քո աչքերըդ քու են չես ճանաչեր տէրըդ,
Ջրուելի գարշելի քո պիղծ պատկերդ,
Գող ու աւազակ էր անառակ մէրըդ.
Նա էլ քեղ պէս հարւած տուեց ձագերուս:

Վերեն ասի գող ես դու չար ու դաժան,
Աղ ու հացը չը ճանաչող կեղտոտ անպիտան,
Վաստ հորըդ ես քաշել գարշելի գազան
Յուսահատւած թողիր երգիչ Սիրաթուս:



* *

Մութ մույլ սևագոյն ամպի տակ ընկար
Լուսնեակի նման Խօջայ Ստեփան.
Ազատ շրջում էիր, վանդակը մտար,
Խեղճ տատրակի նման Խօջայ Ստեփան:

Դու Ջահուկ գիւղացի աշխոյժ անձնանէր,
Գործի մարդ ես հաւատարիմ անձանձիր,
Երեք ամիս ազգիդ սիրոյն բանտ նստեցիր,
Նահատակի նման Խօջայ Ստեփան:

Քո մի հատիկ զաւակիդ աչքը թաց թողիր,
Ընկերներիդ սրտում սուգ ու լաց թողիր,

Այրոզ, կիզող «Արեան Չայներ» բաց թողիր,
Վառ կրակի նման յօջ յ Ստեփան:

Ընկերութեան սոխակ խնջոյքի զարդ ես,
Ոյժըդ տեղը ինքըդ երիտասարդ ես,
Ընդհանրութեան համար պիտանի մարդ ես,
Քաջ մշակի նման յօջա Ստեփան:



ԸՆԿԵՐԻՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մռայլ խոնաւ տաճկի բանտում,
Վիրաւոր ընկերս է պառկած,
Հառաչանքը սիրտ է մաշում,
Վէրքերն անխնամք է թողած:

Կուրի դաշտից քեզի գերեց
Մեր դարևոր թշնամին,
Տմարդի պէս բանտը նետեց
Չխղճաց բո վէրքերին:

Ախ, խեղճ ընկեր հառաչանքներիդ,
Արձագանքը ինձ հասաւ,
Դարդս քիչ է էդ էր պակաս
Կեանքս ու հոգիս մաշուեցաւ:

Ես էլ քեզ պէս բանտարկւած եմ,
Սիրաս հազար վէրքերով,
Քաղան դահճի ձեռքն եմ մատնւեր,
Հառաչում եմ ցաւերով:

Քիչ էլ տանջւիր խեղճ Ուսուլ շան
Մեզ նոր գարուն կբացւի
Նոր գարունը մեր խեղճ ազգին,
Դարդին, ցաւին, վերջ կանի:



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԻՍՉԱԿԸ

Ազգդ զօրացնելու համար
Ապրիս շատ տարի աւազակ
Այլոց հանգցնելու համար,
Արի համբուրեմ աւազակ:

Չարթիր խղճութիւնըդ բաւ է
Քու արիւնդ թշնամուն ցաւ է
Ինչպէս ազգիդ համար լաւ է
Այնպէս գործիր աւազակ:

Սովածութիւնից նեղացիր,
Այդքան գործը կաշողացիր,
Ազգիդ օգուտ բան գողացիր,
Վարձքիդ համար աւազակ:

Որտեղ ունիս թշնամիներ,
Արիւնը խմէ միսը կեր,
Քեզպէս էլ քաջ կտրիչ ընկեր,
Ուրիշ էլ ճարիր աւազակ:

Ձեռքըդ չվերցնես սրէն,
 Մինչև վիզըդ չկտրեն
 Խորուածի պէս սրիդ վրէն
 Շարիր թշնամուդ աւագակ:

Դու ես քո ազգիդ մշակը,
 Պատրաստ է, թուր ու նիզակը,
 Միւթ քիւրդի թևի տակը
 Թող խաւարի կեանքն աւագակ:

Երբ դու, պատրաստել կը սիրես,
 Ձէնքըդ ազգիդ կը նուիրես,
 Հայրենիքիդ հողը տիրես,
 Սուրբ զինուոր բարի աւագակ:

Այս կատարէ սրով նետով,
 Հազիրուս սպանէ փայտով,
 Ազգս ազատէ տեսնեմ. յետոյ
 Թող մարի մուխս աւագակ:



* * *

Հրաշալի Տափի թաղ, որ կոչուում ես եարմուրկայ,
 Անտանելի հարւածի, ցաւի եղար ենթակայ,
 Տփխիսու սիրտն ու հոգին, առատրի մեծ շուկայ,
 Անգութ դաժան ձմեռը սև սուգ բերին քեզ վրայ:

Տխրահոչակ դեկտեմբեր ամսի քսաներկուսին,
 Կէս օրւանից քիչ անցած, համարեա ժամի մէկին,

Պայթուցիկ ձու գլորեց իժի ծնունդ սև հոգին,
 Վիրաւորեց չորս կազակ և մի անտէր երեխայ:

Տրաքւեց հրանիւթը, չը բաշեց շատ ժամանակ
 Անմիջապէս զօրքը եկաւ, ձիաւոր ու հետևակ.
 Հրածիգ, վաշտ, թնդանօթ, մի անագին գումարտակ,
 Գարձել է խեղճ եարմուրկան, մի տեսակ նոր Մանջուրիա:

Հայոց վանքի կալւածքը, զօրքով շրջապատեցին,
 Թնդանօթով, հրացանով, անդադար կրակեցին,
 Ասորոց թէյատունը, սկիզբը կրակեցին:

Մի անպիտան մեղք գործեց, շատ անմեղներ գոհեցան,
 Հարիւր մարդուց աւելի ի գուր տեղը փշացան,
 Որը անգութ գնդակով, որը կրակով մեռան,
 Ինչո՞ւ եղաւ այս բանը, հարցնող, քննող չկայ:

Զիւան մեծ գործի տէրը, մի օրում աղքատացաւ,
 Օր հացի կարօտ մնաց, ցաւալի, թշւառ եղաւ,
 Կէս միլլիօն արժեցող կալւածքը մոխիր դառաւ,
 Անբախտ Ներսիսեան դպրոց. դու արտասուէ, դու
 ողբայ:



* * *

Հազար իննը հարիւր, տխուր հինգ թւին,
 Դեկտեմբերի տասներեօթին լուր եկաւ,
 Չար մտաւ մէջները հային ու թուրքին,
 Գանձակի մէջ նոր կոտորած սկսաւ:

Մեր պարզ հօրիզոնը նորից մթնեց,
 Խաղաղած սրտերը վրդովեց, ցնցեց.
 Կովկասու հայերուն նոր հարած տւեց,
 Չախորդութեան չար շրջանը անցաւ:

Կազմակերպութիւնը իբրև օժանդակ,
 Հայոց կտրիճներից զինեց մի տասնեակ,
 Ամսի տասն ութին ուղարկեց Գանձակ,
 Խմբին ղեկավարող Բարսեղը եղաւ:

Տխուր մութ գիշեր էր ցաւալի վայրկեան.
 Տխուր երկինք. գետին դարձել էր լալկան,
 Փամբ տասներկուսին հասան կայարան
 Գանձակի մօտ երկաթուղին կանգ առաւ:

Կայարանից մինչև քաղաք շատ երկար,
 Տանջուեցին չը գիտնալով ճանապարհ,
 Ընկան ցեխ արտերը, ընկան սար ու քար,
 Առաջնորդող ծանօթ մարդ չը պատահաւ:

Չարչարուելով անվախ կտրիչները մեր,
 Լուս բացուեց հասան Գանձակ տասն ընկեր,
 Օգնութեան են եկել զինուած հայ քաջեր,
 Քաղաքում տարածուեց ցնծութեան համբաւ:

Գանձակի հայերը շատ ուրախացան,
 Սրանց համար տներուց դուրս թափուեցան,
 Առաջնորդարանում սարքեցին սեղան,
 Ճաշ տուին արբեցին, խումբն ուրախացաւ:

Թուրք խուժանի կողմից կէս օրուան մօտիկ,
 Հրացանաձգութիւն սկսուեց սաստիկ,

Դուրս թռաւ Բարսեղը վեհ քաջամարտիկ,
 Տղերք, դէսլ առնջ, գոռաց ձայն տուաւ:

Ափսոս մեր տղերքը վարժ չէին շիտակ,
 Դիրքերին անծանօթ գործին անտեղեակ,
 Ճանապարհ ցոյց տւող եղաւ մի համբակ,
 Դէպի այգիները քաջերին տարաւ:

Հանդիպեցին զինուած թիւրքաց մի խմբի,
 Հայոց կտրիճները բռնուան կռուի,
 Տասն էլ մահն անարգող, նման քաջ արժւի,
 Թուչող արագաշարժ, վագող սրարշաւ:

Բարսեղի մօտ Արտաշէսը Գալստեան,
 Կուռում էր անվեհէր առիւծի նման,
 Սարի-Բէկը Տէր-Սիւքասեանց անխափան,
 Նշանին խփում էր գնդակը շատ լաւ:

Վարդան Յարութիւնեան քաջ անմոռաց,
 Դարձել էր սարերու այծեամ սրբնթաց
 Տիգրան Սարգսեանը, ուղիղը ասած,
 Թուչում էր բազէի նման սրարշաւ:

Ալլցխացի Գրիգորը թանկագին,
 Տապալում էր գողեաթներ անագին,
 Տասն էլ անձնուրացներ զոհեր գլխովին,
 Ազգի համար իրանց միշտ զնող զրաւ:

Հայոց կտրիճները անսասան անվախ,
 Գնդակ թափում էին սաստիկ աջ ու ձախ,

Վախկոտ ոչխարի պէս թշնամին խարդախ,
Փախուստ տալով գետի այն կողմը անցաւ:

Թշնամու հետ մերոնք երկար կուեցան,
Ժամը տասներկուսը մինչև գիշերւան,
Փախցրին թշնամուն յաղթութիւն տարան,
Նոցա առաջնորդը երկիւղից փախաւ:

Հայ ու թուրք իրար դէմ ամուր գիրք բռնած
Ղազաղներ անում էր գնդակահալած,
Երեք տեսակ կրակի մէջ պաշարւած
Բարսեղը իւր խմբով խրատ նեղը ընկան,

Վիրաւորւած քաջ Բարսեղը անդադար,
Դարձեալ ընկերներին խրախոյս կուտար
Գրիգորն էր խմբապետին հաւասար,
Մեծ վերք ունէր ցոյց չէր տալիս վիշտ ու ցաւ:

Տէր Սահակեան Մկրտիչը, Տիգրանը,
Սարի-բէկը, բերին կուր վախճանը,
Երևում էր խաղաղութեան նշանը,
Թուրքը փախուստ տւեց լոյսը բացւեցաւ:

Ջիւան մեր քաջերը դուրս եկան յաղթող,
Վերադարձան ուրախ, պարգերեա, յաջող,
Հայի պատւի համար նահատակ լինող,
Հայոց կարիճները, շատ են, չեն սակաւ:



ԽՐԱԽՈՅՍ ՔԱՋԵՐԻՆ

Սիւնեաց աշխարհում կուր մղելով,
Մեր քաջ հերոսներ յաղթութեան յոյսով
Կարիճ, անվեհեր, վրէժով վառւած,
Թշնամուն տւին սաստիկ կոտորած.

Ելէք հայդուկներ, օգնութեան գնանք,
Մեր ընկերներին խրախոյս կարգանք...
Ազատ Սիւնիքի Վաչատի ձորում
Պարկած գերթ առիւծ՝ վերք առած սրտում,

Քաջ Ստեփանեանց պատանի Վահան,
Եւ կարիճ Զաքօ, ազգին զոհ եղան,
Դէհ, գնանք, ընկերներ, փունջեր պատրաստենք,
Դրանց շիրիմներ, վարդով զարդարենք...

Ո՛հ, չկան հանգիստ հայ դիակներին,
Մնացին նոքա թշնամու ձեռքին,
Դրանց ամեն մի կաթիլ արիւնի,
Փոխան պիտի թափենք արիւն սոսիսի:

Շուտ հասնենք, տղերք, քաջ զոհի տեղ,
Կարսիւր արիւնները ամփոփենք մէկ տեղ...
Միթէ՞ մենք չունինք Հայկ ու Արամին,
Անարատ արիւն մէջ մեր երակին...

Հերթը չէ, որ մեր աչքերի առաջ,
Արեամբ պսակւին հայ տղերք քաջ-քաջ,

Դէ՛հ, գնանք առաջ մենք անկեղծ սրտով,
Որ սուրբ նպատակ պսակելի շուտով:



ՍԱՆԴՐՈՒ ՄԱՀԸ.

Հայ-թուրքական կռիւը երբ սկսուեց,
Քունը դադրումը կտրուեց նրան,
Ամեն կողմից հայի հառաչանք լսեց;
Չափազանց գոգոուեց Սանդրոն Աւաքեան:

Բոլորովին թողեց իր գործը բանը,
Ուրազի տեղը վերցրեց հրացանը,
Նոր մարդ էր, նոր մտած կեանքի շրջանը
Նորաբոբոզ քսան և երեք տարեկան:

Քաջերի սերունդից մի նոր շառաւիղ,
Դաղեթից դուրս եկաւ անձնուէր ուղիղ,
Իսկապէս տապալող շատ մարդակերպ փիղ
Առիւծի կորիւն էր ընտիր հայկազեան:

Երբ որ գնաց խմբի մէջ մտաւ,
Համազասպի թև ու թիկունքը դառաւ,
Ինչպէս սարի այծեամ փախչող սրարշաւ,
Անվեհէր մարանչող բաղէի նման:

Թշնամու դէմ կանգնած Սանդրոն քաջագով
Շատերին կանէր գնդակախորով,

Քայց մի անգամ սրանք քսան հինգ հոգով,
Ապրաւանում մի մեծ կռուի բռնուած:

Թուրքերին նեղեցին սրանք սկզբից,
Գնդակներ թափեցին դիրքի վերևից,
Հետգհետէ կռուի ներքևի կզղմից,
Հաւաքուեցան թշնամիք շատ-շատացան:

Փախան ընկերները. չորսը մնացին,
Սանդրոն երեք քաջով երկար կռուեցին.
Ամենքը հինգ հարիւր փամփուշտ պարպեցին
Շատ թիւրք վիրաւորեց շատերն էլ մեռան:

Փամփուշտներ ամենին մէկ մէկ հատ մնաց,
Նրանց ձիաները յուսահատ յոգնած,
Փախչում էին: Ընկան արտը նոր ջրած
Հնար չեղաւ, փախչել չ'կարողացան:

Հասաւ վերջին բոպէն այսպէս վճռեցին.
Որ մեռնին՝ բայց թշնամու ձեռքը չնկնին,
Իրանց ձեռքով, իրանց կեանքին վերջ տուին,
Քաջերը ունեցան ցաւալի վախճան:

Սգացին բարեկամ և ծնողները,
Քոյր ու փեսայ և Օհաննէս աղաբերը,
Ամիր, Ասլան, Գէորգ մօտ ընկերները,
Պիտի յիշեն քաջ Սանդրոնի մշտական:

Չամալի միշտ բարձր է քաջերի յարգը,
Չահէլ ջիւան մեռան ստացան փառքը,

Նրանք դասւան նահատակների շարքը՝
Անուները կմնայ մինչև յաւիտեան:



ԳԱՐՆԻԿԻ ԵՐԳԸ

Ես խնդրում եմ տխուր մայրիկ,
Իմ մօտիցս հեռացիր,
Իմ վերքերիս մուք արիւնը
Արտասունքով լուացիր:

Երկու ազնիւ քաջ որդոցդ,
Վերջը դու չխնդացիր,
Մի լար մայրիկ. նպատակս,
Թերի թողած գնում եմ:

Վարժարանից ընկերներս.
Սումբ-խումբ ելած պիտի գան,
Գերեզմանիս քարի վերայ
Տխուր ձայնով պիտի լան:

Մեծ կենտրոնի հրամանով
Ազնիւ կերպով զինւում եմ
Իսլամական շար թշնամուն
Սոտի նման հնձում եմ:

Ես խնդրում եմ սուր-սուր զէնքս
Այլոց ձեռքին չթողնէք
Իմ ուխտածս կատարեցէք
Իմ գործերին հետևէք:

Խոնար պատմեմ իմ յանցանքս,
Նամակներով գրերով
Մի լար մայրիկ նպատակս,
Թերի թողած գնում եմ:



ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՒ

Մնաս բարև, իմ հայրենիք.
Իմ մանկութեան օրօրան,
Քեզ պաշտել եմ իմ վառ սրտով,
Եւ կպաշտեմ յաւիտեան:

Թէպէտ բախտը, խլում է ինձ,
Նուիրական քո գրկից,
Բայց երբէք նա չի ջնջել,
Սուրբ անունըդ իմ սրտից:

Ուր էլ լինիմ, ուր էլ ապրիմ,
Թէկուզ օտար երկրի մէջ,
Միրել եմ քեզ և այդ սէրն,
Կմնայ անխախտ և անշէջ:

Մնաս բարիաւ իմ հայրենիք,
Ինձ կեանք արև պարգևող,
Մնաս բարև... վերջին անգամ,
Բաժանւում են վերջնական:



ԱՆԹԻԻ ԴԱՐԵՐ ԹԱՓԱՌԵՑԻՆՔ.

Անթիւ դարեր թափառեցինք,
Գարձեալ օտար հող մնացինք,
Մեր անուշիկ հայաստանէն,
Հեռու-հեռու բնակեցինք:

Հայ անունը ամենքի մօտ,
Գարձել է լոկ չնչին մի խօսք,
Հայեր-հայեր մտածեցէք.
Ձեր խոր քնից ըսթափուեցէք:

Սասնա քաջեր ձեր գլուխներ
Բարձրացրէք գերեզմանից,
Տեսէք թէ ձեր երջանիկ ազգը,
Թէ ինչ վիճակի է հասել:



ԱՆԽՂՃՕՐԷՆ

Անխղճօրէն մեզ դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ.
Եղբայրս ինձնից դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Իմ խնդրիս չեն դնում ականջ,
Ասում են սուտ է քո պահանջ,

Այս հողերը սլան էր առաջ,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը,
Որ պապըս լծած արօրը,
Ցանում էր ձեր դաշտ ու ձորը,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,
Բայց ստում են ուղղութիւնը,
Գոնէ նրանց պատմութիւնը,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Հիմայ ձեզ մնաց ամեն բան,
Պէտք է դուք գաք վկայութեան,
Ռ՞ւմնով էք կոչւում Հայաստան,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Պայծառիս վիրաւորել են
Հողերուն հաւասարեր են,
Մեր կայքը օտարք տիրեր են,
Խօսիք Հայաստանի լեռներ:



ՍԻՐՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն,
Ինչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,
Գիտես որ մենք միշտ աչքներս յառած,
Քեզ ենք սպասում ամեն մի գարուն:

Կլուխս ծռած խեղճ ու հեղ,
 Աղաչում եմ ահա քեզ,
 Եկել ես հայրենիքից,
 Ինչ աւետիս բերիր մեզ,
 Եկել ես հիւր ասա մէկ լուր,
 Մի սպասէ գուր,
 Լեզուվըդ սուր աւետիս տուր,
 Մեզ ուրախացուր:

Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,
 Դու հայրենիքից աստ եկած թռչնակ,
 Ասա ինչպէս է իմ հայրենի տունը,
 Խօսիր ինձ հետ ազատ համարձակ:

Ասա մի բան իմանամ,
 Որ քեզանից գոհանամ,
 Ուրախացուր սիրտըս իմ,
 Տարակուսած չմնամ,
 Դու սլացար սարէ ի սար,
 Մինչ այստեղ հասար,
 Դու ինձ համար բարով եկար,
 Ասա մի խաղար:



ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Թողել եմ վաթանս ընկել դարբէզար,
 Խմածս արտասունք է կերածս զահրումար

Մահւան մկրտար կուզէ կտրել կեանքիս լար,
 Կուունկ մեր վաթանից ինչ լուր բերիր ինձ:

Մի տեղում թողել եմ մայր, քոյր եղբայրներ
 Մի տեղում ամուսին և դառ զաւակներ,
 Սեպան իմ կեանքի անցեալ փայլ օրեր,
 Կուունկ մեր վաթանից ինչ լուր բերիր ինձ:

Հիւսիսի Խորքերում ան վախ եմ կանչում,
 Արիւն արտասուքներով Աստղիկըս եմ յիշում,
 Աստղէր արև լուսնեակ նայել եմ ուզում,
 Կուունկ մեր վաթանից ինչ լուր բերիր ինձ:

Կուունկ քեզի մատաղ շատ բարկներս տար
 Ասիր նրանց կարօտը չի տալ ինձ դադար
 Թէ չմեռնեմ կտեսնեմ նորանց մինչ նոր դար
 Կուունկ մեր վաթանից ինչ լուր բերիր ինձ:

Կուունկ ես Կուկունեան եմ հոգիս վիրաւոր,
 Ցաւերս մէկ չէ հազար չէ այլ բիւրաւոր,
 Կօզնէ ինձ սուրբ Սարգիս զօրեղ ձիաւոր,
 Կուունկ մեր վաթանից ինչ լուր բերիր ինձ:

Շղթայակապ բանտում նստած կողբամ,
 Սև է տարին ամիս շաբաթ օր իսկ ժամ
 Ազատութեան դուռը փակէ առաջիս,
 Մտիկ տւող չկայ ցաւ ու հառաչիս:

Անգութ բախտի երկաթէ ձեռքն ինձ ճնշեց,
 Սրտիս վերայ ծանրանալով շունչս կտրեց

Անընկճելի պողպատ կամքս փշրեց
Բախտի դէմը գլուխ խոնարհ յաղթուեց:

Հեռացեյ եմ հայր մայր եղբայր քոյրերից,
Ձաւակներիցս սրտիս մօտիկ ամուսնից
Որոնց համար վառ արիւնս ցամքեց,
Նորանց սիրոյն կեանքնս հովը խորտակեց:

Մռայլ երկլինք մռայլ բնութիւն մռայլ բանտ,
Անդթութեան ձեռին իմ կեանքն է պատանդ,
Ձուրկ արևից զուրկ աստղերից, զուրկ լուսնից
Ձուրկ բնութեան ազատ օդը ծծելուց:

Ինձ կասեն, թող քո պաշտելի հայրենիք,
Գնայ Հիւսիս այդ է ճակատիդ սև կնիք,
Այնտեղ պէտք է թաղես օտար հողի տակ
Օտար արծիւը քրքրելու է քո դիակը:

Կըզայ փրկիչ ազատիչ սուրբ հրեշտակ,
Ձի թողնիլ ինձ բռնութեան լծի տակ,
Նա կարբէ ճակատիս քսուած անարդ մուր
Թոյլ չի տալ որ քամեմ մահւան դառն մրուր:



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հագար իննը հարիւր չորս թւականին,
Տաւրոսի լեռներում յայտնուեց նոր կրակ,
Թնդացին լեռները մայր Հայաստանին,
Փայլեց հերոսութեան կարմիր դրօշակ:

Բանտից, ու կապանքից ազատւած ոմանք,
Անւանի Մասնոյ մէջ որոնեցին կեանք,
Տեղական քաջերից գանելով յարգանք,
Հանգստանալ ուզեցին մէկ ժամանակ:

Հայ քաջերը աւելացան օր, օրի,
Նրանց թիւը հասաւ մինչև հարիւրի,
Ամենքնէլ միասիրտ և մի հողի,
Ձինավարժութեան մէջ հմուտ ընդունակ:

Ձինւած, ու պատրաստւած ողջ ժրաջան,
Ունէին հեռաձիգ բանու հրացան,
Երգում արին Մասնցոց հետ միացան,
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ:

Բազմադէտ Անդրանիկը բազմաշան,
Եղաւ կառավարիչ հայ զօրքին անան
Չորս գլխաւոր քաջեր ընտրեց թիկնապան,
Մուրատ, Հրայր, Վահան, և Սեպուհ Արշակ:

Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտև,
Գործը չմեծացաւ անցկացաւ թեթև,
Ինքնապաշտպանութեան տուին ձև,
Թուրքերի մէջ բարձրացաւ, քիչ աղաղակ:

Այս լուրը Սուլթանի ականջին հասաւ,
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ,
Սպառնալով այսպէս հրաման տուաւ,
Խրատիր հայերիդ ուղարկիր կոնդակ:

Պատրիարքը պատասխանեց խոր հոգուց,
Ասաւ ես ոչինչ եմ այսօր թէ էքուց,
Հեղինակութիւնս ընկել է վաղուց,
Քաղցր խօսքս նրանց թւում է ներհակ:

Սուլթանը այլայլեց տխուր սրտմտած,
Տակն ու վրայ եղաւ սաստիկ ցաւ զգաց,
Իւր նախարաներուն ասաւ բարկացած,
Բիդլիզի վալուն տալ հրովարտակ:

Վալին Տիրոջ հրովարտակը կարդաց,
Հայերուն կոտորել հասկացաւ զգաց,
Առաքելոց վանքի վանահօրն ասաց,
Աշի գնայ Սասուն եղիր պատւիրակ:

Գնա խրատէ քու հայ ժողովրդին,
Վնաս չհասցնեն, թուրքին, ու քրդին
Ասա չհետևեն այլոց խորհրդին,
Ողջ Սասունը կղարձնեմ աւերակ:

Վարդապետը գնաց դատարկ հետ դարձաւ,
Նրա քարոզներուն մի լսող չեղաւ,
Աճապարեց վալին շատ զօրք մօտ արաւ,
Խառն ի խուռն քիւրդ ու խուժան ելուզակ:

Մանր խօշոր թնդանօթներ մօտ քսան,
Ռազմամթերքը առատ բաւական,
Թուրքաց զօրքի թիւը կլինէր այսքան,
Քսան հազար ձիաւոր ու հետևակ,

Առիժ Գէորգ շաւուշ, կայծակ ու վահան,
Աւետիսը խմբով հասան օդնութեան,
Կանգնեցին թուրք զօրքի դէմը յանդիման,
Հայոց կտրիճները անվախ համարձակ:

Վալին ասաց Անդրանիկին, ո՛վ տխմար,
Անփորձ ճնճողկի պէս թակարդն ընկար,
Զգիտես ո՛ւմ դէմ ասպարէզ մտար,
Ես բազէ եմ դու մի չնչին կաշաղակ:

Անդրանիկն ասաւ, հոտած խելքի ծով,
Խօսքերդ քո գլխիդ կբերեմ խռով,
Բուրտդ բարեբարը կհանեմ շուտով,
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ:

Վալին ասաւ, Ազրախն եմ ես հիմայ,
Իսկապէս քո հոգիդ առնելու եկայ,
Ո՞ւմ վրայ ես դրել յոյսդ ինձ ասայ,
Ո՛վ դու անբարտաւան ըմբոստ աւազակ:

Անդրանիկն ասաւ շատ բարձրամիտ ես,
Գիշակեր բորենի մէկ պարագիտ ես,
Անգէն խեղճ հայերին կոտորել գիտես,
Քաջերու մօտ դու կղառնաս նապաստակ:

Վալին ասաւ, արի անձնատուր եղիր,
Լսիր թագաւորիդ գէնքերդ վար դիր,
Ողջիդ կղարձնեմ ես հող ու մոխիր,
Մէկ ամիս անդադար կարձակեմ գնդակ:

Անդրանիկն ասաւ լսիր ով փաշայ,
 Մեզ համար մեռնել կայ յանձնուել չկայ,
 Արա՛, մի խնայիր ձեռքէդ ինչ կուգայ,
 Շատ ենք լսել, տեսել մենք քամու տապրակ:

Վալին ատաւ, թող գոյ ամբողջ աշխարհը,
 Չի կտրի օսմանեան աղեղի լարը,
 Փոքրիկ ուժով կուգես շրջել մեծ սարը,
 Գլխիցդ անցել ես խեղճ հայի դաւակ:

Անդրանիկն ասաւ, Գաւթի ձժերը,
 Միթէ դու չես լսել Սասնայ գժերը,
 Շատ սարեր են շրջել փոքրիկ ուժեր,
 Բռնակալին Ասուած ինքն է հակառակ:

Վալին տեսաւ չեն խոնարհվում հայերը,
 Իրենք անվախ և հատու են գէքերը,
 Խրախուսեց ատաջ մղեց քրդերը,
 Բայց հայերուց կերան կատաղի ապտակ:

Չորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,
 Դղրդաց սար ու ձոր գոռաց թունդ ելաւ,
 Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ,
 Հայերը ունեցան քսան նահատակ:

Վալին փախաւ գօրքն էլ իրան հետևեց,
 Անարգւած անպատիւ գէպի Մուշ չւեց,
 Իջաւ դաշտը անգէն հայոց ջարդ տւեց,
 Տեսաւ Ստանեցոց հետ չի լինի կատակ:

Հայերն էլ դիրքերը թողին հեռացան,
 Որ թուրքերը անգէն հայոց ջարդ չտան,
 Յրւեցին ամենը մի տեղ սահւեցան,
 Մինչև որ կցագէ մի նոր արեգակ:

Հմուտ կառավարիչ խելահաս վարպետ,
 Մահից, ու կրակից նա չկեցաւ յետ,
 Կեցցէ Անդրանիկ ընկերներու հետ,
 Բոլոր աշխարհի մէջ ստացան հուշակ:

Չիւան ուժեղի մօտ եթէ խեղճ լինի,
 Տկարին օգնելը դժւար կը թւի,
 Հայ որ Հայոց թեղ էլ կը նուի,
 Անձրև չգայ քամին փչէ աջողակ:



ՄԵՐ ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆԸ

Ախ մեր խմած ջուրը, մեր կերած հացը,
 Գառնացելեն նրանց մէջը համ չկայ,
 Մեզ բաժին է ընկել սուգը և լացը,
 Ուրախ շաբաթ, ուրախ օր, ու ժամ չկայ:

Ինչու չեղանք արիւնարբու աւազակ,
 Գոռոց գոբող վրեժառու ելուզակ,
 Ծով աշխարհում մ'նացել ենք միայնակ
 Մեզ համար սրտակից շարեկամ չկայ

Մարդ գիտենայ ինչ ենք մարդկութեան
 Որ վարւում է մեզ հետ այսպէս չար դաժան
 Որ չի անում արդար դատ ու դատաստան
 Կամ քնելէ մեր Աստուած կամ չկայ:

Ջիւան մեր արևը մութ ամպի տակ է,
 Այցելութեան դուռը մեզ համա փակ է,
 Հայը առանձնացած թռչնոց խնրակ է,
 Մօտիկ արնակից մէկ մարդ չկայ:



ԲԱՆՇԻԻ ԵՒ ԽԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բարով եկար դու քաջ Բախշի
 Ազգիդ համար դու զոհ եղար
 Աւեր դառնար չայլի-լարը
 Որ զնացիր էլ հետ չէկար:

Իմ ույժերս սպառուեցան
 Օգնականերըս հեռացան
 Դէ կուի դու քաջ Խան
 Ջարդենք վերջ տանք թշնամուն:

Աստուած սիրես դու Ալէկսան
 Վերցրու դու իմ հրացան
 Գոնէ դու էլ իմ եղբորս
 Արեան վրեժս թող առնէ շուտով:

Ինձնից լուր տարէք Համոյին
 Որ լաւ պահէ իմ ընտանին
 Հիւանդ թողի ու զնացի
 Արեան դաշտում ես զօհեցի:

Ես Խանն եմ Բալասանեան
 Ազգիս համար ես զօհ եղայ
 Իմ ընկերներ ինձ օգնեցէք
 Արեան դաշտից հեռացրէք:

Դէ մնաք բարեաւ եղբայրներ
 Թշնամուցը վրէժ առէք
 Մեր կեանքը ձեզ ենք նուիրել
 Մեր արիւնը դուր չը կորցնենք:



Յ Ո Յ Ս Ե Ր

Հայի լաւ օրը մօտեցաւ, էլ մեզ բաժին լաց չկայ,
 Լացն ու թացը կանանց բանն է, տղամարդին լաց չկայ,
 Քաջի համար ի՞նչ լաց ինչ բան, դուրս է գալիս ասպարէզ,
 Թշնամու գէժ կոբիւ տալով, փուխի գետին լաց չկայ:

Ահա Մասունի քաջերը ազատ-անվախ կուեցին,
 Պատերազմի դաշտի վերայ քաջ մեռնողին լաց չկայ,
 Նրանք մեռան նահատակւան, բայց կենդանի անմահ են,
 Բոլոր Եւրոպան դրդաց, չէ առանձին լաց չկայ:

Գազան քրդին, անգուլթ տաճկին, լաց ու սուզը ինչ կանէ,
 Նրանց գէժը, պէտք է սուր-թուր, զնդակ ուժգին լաց չկայ,

Արշալոյսը արդէն ծագեց, շուտ կրբացւի առաւօտ,
Ջամալ կլլի հայոց ազգը ազատ, կրկին լաց չկայ:



ԴԺԲԱԽԴ ՀԱՅԵՐ

(Գանձակու աղետ)

Հայեր ինչ էր ձեր ցաւերը,
Աշխարհ լսեց սև համբաւը,
Ուրբաթ ժամի 11-ին:
Եղաւ ձեր անցքերը:

Գանձակն էր նոր դարդարւած:
Արտասուում է նա սուգ ու լաց
Եկեղեցում երգուեցին,
Անօրենները մեզ խաբեցին:

Գուբերնատօր Տակայշլիլին,
Կաշառք կերաւ թուրքերից.
Խեղճ հայերին կոտորեցին,
Դո: քան բազար թալանեցին

Հայերը իրանց գործին,
Յանկարծ վրայ թափւեցին,
Մեծ ու փոքր կոտորեցին,
Դուքան բազար աւերեցին:

Երբ հրացաններ արձակեցին,
Հայրը իւր որդուն չտեսին.
Նոթ ածեցին ու վառեցին,
Խեղճ դիակին խորովեցին:

Չայն են տալիս ամեն կողմից,
Եկեք քաշեք մեր դիակից
Թէ ձեր Աստուած կսիրեք
Թուրքի ձեռին մեզ չթողեք:

Գիշերվայ ժամը 9-ին,
Հայերը կուի սկսեցին
Բաղմանլարի տաճիկիերին
Կոտորեցին աւերեցին:

Համբօն իւր քաջ ընկերներով,
Բաղմանլարին կրակեցին.
Թուրքերին մեծ ջարդ տալով
Մեզնից չորս հոգի գօհվեցան:

Թուրքեր մտան ուռոյ տալով,
Բայց հետ փախան վայ կանչելով,
Համազասպը քաջ ջարդ տալով,
Քշեց բոլորին հեռացնելով:



ՆՒՔԻ ՀԵՐՈՍԻՆ

Հաճի Գէորգ արիւծի ծագ,
Զինւորաց մէջ նա արեգակ,
Վերցնենք նրանից օրինակ,
Զը մոռանանք իւր յիշատակ:

Նա սիրում էր գէնք ու զրան,
Քաջ կուռում էր որպէս հսկայ
Անխոնջ գործել միշտ աներկբայ
տարածայնուեց մինչ Եւրոպա

Այժմ նա գործում է յոյսով
Կուգէ վեռագառնալ յոյսով
Փամփուշտ հրացան ու սուրով
Ատրճանակ սուր դաշոյնով

Հայութեան մէջ որպէս ծաղիկ
Զինվորաց մէջ էր մի հատիկ
Նրան սիրում էր Անգրանիկ
Գիտէ երգել միշտ քաղցրիկ

Սամնոյ առիւծ վէճ ամեհի
Կռուաւ Սամսում նա կատաղի
Զուրը ճեղքեց մէջ Շաախի
Անուն ստացաւ յաղթողի:

Ս.



1904 Թ. ՍԱՍՈՒՆՈՒՄ ԸՆԿԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Լերան լանջին խոր ներհում են. ֆէտայներ յաւիտե ան
Ազատ ննջել միշտ սիրում են. գաւակները բնութեան

Արիք գնանք հայ աղջիկներ հասնենք այնտեղ Սեմ լեռն
Մեզի պաշտպան ճանֆիղաներ մեզի համար քուն մտան

Հասնենք քաջաց սուրբ գերեզման թափենք արցունք աչերից
Մեր հայրենեաց հողին պաշտպան գրկւեցանք քաջերից

Ահա հասանք քաղէ ծաղիկ նաև երգենք միասին
Բոլորելով պարենք քաղցրիկ յարգանք նրանց սուրբ շիրմին

Հիւսենք պսակ իրանց գլխին վարդ մանուշակ միխակից
Երգուենք նրանց յիշատակին էլ չի վախենանք տաճկից

Մեզի համար զօճ գնացին դաշնակցութեան վեճ քաջեր
Կողբ են տուած լեռան լաջին ազատութեան փրկիչներ:
ՍԵՊՈՒՀ



ԿՈՉ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՍԵՐԴԱՅ

Վրէժ են գոչում անմեղ արիւններ,
Անհոգ մնալը քեզ չի վայելեր
Հասիր օգնութեան այն հերօսներին,
Որոնք պաշտպան են մեր որբիկներին:

Աղաչում եմ քեզ լացիր այնտեղ,
 Այնտեղ ուր կոտորում են շատ անմեղ
 Ազատիր նրանց քո արեան գնով
 Որ ես քեզանից չը մնամ խռով:

Ղուրբան կը լինեմ քեզ այն ժամանակ
 Յաղթական տարած երբ գրէս նամակ
 Անա այն ատեն կասեմ քեզի մարդ
 Որ կը փարատես իմ ցաւ ու վիշտ դարդ

Օրեր ամիսներ և շատ տարիներ
 Քեզ պիտի օրհնեն հազար բերաններ
 Կամ փրկիր ազգըդ կամ ընտրիր քեզ մահ
 Որպէսզի մնաս յաւիտեան անմահ

S. Պ.



ՔԱՅԼԵՐԳ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Դատէ մեր դատը գազան թուրքի դէմ
 Մինչ չը զիջանի քաջ հայերիս դէմ
 Ինչ կարող է վանդակից ազատուած
 Առիւծի յառաջ կանգնել դէմ առ դէմ

Ազատ լեռների կօրիւնի նման
 Կանգնել ենք թուրքաց դէմը յանդիման
 Ինչքան ուր կուզէ թող վառէ վարօտ
 Չի կարող անել մեզի ոչ մի բան

Շատ քուրդ ու տաճիկ մեզ դէմ միացան
 Քանիցս անգամ եղան ցիր ու ցան
 Դաշնակցութեան դրօշակի անից
 Չեն կարող բռնել ոչ սուր, ոչ հրացան:

Նա թող սպասէ՝ ձմեռ թէ գարուն
 Ինչ պիտի անէ. Սասնոյ սարերուն
 Գնա դէպ հարաւ քո պաշտած վայրը
 Շահ չի բերէ քեզ քո թափած արիւն

Անդրանիկ ունենք մենք քաջ խմբապետ
 Դու լաւ ճանաչիր թուրք սպարապետ
 Անառիկ ամբողջ մեր գլխի վերև
 Կանգնել է մեզ համար սուրբ կարապետ

Կայծակի նման տղերք ձախ ու աջ
 Զարնելով տանենք դրօշակն յառաջ
 Զէնքերիս ձայնից թող լեռներ գոռայ
 Յաղթութիւն է մերն, մերն է սուրայ:

S. Պ.



Բ Լ Բ Ո Ի Լ

Գնա բլբուլ մեր աշխարհից էլ դու այստեղ մի երգիր
 Մեր օրը սև մեր կեանքը ցաւ, էլ այս երկրում մի երգիր:

Տանջւած սիրտը անուշիկ երգից քրքրվում է խորանում:
 Սրտի վիշտը քո երգերից փրփրում է լեռնանում:

Գնա բլբուլ մեր աշխարհից զնա երգիր այլ երկրում
Ասա այնտեղ որ մեր վարդից արեան թարմ հոտ է բուրում

Որ ողբաձայն մրմնջացող վտակների հոսանք են
Միանում են արեան շիթեր առաջ շարժում մոլեգին

Որ ծագկազարթ հովիտներից մահւան ցուրտ հոտ է վշում
Որ մեր երկրում կանաչ դաշտերն իսկոյն կարմիր են ներկ-
ում:

Գնա պատմիր որ դու տեսար այրիացած մի երկիր
Մարեր ձորեր կարմիր հագած արիւնագարդ մի երկիր
Ախ ջան բլբուլ էլ մի կանգնիր զնա պատմիր աշխարհին
Մեր ցաւ ու հոգան վիշտն ու թախից մեր օրերը դառնազին
ԺԻՐԱՅՐ.



* *

Հնչակեան գինւոր ուժգին համարձակ
Շողացուր միշտ սուր սուլեցուր զնդակ
Առանց տասնման անվեհեր թափով
Դիմիր ու դիմիր զէպ վէհ նպատակ

Նուիրիր կեանքդ քո եղբայրներին
Ձօհ բեր թշնամուտ քո կտրուկ սուրին
Հակառակորդից դու մի երկնչիր
Դեղ դարման եղիր արնոտ վերքերին:

Չարութեան ոգու թոյնը սպանել
Թող հեռու կենա սրտիցդ ով կտրիչ

Իբրև դրօշիակ հարազատ պաշտպան
Ատիր միշտ ոխը քենը քայքայիչ

Անխարդախ ոգով միշտ յառաջ զնա
Բռնակալ ուժը ջնջելու ջանա
Յեղափոխութեան թշնամու հանդէպ
Եղիր անողորմ անգութ անխնայ:

Կտրիչ Հնչակեան ուժգին համարձակ
Շողացուր միշտ սուր սուլիցուր զնդակ
Յեղափոխութեան սրբազան դաշտում
Միայն այդ լինի քո վէհ նպատակ:

Վ. Տ.



	Երես
1. Խանասորի մարտը (1897 թ.)	5.
2. Երգել կուզէի	6.
3. Ընկերներիս	»
4. Պետօի յիշատակին	7.
5. Քայլենք	8.
6. Հայդուկի նշանածի երգը	»
7. Հայդուկի երգերից	11.
8. Կռուեցէք տղերք	16.
9. Գուրգենի անմահ յիշատակին	18.
10. Աւետիք Մայլեանի յիշատակին	19.
11. Հայդուկի երգերից	20.
12. Թող փչէ քամին	21.
13. Կորկոտեանի երգը	22.
14. Չայն տուր ով ֆիդայ	23.
15. Չինւած պատրաստուած	24.
16. Ազատութեան հրակէր	25.
17. Հայդուկի երգերից	26.
18. Երգ քաջարի հայդուկի	27.
19. Հայդուկի երգը	28.
20. Անդրանիկին	30.
21. Թումանեանի յիշատակին	32.
22. Աւգալի յիշատակին	33.
23. Հայդուկի երգերից	35.
24. Որսկան Ախպէր	36.

25. Սերովբ փաշի երգը	37.
26. Գուրգենի երգը	38.
27. Բաւէ եղբարք	39.
28. Կողոպտուած եկեղեցի	41.
29. Շանթ խմբի յիշատակին	44.
30. Հայդուկի վերջին ուխտը	46.
31. Խանասորի կռոււմը ընկածների յիշատակին	48.
32. Գրիգոր Մանուկեանի յիշատակին	50.
33. Կռուսկ Հայաստանի	52.
34. Հայդուկի երգերից	53.
35. Մշեցու մօր աղաչանքը	55.
36. Հերոսներին	58.
37. Յիշատակ 1897 յուլիսի 25-ի արշաւանքին	59.
38. Նւէր	63.
39. Դաւաճան մարդուն	65.
40. Սերովբի անմահ յիշատակին	66.
41. Հայդուկի երգերից	67.
42. Հայդուկները Վանայ ծովի վերայ	69.
43. Սերովբ փաշի յիշատակին	71.
44. Դերոսեանի յիշատակին	73.
45. Հայդուկի երգերից	»
46. Երգ ազգի	74.
47. Սերեմճեանի յիշատակին	76.
48. Երգ Աշոտ Թաթուլի	77.
49. Երգ Ֆիդայի	78.
50. Քաջ Անդրանիկին	79.
51. Դաշնակցականների մարշը	80.
52. Որսորդի խմբի յիշատակին	81.
53. Խանի և Մուրաաի երգը	83.

54. Տուրբախի երգը	84.
55. Երգ Կարնեցի Գարեգնի	85.
56. Սասունցիք	86.
57. Հայկական մարշ	87.
58. Դէպի հայրենիք	88.
59. Թող երգէ բլբուլ	90.
60. Հայդուկի երգերից	»
61. Հայդուկի երգը	92.
62. Մուշեղի երգը	»
63. Թաշ	93.
64. Թիֆլիզի երգը	94.
65. Խանի երգը	96.
66. Կորկոտեանի երգը	99.
67. Մուրասի երգը	101.
68. Երգ	102.
69. Երգ	103.
70. Նաւրուզի երգը	104.
71. Երգ	105.
72. Երգ	»
73. Երգ	106.
74. Երգ	107.
75. Դու գո՞վ խնդրես	108.
76. Երազ	109.
77. Պանդուխտի երգը	110.
78. Երգ	»
79. Մայրիկիս	111.
80. Երգ	113.
81. Երգ	114.
82. Շուշիի երգը	115.

83. Երգ	116.
84. Աքսորականի երգը	117.
85. Գէորդ Չաւուշի երգը	119.
86. Երգ Ալադեազի	120.
87. Երգ Սոխակի	121.
88. Բագուիի երգը	124.
89. Չէլթունի երգը	125.
90. Մշեցու երգը	126.
91. Սերովբի երգը	127.
92. Մուշեղի երգը	128.
93. Հայրենիք	130.
94. Համագասպի երգը	131.
95. Ուխտիւր (նւէր իմ քոյր Ս-ին)	132.
96. Մշեցու Գանգատը	136.
97. Երեք ձայն	138.
98. Իրաւունք	»
99. Տիբէթ	139.
100. Երգ Արամ Արամեանցի	142.
101. Միհրանի երգը	145.
102. Ղաղախեցի հայ աղջիկը	146.
103. Տաճկահայաստան	148.
104. Մօրս վերջին համբոյրը	150.
105. Անիրաւ ձկնորսը	151.
106. Գող կատու	154.
107. Ընկերիս յիշատակին	156.
108. Բարոյական աւազակը	157.
109. Խրախոյս քաջերին	163.
110. Սանգրօի մահը	164.
111. Գարնիկի երգը	166.

112. Վերջին բարև	167.
113. Անխղճօրէն	168.
114. Սիրուն ծիծեռնակ	169.
115. Կուկունեանի երգը	170.
116. Պատմական	172.
117. Մեր այժմէութիւնը	177.
118. Բախշիի և Սանի յիշատակին	178.
119. Յոյսեր	179.
120. Դժբաղդ հայեր	180.
121. Նւէր հերոսին	182.
122. Սասունում ընկած ընկերներին	183.
123. Կոչ հայ երիտասարդաց	>
124. Քայերզ դաշնակցութեան	184.
125. Բլբուլ	185.




Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Աչքի ընկնող սխալներ

Սխալ	ուղիղ	երես
Տեղ	գիւղ	38.
1849	1899	66.
Սակ	սարէ	72.
Միջաջ	միջազ	84.
Դակուրուբալա	դաշկուրուբաշա	73.
Վաչադի	վալադի	163.
յայտնւեց	ժայթքեց	172.





ԱՅԼ

ՅՄԼ

«Ազգային գրադարան»



NL0389507

3-4771